




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12383

իշխան Կարգալ
իշխան պատրաստեց
եւ պէտք ունի

028

7-50

028
7-50

06 JUN 2009

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ

Ի Ն Չ Պ Ե Ս

ՊԱՏՐԱՍՏԿԵԼ ՅԵՎ ԶԵԿՈՒՑԵԼ

ԿՈՒՍՋՐԱՏ 1932

12383

028
9-50

Հ. Ս. Խ. Հ. ԿՈՄԶԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՍԵԿՏՈՐ

1008
38361


ԻՆԶՊԵՍ ԿԱՐԴԱԼ

ԻՆԶՊԵՍ

ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՅԵՎ ԶԵԿՈՒՑԵԼ

Կուսակցի յեղ հեռակա ուսանողությամբ
խմբագրագրական միությունից ձեռնարկ

Կազմից Հովհ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



Հ. Ս. Խ. Հ. ԿՈՄԶԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՍԵԿՏՈՐ

1 9 3 2

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գիրքը կազմված է մտավոր աշխատանքի մեթոդների մասին հրատարակված միջանի ուսուցիչների աշխատությունների հիմնական նյութերի միացումից:

Մեր նպատակն է յեղել մեթոդական աշխատի մի ձեռնարկ տալ ինքնազարգացմամբ պարապող մեր բանվորներին, բատրակներին և կոլխոզնիկներին, նույնպես և կուս ու ԼԿՅԵՄ ուսուցման ցանցի սովորողներին, վոր նրանց գործնական ոգնութուն ցույց տա մարքս-լենինյան կրթության ասպարիզում:

Պարզ է, վոր մասսայական ընթերցանության համար կազմված գիրքը պիտի լիներ մատչելի, առավելապես գործնական բնույթի:

Մյուս կողմից մենք աշխատել ենք ուսուցիչների փոխադրել աշխատի նյութեր, վոր տալիս են ընդհանուր խնդիրները, քննադատական մոտեցում ունենդեպի բաղմամբի և բազմապիսի, յերբեմն և սխալ ու հակասական մեթոդական առաջարկները:

Այս գրքի հիմնական մասը փոխադրված է Բ. Նեյմանի «Գրքի վրա աշխատելու մեթոդիկա»-ից, վորը քննադատական-գրախոսական մի աշխատութուն է և տալիս է մտավոր աշխատանքների մեթոդների մա-

սին յեղած բազմաթիվ գրքերի ու նրանց առաջարկ-
ների քննադատութիւնը: Մյուս գրքերը, վորոնցից
լրացուցիչ նյութեր ենք վերցրել՝ Վ. Ռյաբելսկու
«Մտավոր աշխատանքի առողջապահութիւնն» եւ, Լյա-
դովի խմբ. «Ինչպես աշխատել գրքի վրա» եւ մեր կազ-
մած «Ինչպես կարդալ, ինչպես զեկուցել» գրքերն են:

ԿԱԶՄՈՂ.

I. ԸՆԹԵՐՑԱՆՈՒՅՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ինչպէս եւ ընթերցանութեան նպատակը:

Յուրաքանչյուր ինքնագարգացմամբ պարապողի
համար ամենից առաջ պարզ պիտի լինի ալս հիմ-
նական հարցը: Մինչև լավ չպարզենք, չգիտակցենք
ընթերցանութեան նպատակը, անհնարին եւ ըմբռնել
նրա մեթոդները:

Մեթոդիստները տեսակետները, ընթերցանութեան
նպատակների մասին, կարելի է բաժանել լերեք
մասի:

ա) Վճռանք պնդում են, վոր ընթերցանութեան
նպատակն է. «ընդլայնել իր աշխարհահայացքը, դուրս
մղել նախադաշարումները, ավելի ու ավելի կատարե-
լագործել անհատականութիւնը»:

Հայտնի քննադատ Բրանդեսի ալս միտքն արտա-
հայտում եւ բոլոր նրանց տեսակետները, ովքեր կար-
ծում են, վոր ընթերցանութիւնը մարդու աշխարհա-
հայացքը «մշակելու, մտավոր հորիզոնը ընդլայնելու»,
կլանքն ըմբռնելու համար եւ:

Ուշադիր կարդացեք, կհամոզվեք, վոր բուրժուական
քննադատի տեսակետը — զուտ ինդիվիդուալիստական
եյութիւնն ունի: Այստեղ վոչ մի խոսք չկա հասարա-
կական աշխատանքների համար պատրաստվելու, ըն-
թերցանութեան միջոցով վերադիմելու՝ սոցիալիզմի

կառուցման համար: Ընթերցանության միակ նպատակը նեղ, անհատապաշտական ձգտումն է, «իր անհատականությունը կատարելագործելն է»:

Ռուս հեղինակներից Ա. Ռուբակինը ¹⁾ նույնպես կրկնում է նույն բուրժուական-իրեալիստական տեսակետը: Նա գրում է. «Մարդու նպատակը պիտի լինի ընթերցանության միջոցով իրեն դարձնել բազմակողմանի, խորաթափանց, լրիվ»²⁾. մի ուրիշ տեղ նա ասում է. «Բարձրագույն յերջանկությունը—դա մարդուս ուժեղ դգալն է. մեր խոսքը վոչ թե ֆիզիկական ուժի, այլ հոգեկան ուժի մասին է»:

բ) Յերրորդ սխալ տեսակետը—դա ընթերցանության մեջ նեղ պրակտիցիզմ (նեղ գործնականություն) տեսնելն է: Պարզենք այս տեսակետը հենց իրենց հեղինակների մտքերով: Մեթոդիստ Ա. Պետրովը ²⁾ միանգամայն հակառակ Բրանդեսի և Ռուբակինի տեսակետին, ասում է. «... Կյանքն այժմ պահանջում է վորոշակի մասնագիտացում. մենք անպայման ինքնազարգացումը պիտի բղխեցնենք կյանքի պրակտիկ խնդիրներից, ֆնացած բոլորը պիտի դա լրացնելու հիմնականը, պիտի սպասարկի մարդու արտադրական նպատակներին»:

Վ. Նեվսկին նույնպես իր «Ի՞նչ և ինչպես կարողալ» գրքում նույն միտքն է կրկնում: «Գիրքն արտադրական նպատակների համար է և վոչ գիտելիքներ ձեռք բերելու, վոչ թե ամբողջական աշխարհահայացք ստեղծելու, ինչպես առաջ եյին ասում: Այժմ

գիրքը պիտի դարձնել մուրճ ու մանգաղի սպասուհի»³⁾: Այս հարցադրմանը վճռականորեն դեմ դուրս չեկավ ընկ. Կրուպսկայան. այդ մասին կգրենք մանրամասն, ներքևում:

գ) Յերրորդ տեսակետն ընթերցանության նպատակների մասին՝ միանգամայն ժխտում՝ է առաջին յերկուսը և միակ ճիշտն է:

Պարզենք. ընկ. Կրուպսկայան քննադատելով նեղ պրակտիցիզմի տեսակետները պաշտպանող հեղինակներին, ասում է. «Ամենից առաջ, ի՞նչպես կարելի չե գիտելիքներ ձեռք բերելն անջատել արտադրական աշխատանքից. ինչո՞ւ, ի՞նչ հիման վրա հակադրել այդ յերկուսն իրար: Ո՞ւմ գլուխը կմտնի այդ հակադրումը: Միթե ընդհակառակը չե՞. հենց գիրքը չե՞, վոր ծառայում է այնպիսի գիտելիքներ ձեռք բերելուն, վորոնց շնորհիվ աշխատանքն ավելի արտադրողական է դառնում»:

Շատ ճիշտ է. վոչ թե պիտի բաժանել, անջատել, հակադրել ընթերցանությունը պրակտիկային, արտադրությանը, այլ դրանք պիտի իրար լրացնեն: Ընկ. Կրուպսկայան հարցն ավելի չե ընդլայնում. նա ասում է. կարելի՞ չե արդյոք հակադրել տեսությունը պրակտիկային, աշխարհայացք ձեռք բերելը՝ արտադրական պրակտիկային: Այս կարևոր հարցի մասին մենք միանգամայն անհրաժեշտ ենք համարում իր ամբողջությամբ տալ ընկ. Ստալինի տեսակետը:

«... Թեորիան բոլոր յերկրների բանվորական շարժման փորձն է՝ վերցրած իր ամբողջությամբ: Թեորիան, իհարկե, անառարկային է դառնում, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այնպես, ինչպես պրակտիկան կուրանում է, յեթե նա չի լու-

¹⁾ А. Рубакин -- Письма к читателям о самообразовании.

²⁾ А. Петров -- Помятка рабочего самообразования.
Гиз. 1928.

Կաթորում իր ճանապարհը հեղափոխական թեորիայով։
Մախյան թեորիան կարող է բանվորական շարժման
հսկայական ուժ դառնալ, յեթե սա զարգանում է ան-
քակտելիորեն կապված հեղափոխական պրակտիկայի
հետ, վորովհետև նա, միայն նա կարող հավատ ներշնչել
շարժմանը, տալ կողմնորոշման ուժ և շրջապատող դեպ-
քերի ներքին կապերի հասկացողություն, վորովհետև
նա, և միայն նա կարող ե ոգնել պրակտիկային հաս-
կանալու վոչ միայն այն, թե ինչպես և ուր են շարժ-
վում դասակարգերը ներկայումս, այլև ուր պետք է
շարժվեն նրանք մոտ ապագայում։ Վոչ այլ վոք, յեթե
վոչ ինչինն եր, վոր բազմաթիվ անգամ ասում և կրկը-
նում եր իր հայտնի դրույթն այն մասին, թե՛ «ա-
ռանց հեղափոխական քերիայի չե կարող լինել նայել
հեղափոխական շարժում» (հատ. V, էջ 135)։

Յեզրալիակեցի: Ինքնազարգացմամբ պարապողներն
ամենից առաջ պիտի դնեն շարժան վերը հիշված ի-
դեալիտական տեսակետները՝ ընթերցանության
նպատակների մասին:

Միաժամանակ լավ պիտի զխաղցել նեղ պրակ-տիցիզմի, մասնագիտացման քողի տակ թաղնված տեսակետների վտանգավորությունը։ Ամեն մի զարգացած մարդ, նույնպես և ինքնազարգացմամբ պարապողները վոչ միայն տեխնիկական գիտելիքներ պիտի ձեռք բերեն, վոչ միայն պիտի պատրաստվեն, խորանան իրենց մասնագիտութլւան մեջ, այլ միաժամանակ պիտի ունենան լայն մարքսիստական աշխարհայայցք։

Այստեղ անհրաժեշտ է ավելացնել, վոր մեր հպա-
տակը պիտի լինի թէ մեր մասնագիտությունը և թէ

միլիարդան զմբմասին ի որոշին մանրամասն ծանոթացնելով
ամբողջ տնտեսական պատկերաստեղծությունը ծառայելից ներ-
քաշելով այն տնտեսական շրջանները, որոնք անհրաժեշտ է
ստեղծելու ի կառուցման կոնկրետ միջամտության համար:

Ինչպես ինքնազարգացման ամենալուծարանական
խորհրդակցությունն է արժանապրելի, կերտողարգա-
ցումը սխիզի ծաղախի, զբանջորուծյան և գյուղացիու-
թյան ակտիվության ամենար սոցիալիզմի կառուցման
բոլոր բնագավառներում՝ նույնպես զանազակ-ալ-ալ-
ախիվությունն անսխիզապես ուղղվել կուսակցության և
խորհրդային իշխանության նորմանոր ակտիվների ձեռք
բերմանը և արժանապրումը:

II. ԸՆԹԵՑՈՒՆՆԵՐՅԱՆ ՄԱՆԸ ՅԷԼ ԾՐԱԳԻՐԸ

Օրագիրն ընթերցանելու ժամանակ հետ կապված մի կարևոր հարց է: Այս հարցի շուրջը նույնպես խոշոր տարաձայնություններ կան միջոգիականների միջև:

Ե. Ռուբակինն անում է, «Ամեն մարդ չերեք հիմնական բնագավառ ունի իր կյանքում: Ձեկը անհատական ինտիմ կյանքն է, մյուսը սոցիալական-հասարակականը, չերրորդը միջազգային, համաշխարհային կյանքը»: Այսպեսզի չեզոքվա՞ցնում է, վոր այս չերեք բնագավառն է, վոր պիտի ուսումնասիրել: Այս բաժանումն, ինչպես ասում էր, աշխարհագրական-ֆիզիկական է: Տեսնենք, ինչ հեղինակն ինչպես է ընդունում այդ բաժանումները: Ես գտնում եմ, վոր անհատական ինտիմ կյանքը նկատական նշանակություն ունի մարդու համար՝ դա նրա նոգոլիդների, նրա վարքագծի, նրա անհատական կյանքի հարցն է:

Հայ Ռուսական ընթերցանության ժրագիրն այս
պես պիտի կազմված լինի՝ փոքրերի ուսումնասիրելու

ման, ընթերցման միջոցով թափանցե՞նք մարդկային անհատական կյանքի խորքերը, հենց նույն ընթերցանություն միջոցով կերտենք, զարգացնենք այդ անհատականը: Այս նպատակին հասնելու համար Ռուսական առաջարկում ե այնպիսի ընդլայնած ծրագիր կազմել, վոր ընդգրկի ամեն ինչ՝ մաթեմատիկան, գեղարվեստը, փիլիսոփայությունը և այլն. դուրս ե գալիս մոտ 24 գիտություն:

Միայն այդքանը. քիչ ե:

Հեղինակն շտապում ե հանդստացնել սարսափահար ընթերցողին. «Մի վախեցեք, ընթերցող, բայց ի՞նչ արած, գործը շատ մեծ ե»:

Ընթերցանություն մասին նման համայնապարփակ տեսակետի վրա կանգնած հեղինակներից մի ուրիշը նույնպես թվում ե այն միտմունքը, ինչ պիտի ծրագրել և ուսումնասիրել: Դուրս ե գալիս, վոր ինքնազարգացմամբ պարապողն անպալման պիտի անցնի հետևյալ դասընթացքը. 1) քաղաքատնտեսություն, 2) սոցիոլոգիա 3) պետական իրավունք (Պորթրալին Միություն սահմանադրությունը), 4) կուլտուրայի, իդեաների, հեղափոխությունների պատմություններ, 5) ոտար և ուսական գրականություն, 6) մաթեմատիկայի հիմունքները, 7) տարրական ֆիզիկա, 8) տարրական քիմիա, 9) աստղաբաշխութուն, 10) կենսաբանություն (բուսաբանության և կենդանաբանության էլեմենտները), 11) հոգեբանություն, 12) մարդակազմություն և բնախոսություն:

Ահա ծրագիր. և սա վոչ թե մաքսիմումն ե, այլ այն, ինչ ինքնուսը պիտի ծրագրել, սովորել: Իսկ զարգացած մարդուց պահանջվում ե խորացած կերպով ուսումնասիրել այս բոլորը, միաժամանակ տե-

ղյակ լինել բոլոր նոր նվաճումներին: Այն ել վոչ թե «մատչելի գրականության միջոցով», այլ «անցնել լուրջ դասընթացք», կարգալ «մասնագիտական գրականություն»:

Բանից դուրս ե գալիս, վոր ինքնուսը պիտի անցնի համալսարանային ամբողջ ծրագիրը, այն ել բոլոր ֆակուլտետներինը, այսինքն միքանի տասնյակ մասնագիտություններ իմանա:

Պարզ ե, վոր նման բեռի տակից չի կարող դուրս գալ ինքնուսը, նման պահանջ չի կարելի առաջադրել: Այսպիսի համայնապարփակ ծրագրերը նպատակ ունեն ամենազետեներ պատրաստել. դա և՛ անհնարին ե, և՛ աննպատակ ներկա մեր զարգացման պայմաններում:

Կա նույնպես մի չեբկորոգ տեսակետ: Վերը հիշված հանրագիտությունը հակադրվում ե մասնագիտական կրթությունը: Այս տեսակետը պնդողներից Ռուբակինը գրում ե. «Ինքնազարգացումը պիտի գնա տվյալ անհատի ունակությունների և գերակշռող շահերի համաձայն». հետո ավելացնում ե. «գերակշռող շահերն ու ունակությունները վորոշելիս (պիլոտեխնիկայի մեթոդներով) պետք ե հիմք ընդունել պրոֆեսիոնալ ձիրքերը»:

Ի՞նչ ե նշանակում այս:

Այն, վոր ենցիկլոպեդիկ, համայնապարփակ ուսումը, ընթերցանությունը հավասարեցվում ե նեղ մասնագիտական, արհեստագիտական պատրաստությունը: Դուրս ե գալիս, վոր ամեն մարդ պիտի կարդա միայն իր արհեստի, վորակի բարձրացման ուղղությամբ:

Ճիշտ ե, հեղինակն ավելացնում ե, վոր «կոմպլեքսային մեթոդի միջոցով» պիտի ընդլայնել մասնա-

գիտությունը¹⁾), բայց այս համբերումը վերջինչ չի փոխում, պրոֆեսիոնալ կրթության տեսակետը մնում է անխախտ:

Մի ուրիշ հեղինակ, Ա. Պետրովը²⁾, հետևյալ կերպ է պարզաբանում պրոֆեսիոնալ կրթության հարցը. «Արտադրության և արհեստի կողմից միանգամայն նորմալ պահանջ է ինքնազարգացումն իրենց սպասարկող արձանի: Մարդ ինչով ուզում է զբաղվի, ինչ արտադրության մեջ էլ աշխատի, նա կարող է իր արտադրությունից չեղնելով, ուսումնասիրել ամբողջ աշխարհը, ժամանակակից գիտությունը»: Այնուհետև պարզաբանում է իր միտքը Պետրովը. «Բանվորը կանգնած է մեքենայի առաջ. նրան չի կարող չհետաքրքրել այդ մեքենան: Վորոշիչի հասկանա, ըմբռնի մեքենան, նա պիտի ծանոթանա մեխանիկային, վերջինիս չի կարելի ծանոթանալ, առանց մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա իմանալու: Ահա իր մեքենայից բանվորը գնաց մինչ գիտության խորքերը: Բայց չե՞ վոր ինքնուր նուսը նույնպես մեքենա չէ, կենդանի մեքենա. նա ցանկանում է իմանալ նաև իր մեքենան, կենսաբանությունը, բնախոսությունը և այլն»:

Այս յերկար մեջբերումը ցույց է տալիս, վոր սողացող պրակտիկայի, նեղ մասնագիտական կրթության և վոչ թե մարքս-լենինյան աշխարհայացք ձեռք բերելու կողմնակիցներ են վերը հիշված հեղինակները: Նրանք առաջարկում են ընթերցանությամբ պարապել միայն մասնագիտական ուղղությամբ:

Բայց առարկելով վերը հիշված պրակտիկայի, մասնագիտական կրթության, ընթերցանության դեմ, միթե

մենք դեմ ենք, վտանգավոր ենք համարում պրոֆեսիոնալ կրթությունը, ընթերցանությունը:

— Վհչ մի զեպքում:

Պրոֆկրթությունը, մասնագիտական ընթերցանությունը միանգամայն անհրաժեշտ են վորակը բարձրացնելու համար. իսկ վորակի հարցը խոշոր հարց է սոցիալիզմի կառուցման ներկա շրջանում:

Բայց բացի վորակից, մասնագիտացումից, ամենից առաջ՝ սոցիալիզմ կառուցող մարտիկը պիտի լինի քաղաքականապես պատրաստ, մարքս-լենինյան գաղափարներով, աշխարհայացքով զինված:

Ընկ. Կրուպսկայան, քննադատելով վերը հիշված ինդիկալներին, գրում է. «Ներկայիս հսկայական գիտելիքներից պիտի ընտրել այն, ինչ ավելի խոշոր արժեք ունի ժամանակակից կյանքի համար»:

Լրագրերը տալիս են ընթացիկ կյանքը. բայց վորպեսզի հարցերն ըմբռնենք, լրագրերին զուգահեռ պիտի կարդանք ավելի հիմնական գրականություն. պիտի ուսումնասիրենք կապիտալիստական հասարակարկը, նրա կառուցվածքը, նրա եկոնոմիկայի կապը քաղաքականության հետ և այլն: Մյուս հիմնական հարցը այն է, թե ո՞ր և զ՞նում մարդկության զարգացումը: Պիտի ուսումնասիրել մարդկային հասարակության զարգացման որոնքները, ըմբռնել՝ գեպի ուր է գնում նա: Բայց հասարակական զարգացման հարցերի հետ միասին պիտի ուսումնասիրել նաև ընթացիկ զարգացման ուղիները: Այսպիսով տեսնում ենք, վոր ընկ. Կրուպսկայան չերեք հիմունքների վրա յե գնում աշխարհահայացքի ձևակերպման հարցը — տնտեսագիտության, պատմության և բնական գիտությունների:

Պիտի ասենք, վոր սրանով միայն չի ընդորոշվում

1) Невский. Азбука самообразования.

2) А. Петров. Памятка рабочего самообразования.

ինքնազարգացման ուղղությունը, ծրագրի, պլանի հարցը:

Հիմք ընդունելով Համկոմկուսի(Բ) Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի վերոշույնները, պիտի շեշտենք, վոր ինքնազարգացմամբ պարապողները հատուկ ուշադրություն պիտի դարձնեն նաև հանրակրթական առարկաների՝ լեզվի, մաթեմատիկայի, ֆիզիկայի և այլնի վրա. առանց այդ հիմքի անհնարին է մարքս-լենինյան աշխարհահայացքը ձեռք բերել:

III. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Ի՞նչպես դասավորել ընթերցանության նյութերը, ի՞նչ հետևողականությամբ և պլանով կարգալ:

Ամենից առաջ՝ կան մեթոդիստներ, վոր կարևորություն չեն տալիս պլանի հարցին: Որինակ, Բրանդեսը գտնում է, վոր հենց ենպես, պիտի կարգալ այն, ինչ հետաքրքրում է: Անդլիական մեթոդիստ Չ. Ռիչարդսոնն ասում է. «Շատ դժվար է ուղղություն տալ. չե՞ վոր բազմաթիվ ճաշակներ, պահանջներ կան. պետք է միայն իմանալ, վոր գրքերն են մարդկանց համար և վոչ ընթերցողը գրքերի համար»:

Զարմանալի չէ, վոր նման տեսակետի յեն բուրժուական մեթոդիստները, բայց զարմանալին այն է, վոր մեր մեթոդիստների մեջ նույնպես կան այդ բուրժուական տեսակետի արտահայտիչներ:

Այսպես, Բ. Բարովիչը գրում է. «Աշխատանքների պլան և ծրագիր պիտի լինի, բայց վոչ բոլոր տիպի ընթերցանության, այլ միայն խորացած՝ վորոշ ուղղությամբ, վորոշ հարցեր ուսումնասիրողների համար, իսկ նոր սկսողների համար անողուտ է, հաճախ իսկ

ֆնասակար են¹⁾: Բանից դուրս է գալիս, վոր պատրաստի, ինքնուրույն աշխատողներին համար պլանն անհրաժեշտ է, իսկ նոր սկսողների, իսկական ինքնուսուների համար պլան պետք չէ: Սա միանգամայն սխալ է, Հենց ինքնուսուների, բոլոր ինքնազարգացմամբ պարապողների համար պլանը նախագանց անհրաժեշտ է:

Հիմա անցնենք այն կոնկրետ հարցին, թե ինչպես պիտի պլան կազմել:

Այս հարցում նույնպես տարբեր կարծիքներ կան: Վոմանք, այսպես կոչված՝ բանվորական ժամանակաշրջանների տեսակետն են առաջ մղում: Վերջինս ելուցյունը նրանում է, վոր ինքնազարգացմամբ պարապողը վորոշ ժամանակաշրջանում աշխատում է մեկ հարցի և նրա հետ առնչություն ունեցող հարցերի վրա:

Ուրիշ մեթոդիստներ ել հակառակ կարծիքի յեն, գտնում են, վոր կարելի չէ միաժամանակ աշխատել միջանի հարցերի վրա, կարգալ միջանի գրքեր:

Ի. Միրտոֆնասում է. «Ինքնազարգացմամբ պարապողը պիտի իրեն ստուգի. յեթ մտքերը չեն շփոթվում, թող միաժամանակ (դպրոցի ուսանողի նման) աշխատի միջանի տարբեր առարկաների ուղղությամբ»:

Մենք ամբողջապես միանում ենք վերջին տեսակետին, այսպես կոչված՝ «գուդահնո» ընթերցանության սխեմային: Միաժամանակ միջանի առարկաների վրա աշխատելն ալիլի համապատասխանում է զարգացող անհատի և արդիականության պահանջներին: «Դժվար լինելը» վճռականապես պիտի դեն շարտել. չե՞ վոր նույնիսկ մեր յերեխաները դպրոցում միաժամանակ

1) Барович. Как читать книгу.

բազմաթիվ առարկաներ են սովորում. հասակաշրջաններին համար ինչո՞ւ պիտի այդ անհնարին լինի:

Պարզ է, վոր սխտեմատիկ աշխատանքը միջանի առարկաների վրա միանգամայն հնարավոր էլինի, յեթե կանոնավոր պլանավորենք մեր ժամանակը, ամեն մի որը և ժամերը:

Յուրաքանչյուր սխտեմով պարապող մարդ անպայման պիտի մշակի իր աշխատանքների պլանը և պարապմունքների ժամատախտակ: Պլանը կազմելիս պիտի դեկավարվել մանկավարժական կանոնով՝ հեշտից — դժվարին: Բայց հեշտից դժվարին անցնելը չպիտի հասկանալ միակողմանի և սովյալ նյութի ուսումնասիրության ծրագրի մեջ մտնող կարևոր, «բարդ» գրքերը չկարդալ. ընդհակառակը պիտի վճռականությամբ ունենալ և լեզվի ու բովանդակության կողմից «բարդ» գրքերը կամ նյութերը հաղթահարել, անպայման կարդալ:

IV. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի կազմակերպումն ամենահիմնական հարցերից մեկն է: Վոչ մի գեպը ում չպիտի մտածել, թե «ամեն ինչ կամաց-կամաց էլինի»: Աշխատանքի կազմակերպումը, աշխատելու աբվեստը բոլոր արվեստներից ամենակարևորն է:

Պարապմունքի ժամանակ շտապողականությունը, զալպով և անշափ աշխատելը, աշխատանքից և իրենից հիասթափվելը, սկսած գործի վրա խաչ քաշելը, այս բոլորը պարապմունքների անկազմակերպվածության հետևանքներ են: Վորպեսզի արդյունք չլինեն ժամանա-

կին պիտի լինել վճռական, պարապմունքները դնել մտածված, կազմակերպված հիմունքների վրա:

Միայն մի շարք գիտահետազոտական ուսումնասիրություններից հետո հնավոր յեղավ մտավոր աշխատանքի գիտական կազմակերպման խնդիրները լուսաբանել:

Բայց դեռ գիտության վերջին խոսքը չի ասված, շատ ու շատ խնդիրներ դեռ չեն պարզված: Ստորև մենք կանգ կառնենք արդեն լուսաբանված մի շարք հարցերի վրա:

1. ՀՈԳՆԱԾՈՒԹՅԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Թե ինքնադարգացմամբ պարապողների և թե դեկավարների համար սա շատ հիմնական հարց է:

Ա. Նեչայելը կլինիկական ճշգրիտ սովյալների հիման վրա հետևյալ կերպ է տալիս հոգնածության արտաքին նկարագրությունը. «Ինքն ստանում է տանջված տեսք և արտասովոր գույն, հայացքը՝ բութ, անշարժ, քարացած տեսք: Առաջանում են դանազան շարժումներ՝ հորանջելը, ծամածռումներ, ձեռքերի դողդողում, գրեթե ժամանակ, լեզուն կապ է ընկնում խոսելիս և այլն»: Հիշողությունը բթանում է: Հետադարձ շտապողականություն չկա: Գլխի ցավ, վոտքերում՝ սառնություն, դառնացում, և գլխի շերտերը, տառապում անքնությունից (և այլն):

Մի թե մեծ թվաքանակությամբ, անմիտանալի պարապողներից մեկը լիցք էր հոգնածության և ցերեկային շտապողականության հիվանդության: Այսինպես, ինչպես ճանաչված, այնպես էլ անճանաչված, ցույց դնում են:

1) Нечайел А. А. «Психическое истощение».



Վոչ մի չեւք չկա ալդ քալքալված դրությունից, յերկար տարրինների համառ բժշկությունն և հարկավոր: Բայց միթե լավ չե հենց սկզբից մտավոր աշխատանքներն այնպիսի ռացիոնալ հիմքերի վրա դնել, վոր հետո կարիք չլինի չեւք վնասել գերհոգնածությունից, տանջանքներից:

Ինչպես պետք և կազմակերպել աշխատանքը:

Լավ գիտցիր, վոր հոգնածությունը մի բնական, կենսաբանական յերևույթ ե: Ավելին. հոգնածությունը ռեֆլեքսային բնույթի ինքնապաշտպանության մի գործողությունն և, մի նշանացույց, վոր ասում ե, թե պիտի վերջ դնել որգանիզմին ֆեառող աշխատանքին, հանգստանալ: Հոգնածության բնախոսական պատճառների մասին յերկու տեսակետ կա. ըստ մեկի (հանձինս գիտնականներ Մոսսոյի և Վելյարդի)¹ հոգնածությունը «քիմիական պրոցես ե, որգանիզմում՝ արյան շրջանառության ընթացքում, ճնշող նյութերի, այսպես կոչված՝ տոկսինների կուտակման հետևանք ե: Ըստ յերկրորդ տեսակետի, վորի պաշտպաններն են գիտնականներ Ներսոս, Լեոբ, Լազարեվ, հոգնածությունը նյարդային հյուսվածքի նախնական ելեմենտների անկումն և, վոչնչացումը¹):

Ռուսական նորագույն հետազոտող Ռուզեն հարցի մի չերրորդ բացատրությունն ե տալիս. «Մարդկային որգանիզմն աշխատանքի ժամանակ բոլորովին չի կտրվում, մեկուսանում արտաքին ազդեցութուններից: Մարդս միշտ վորոշ պայմանների, վորոշ միջավայրի մեջ ե աշխատում: Բացի սովորական պայմաններից, կան նույնպես մի շարք հոգեբանական պայմաններ,

դրանք են՝ պատասխանատվության զգացումը, վերաբերմունքը դեպի պաշտոնը, ընկերները, աշխատանքի լարվածությունը և այլն: Հոգնածությունը տվյալ աշխատանքի ֆիզիկական և հոգեկան պայմանների հետևանքով առաջացած դրությունն ե»: Ռուզեն այստեղից յեզրակացնում ե, վոր հատուկ ուշադրություն պիտի դարձնել պարապմունքների ֆիզիկական և հոգեկան պայմանների վրա, լավ կազմակերպման ղեկավար հոգնածությունն չի առաջանա, այլ սխտեմի տակ դրված աշխատանքը կդառնա հաճույք:

Տալով վերը հիշված յերեք հիմնական տեսակետները հոգնածության մասին, մենք նորից յեզրափակում ենք. ա) մտավոր աշխատանքները պիտի դնել պլանային, կազմակերպված հիմունքների վրա. բ) պարապմունքի համար անպայման առողջապահական պայմաններ պիտի ստեղծել և ամեն կերպ խուսափել հոգնածությունից և գերհոգնածությունից:

Միքանի խոսք այն մասին, թե ինչպես ե առաջանում հոգնածությունը:

Չարլս Մեյերսը պնդում ե, վոր հոգնածության առաջին շրջանում մարդ կարող ե ժամանակավորապես նույնիսկ ավելի լավ կատարել աշխատանքը, քան մինչ հոգնելը:

Դա առաջանում ե նրանից, վոր հոգնածության զարգացման վորոշ շրջանում (ալիոհոլի ազդեցության նման) մտքի վորոշակի գրգռվածությունն ե առաջ գալիս, վոր հետևանք ե նյարդային համակարգության վրա ներգործող թույնների: Այդ վիճակում աշխատելը կատարվում ե ուժերի հիմնական կապիտալի հաշվին: Հակառակ վորոշ մարդկանց սխալ կարծիքների, վոր հոգնած (ինչպես և հարբած) վիճակում աշխատանքը

¹ А. Левицкий. Умственный труд и утомление.

վորակով իբր թե բարձր և լինում, բոլոր խոշոր գիտնականները (Մեյման և այլն) պնդում են, վոր հոգնածության թեկուզ սկզբնական շրջանում, ինչպես և նախկոտիկ արքունիքի ժամանակ, բացի բուժ ինքնահավանությունից, յերևակայելուց, վոր իբր գործ և կատարվում, ուրիշ վորևե գրական, վորակավոր աշխատանք չի կարող լինել:

Բայց յեթե հոգնածության սկզբնական շրջանում այդպես և, հոգնածության հետագա, յերկրորդ շրջանում, չերբ ուժերն ավելի չեն սպառվել, միտքն ու դատողությունը՝ թուլացել, պարզ և, վոր մտավոր աշխատանքի քանակն ու վորակն ավելի չեն ընկնում: Վերջապես, հոգնածության յերրորդ շրջանում, նայած անհատին, առաջանում և ուժերի անկում, աշխատանքի անկում:

Չպետք և միայն հաշվի առնել հոգնածության արտաքին նշանները. հաճախ հոգնածության արտաքին և ներքին արտահայտությունները չեն համընկնում:

«Հոգնելն ու հոգնածությունը տարբեր բաներ են: Հոգնելը բնախոսական դրությունն և. հոգնածությունը այն աստիճանն և, վոր մարդն արդեն զգում և, գիտակցում հոգնածությունը» (Մեյերս):

Այստեղից հոգեբանները յեզրակացնում են. «Յերբ հոգնածություն ևս զգում, անմիջապես դադարեցրու աշխատանքը»:

Իսկ շատերն են այս տարրական գիտակցությանը, սիգնալին հետևում: Իհարկե, վոչ. անսխստեմ, անսլան, անգիտակից պարապողների թիվը շատ և: Յեւ նրանց աշխատանքն ամենից քիչ արդյունք և տալիս:

Մյուս կողմից՝ լսեք գիտնականների ձայնը: Նրանք պնդում են, և դա միանգամայն հասկանալի չէ, վոր

Ֆիզիկական և մտավոր հոգնածության մեջ խոշոր տարբերություն կա: Այն ժամանակ, չերբ Ֆիզիկական հոգնելուց հետո մարդ անմիջապես հանգստանում և, նույնը չե մտավորի ժամանակ: Կարող ևս գիրքը փակել, բայց միտքը շարունակում և աշխատել նույն ուղղությամբ, ընթերցանության դատողությունները, մտապատկերները յերկար ժամանակ չեն անհայտանում գիտակցությունից:

Այս հանգամանքն ավելի վճռական կերպով և թելադրում պարապմունքների ժամանակ պահպանել ժամանակի նորմաները, հոգնածության և գերհոգնածության տանջանքի մեջ չընկնել:

Գերհոգնածությունը — որգանիզմի առանձնակի հիվանդադին դրությունն և: Գերհոգնածության արտահայտություններն են՝ թմրածություն, ախորժակի կորուստ, ցրվածություն, անտարբերություն, անքննություն, սրտի լարված գործունեություն և այլն: Գերմանական մի հոգեբան հետևյալնկարագիրն և տալիս. «Գերհոգնածության ժամանակ մարդը դժվարությամբ և հետևում իր մտածողության խնդիրներին, միտքը դանդաղորեն և գործում, անընդունակ և խորանալ իր նյութի բնագավառում՝ խնդիրների լուծման ուղիները վորոնել, գտնել Գերհոգնածության վիճակում աշակերտը, ուսանողը ժամերով տանջվում են իրենց գաւերի վրա, բայց արդյունքն աննշան և լինում»:

Յեթե շտապ միջոցներ չձեռնարկվեն գերհոգնածության դեմ, ամբողջ աշխատունակության կորուստ կառաջանա:

Այս բոլորը սարսափեցնելու համար չենք գրում, այլ նրա համար, վորպեսզի ինքնուսը, ուսանողները գիտակցեն և սխտեմի տակ դնեն մտավոր աշխատանքը:

Մեր բեռնվածութիւնը, բազմաթիւ և բազմապիսի պարտականութիւնները հրամայականորեն պահանջում են մտավոր աշխատանքը կազմակերպել, սիստեմի տակ դնել և վոչ թե ընկճվել, թե անհնարին և ընթերցանությամբ պարապել, ինքնազարգացման պլանային պարապմունքներ չի կարելի ստեղծել, և ընկնել սողացող պրակտիցիզմի հոսանքը, կտրվել մարքս-լենինյան աշխարհայացքի խորացումից:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ՀԱՆՔԻՍՏ

Հիմնական և միակ միջոցն որդանիզմը գերհոգնածութեան չհասցնելու — մտավոր աշխատանքի ժամանակ պահանջվող հանդիստն է: Այստեղից հարց է առաջանում, թե որական քանի ժամ կարելի չե աշխատել: Պիտի ասենք, վոր ընդհանուր չափ վորոշելն անհնարին է: Նայած որդանիզմին, ունակութիւններին: Չենք կարող բացառիկ հանճարեղ գիտնականների աշխատութիւնը չափանիշ ընդունել: Այսպես, Փրանսական լեզվաբան Լիտրին որական 15 ժամից ավելի չե աշխատում և ապրեց 80 տարի: Դժուկամեն միայն մի որ է 12 ժամ աշխատել, ադ ել նրա ամուսնութեան որն է չեղել: Հասկանալի չե. այս որինակները հետաքրքիր են, բայց մեզ չափանիշ են կարող լինել: Ամեն մի ընթերցող, ինքնազարգացմամբ պարապող, նայած իր ծանրաբեռնվածութեան, պայմաններին, ինքը պիտի կազմի իր պարապմունքների բյուջեն:

Մեր պայմաններում ինքնազարգացմամբ պարապողը, չեթե նա ունի իր 7—8 ժամ աշխատանքային որը, տանում է հասարակական աշխատանքներ, կազմել և իր ժամանակի բյուջեն, հետևողական կերպով

պլանային պարապմունքներ և տանում, նա կարող է վեցորդական 5-որ որական 2-ական ժամ աշխատել:

Սա աշխատանքների սկզբում. հետագայում պարապմունքի հնգորդակի ժամերի թիվը կարելի չե հասցնել 15-ի: Բայց սրանից ելլատ, 5-որյա ժամերի թիվը չպետք է ավելացնել. նոր-նոր պարապողներին դա կհասցնի գերհոգնածութեան: Իսկ յերկար տարիներին, խորացած պլանային պարապմունքների փորձ ունեցող մարդիկ, իհարկե, ավելի յեն պարապում:

Հաջորդ հարցն այն է, թե անընդհատ վորքան կարելի չե պարապել:

Պրոֆ. Կոլցովը ասում է. «Յուրաքանչյուր անհատ ունի իր տեսլերամենտը, վորն ընդգրկում է՝ 1) ռեակցիայի արագութիւնը, 2) զրգովածութիւնը, 3) հոգնածութիւնը, 4) վերականգնումը»:

Ակադեմիկ Բելտերեվն ասացուցում է, վոր զանազան մարդկանց վրա տարբեր ձևով են անդրադառնում այս կամ այն բնույթի աշխատանքները. հենց մտավոր աշխատանքի տարբեր տեսակները տարբեր ազդեցութիւն են ունենում այս կամ այն ընթերցողի վրա: Վրմանց ավելի հոգնեցնում է ընթերցանութիւնը, վրմանց՝ համառոտագրելը և այլն: Այսպես ուրեմն ամեն մեկը պիտի հաշվի առնի իր աշխատանքի բնույթը:

Հիմա անընդհատ պարապմունքի ժամանակի մասին: Ընդհանրապես աշակերտութեան, ինքնուսնների մեծամասնութիւնը 3—4 ժամ լարված աշխատանքից հետո դադարի պահանջ է դրում. համենայն դեպս մեկ ժամ լարված պարապմունքից հետո անպայման պիտի հանգըստանալ:

Շատ ճիշտ են Կառլֆիմանն ու Կրաուզեն, վորոնք գրում են. «Յեթե նույնիսկ հոգնածութեան արտահայ-

տություններ չկան, ասիականներն ալ ժամը մեկ անգամ
պիտի դադար առնել, թե չե անողոք կերպով կ'լատ-
նեք ձեր առողջությունը¹): Բայց, մյուս կողմից, ան-
ընդհատ ընթերցման ժամանակն ինքեցնել մի ժամից ել
ալիւլի քիչ, միայն թույլ որդանիւղմներն ե հանձնա-
րարվում:

թյունը զգացիր, անսպասման թող աշխատանքդ, հանգրձատացիր, վերականգնիր ուժերդ:

Մտավոր աշխատանքի ընթացքում— առաջարկվում է և շատերն ել կիրառում են Ֆիզիկական վարժություններ, իրեն հանգստի միջոց: Պիտի ասել, վոր այս հարցում չկա միակարծիքություն թյուն բնախոսների, բժիշկների և մեթոդիստների միջև:

Հեղինակավոր հետազոտողներ Բուրգերշտեյնը և Նեյտոլցկին վճռականապես դեմ են մարզանքին, իրեն հանգստի միջոց.— «Այժմ արդեն հնաքած միտք պիտի համարել այն կարծիքները, իբր թե Ֆիզիկական վարժությունները ծառայում են իբր հանգստի միջոց— յերկար և լարված մտավոր աշխատանքից հետո»: Բժիշկ Գորդոնը նույնքան վճռականությամբ առարկում է մարզանքի դեմ՝ իրեն հանգստի միջոցի. «Մարզանքով կամ Ֆիզիկական աշխատանքով չի կարելի պարսպել մինչև դասերն սկսելը կամ անմիջապես դասերից հետո: Իրեն որեքան, լավ պիտի հիշել, վոր Ֆիզիկական հոգնած մարդը նախքան լավ հանգստանալը չերբեք չպետք է մտավոր աշխատանքով պարսպի»: Դասամիջոցներին կատարվող մարզանքի դեմ գրում է Վասիլևսկին. «Ընդմիջումներին մարզանքով զբաղվելը վոչ թե հանգիստ է, այլ մի նոր աշխատանք, վոր իր հերթին հոգնեցնում է»:

Մի շարք հեղինակներ ել հակառակն են պնդում: Որինակ, Կերթենցեիլը խորհուրդ է տալիս «ընթերցանությունից առաջ և ընդմիջումների ժամանակ մաքուր ոգևորման միջանի վարժություններ անել»:

Կեկչեիլը գտնում է, վոր «մարզանքն, առանձնապես ջրային սպորտը, դեպի բնություն կատարած եղանակը—

սիրտներն ամենալավ և իսկական հակամիջոցն են հոգնածությունից դեմ»:

Տալով այս լերկու հակադիր տեսակետները, մենք գտնում ենք, վոր, իհարկե, մարզանքը վորոշ չափով պիտի ոգտագործել պարապմունքների դադարի ժամանակ: Մտավորապես հոգնած մարդն անսպասման պահանջ ունի շարժումների, 1—2 բույս տևող մարզանքի՝ հանգստի ժամանակ կամ դրանից հետո: Ավելի լավ է աշխատանքից առաջ մի թարմացնող մարզանք, հետո հանգիստ, ապա սկսել պարսպել: Իհարկե, նայած ով է. յեթե բանվոր է, վոր 7-ժամյա աշխատանքից է յեկել, բնավ կարելի չունի մարզվելու:

բ) Ինչպես պիտի հանգստանալ.— Շնորհիվ մի շարք գործիքային չափումների՝ «Աշխատանքի հոգեբանություն» գրքում Կեկչևին և Ռյարուշինսկուն հաջողվել է պարզել, վոր մարմնի այս կամ այն դիրքի ժամանակ զարկերակի արագությունը, արյան ճնշումը, շնչառությունը տարբեր են լինում: Իհարկե, ամենալավ հանգիստը քունն է: Բնախոսությունն անվիճելիորեն հաստատել է, վոր քնի ժամանակ մարմինն ազատվում է իր ճնշող տոկոսներից և դրանով իսկ վերականգնում է իր նախկին թարմությունը: Յեթե չերկարատև, առողջ քունն անհրաժեշտ է բոլորին, պարզ է, վոր հաճախակի կրկնվող քնահատությունը լարված մտավոր աշխատանքով պարսպողի համար ուղղակի վտանգավոր է»¹⁾: Բայց տարբեր մարդկանց մոտ քնելու պահանջը տարբեր է: Ամենից լավ են քնում նրանք, վորոնք անմիջապես և խորն են քնում: Վատ է նրանց քունը, վորոնք ուշ են քնում, նրանց քունն ամուր է լինում առավոտյան կողմը:

1) Гордон. Гигиена умственного труда.

Քննից առաջ $1\frac{1}{2}$ — $3\frac{1}{4}$ ժամ վոչ մի բանով չի կարելի զբաղվել, պիտի հանգիստ տալ մաքմին: Լավ քնելու համար պիտի սենյակի ողջ մաքրել, քնելուց առաջ մտքերը ցրել: Քնելու տևողութունն 8 ժամ պիտի լինի, բայց կան թույլ որգանիզմներ, վոր հյուժված են, նրանց անհրաժեշտ է 9 ժ. քնել:

Այսքան կանգ առնելով քնի վրա, չենք ուզում ասել, թե հանգիստը պիտի սահմանափակել միայն քնելով կամ պարկելով: Հանգստի սիստեմը հրաշալի կերպով մշակել են կառուցմանը և կրթողներ: Նրանց խորհուրդները բավական զբավիչ են: Խորհուրդ են տալիս թանգարաններ հաճախել, հոյակապ շենքեր դիտել, քաղաքից դուրս զբոսանքներ կատարել, լուսանկարչությամբ պարապել, ձեռքի աշխատանք կատարել (մետաղյա, փայտից, զամբյուղագործութուն, կազմարարութուն, կոլեկցիաներ կազմել, յերաժշտությամբ պարապել, մարդկանց մոտ գնալ խոսել, զվարճանալ և այլն):

Այս բոլորը շատ հրաշալի յե: Բայց շատերը ժամանակի և զբաղման հնարավորութուններ չունեն այս բոլորով զբաղվելու: Բայց այն, ինչ հնարավոր է, պիտի ոգտագործել, ամենահիմնականն այն է, վոր հանգիստը լինի լրիվ, թեթև և չհոգնեցնի:

Լուսաշարսկին այսպես է նկարագրում Լենինի հանգրոտանալու լեղանակը. «Լենինը հրաշալի հանգստանալ գիտեր: Հանգստի ժամանակ նա վոչնչի մասին չէր մտածում, ամբողջապես տրվում էր հանգստին կամ իր սիրած զվարճությանը և ծիծաղին. դրա համար էլ ամենակարճ դադարից իսկ նա թարմացած և նոր պայքարի պատրաստ եր»:

գ) Ուղիվ վոր ժամերին աշխատել. — Մեթոդիստները:

համարյա բոլորն էլ, առաջարկում են առավոտյան աշխատել: Բայց թե՛ պիտի անի ինքնուրույն, թե՛ աս-
նավորները նա ալ պարտականութուններ և տանու: Զի կարելի առանց ալկալի պնդել, թե յերեկոյան և գիշերային աշխատանքները արգասավոր չեն:

Բեխտերեվը պնդում է, վոր առավոտից մինչև կեսոտր մտքի աշխատունակութունն աճում է, հետո մինչև յերեկոյան ժ. 5-ն ընկնում, դրանից հետո մինչև յերեկ. ժ. 9-ը նորից բարձրանում է, հետո մինչև գիշերվա ժ. 12-ը շարունակում է ընկնել: Այսպիսով, տեսնում ենք, վոր յերեկոյան և վաղ գիշերային ժամերն այնքան էլ ապարդյուն չեն: Իհարկե, անհատներին մեջ տարբերութուն կա. ամեն մարդ շարունակ իրեն պիտի դիտի, պարզի, թե իր մտավոր ունակութուններն յերեկ են ալիլի արդունավետ գործում, և ոգտագործի ալ ժամերը: Ծիշտ է նեվսկին, յերբ նա ասում է. բոլորին մի արշինով չի կարելի չափել: «Այն ժամանակ, յերբ մեկին տվյալ որերը և տվյալ ժամերը կարող են աշխատունակության բարձր ալիք տալ, մի ուրիշին, ընդհակառակը՝ կտան անկում, յերբորդին՝ նպաստավոր դրութուն և ալլն»:

V. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ընթերցանության համար անհրաժեշտ է լուսավոր, ընդարձակ տեսյակ: Բայց յեթև չունեք, պիտի աշխատեք, վոր ձեր ունեցած տեսյակը լինի մաքուր, լուսավոր, թարմ ոգով, անաղմուկ, անհրաժեշտ ջերմությամբ (14—15⁰ ըստ Ռեոմյուրի): Առանձնապես ուշադիր պիտի լինել դեպի տեսողութունը. լույսը ձախից պիտի լինի, չպիտի շատ ուժեղ լինի (16—32

մամ), լույսը պիտի ընկնի գրքի վրա (ձախից) և վաղքերի վրա: Ցանկալի յե գրքի տառերը լինեն խոշոր, տողամեջերը՝ լայն, տպագրությունը՝ պարզ, թուղթը՝ սպիտակ և վոչ փայլող:

Գիրքը պիտի բռնել աչքերից 30—40 սանտիմետր հեռավորության վրա, թեք դրությամբ: Լավ և հաճախ ընդհատել ընթերցանությունը և նայել մութ տառածության կամ աչքերը փակել: Աչքերի մասին պիտի հոգալ և վոչ թե տանջվել հեռաց այն ժամանակ, չե՛րբ արդեն փչացել են: Ամենից կարևորն այն է, վոր ընթերցանության ժամանակ խաղաղ լինի. չի կարելի պարապել, լեթե չորս բոլորն աղմուկ է, ամեն բոսկի դաժալան հարցեր են տալիս. լավ է պարապել ընթերցարանում, յեթե տանը հարմարություն չկա:

Ցեղնելով Մոյմանի և մի շարք անվանի հոգեբանների ուսումնասիրություններից և հաշվի առնելով մեր ընակարանային պայմանները, մենք խորհուրդ կտալինք. կամքն ընտելացնել, ուշադրության լարում առաջացնել և սովորեցնել իրեն անուշադիր լինել դեպի աղմուկը և պարապել մեր ընակարանային պայմաններում:

1) Վորսեղ պարապել. — Հաճախ ինքնուսուր դուրկ է լինում աթոռից, գրասեղանից, պարապում է ընդհանուր սեղանի վրա, նստում տաբուրեակային: Այստեղ, իհարկե, բոլոր խորհուրդները ջուրն են ընկնում: Բայց կարելի է վորոշ բան անել. բարձրացնել աթոռի հետին վոտները, վոր թեք լինի՝ իրանը չծովի. աթոռը պիտի հենարան ունենա, վորպեսզի հանգիստ նստվի: Իսկ յեթե ինքնազարգացմամբ պարապողը միջոցներ և հարմարություններ ունի, մենք խորհուրդ կտալինք, Խ. Ս. Հ. Մ. ԲԳՏ-ի վարչական աշխատանքի և տեխնիկայի բաժնի

(ԱՌՕ) ստանդարտ ձևի աթոռները և սեղաններն ոգտագործել:

Պարապելու սեղանի վրա խիստ կանոնավոր կերպով ամեն ինչ իր տեղը պիտի դնել. աշխատիր քիչ բան դնել գրասեղանին. թանաքաման, ժամացույց, որացույց, ձախ կողմն այն բոլորը, ինչ ձեռքի տակ պիտի լինի միշտ: Յեթե սեղանն ունի արկղներ, ձախ արկղում պահել քաղվածքներ, տեղեկատու նութեր, գրքեր, բառարաններ: Ամիրիկյան մեթոդիստ կրթաֆորդն ասում է. «Մշտական տեղն առաջացնում է աշխատանքային տրամադրություն: Սովորական կարգավորումը, սարքավորումն ուշադրությունը չի ցրում նոր առարկաների վրա: Միաժամանակ մշտական տեղը ասոցիացիա (զուգորդություն) է առաջացնում ժամանակի և տեղի հետ միասին, և ընթերցողը շուտ է կենտրոնանում: Ընթերցանությամբ պարապողին խորհուրդ պիտի տալ նաև նստելու վերաբերյալ: Պիտի նստել ուղիղ սեղանի դիմաց, իրանը քիչ հետ տված, ծոված նստելն առաջացնում է վոզնաշարի ծուռ: Վոմանք սիրում են զուլինները թեքել և հենել ձեռքին, վոմանք քայլում են կարդալիս, վոմանք պառկած են կարդում և ալլն: Չպիտի լեքկաթե որենքների մեջ դնել. ընթերցողը պիտի դեկավարվի վերը հիշված մեր խորհուրդներով, յերբեմն կարելի յե ցանկացածով վարվել:

2) Սնունդը. — Մա մասնագիտական ճյուղ է. այնքան նորանոր տեսություններ կան վիտամինների և ալլների մասին, մեր դժվարություններն էլ այնքան են, վոր հարկ չկա շատ հեռվից սկսել: Ամենքը գիտեն, վոր կանոնավոր, վորոշ ժամերին տրվող սնունդն անհրաժեշտ է ինչ վերաբերում է սննդի վորակին, նա

պիտի ունենա այնպիսի նշույթներ, վոր անհրաժեշտ են մտավոր աշխատողին. այն է՝ սպիտակուցային նշույթներ և ֆոսֆորային աղեր: Չափազանց ոգտակար են հետևյալ մթերքները՝ կաթ, պտուղներ, արմարիք, կանաչեղեն, սունկեր, ձու, յուղ ու պանիր, ձուկ ու միս և այլն: Պիտի իմանալ, վոր նստակյաց մարդու մեջ ստամոքսի կապույթուն են առաջացնում մակարոնը, բրինձը, կրուպան և այլն: Կարիք չկա բացատրելու, վոր զրգոնի խմիչքները, պինդ կոֆեն և թեյը, ակոհոլը ազդում են նյարդային սխտեմի վրա և խանգարում են մտավոր աշխատանքներին:

3) Տրամադրությունը. — Մեծ ուշադրություն պիտի դարձնել նաև տրամադրությունը: Բժիշկ Գորդոնը հետևյալ բնախոսական բացատրությունն է տալիս տրամադրությունը. «Աշխատանքի արդյունավետությունը և վորակը մեծապես կախված են տրամադրությունից: Յերը կենսուրախ ենք, մեր սիրտն աշխատում է չեռանգուն, ուղեղը շատ արյուն է ստանում, գրահամար ել ուղեղի աշխատանքը հաջող և արագ է կատարվում»¹⁾: Նեվսկին աշխատում է բացատրել, թե ինչն է առաջացնում բարձր տրամադրություն. «... Դա պայմանավորված է ընդհանուր որգանական պատճառներով. մեծ հետաքրքրություններ դեպի գիրքը, ընթերցման հաջողություններ...»: Պարզ է, վոր մտավոր աշխատանքի մարդը, լուրջ պարապմունքներ ունեցողն ամեն ինչ պիտի անի՝ մոռալ տրամադրությունից պիտի խուսափի. այս առթիվ ընկ. Կրուպսկայան տալիս է հետևյալ խորհուրդները. «Յեթե անհրաժեշտ անդորրությունը չկա, պիտի աշխատել ստեղծել. արագությունը քայլել

սենյակում, առել վորոշ յեղանակ, միտ գցել լավ հիշողություններ, սիրած հեղինակից մի յերկու յերես կարդալ և այլն»¹⁾:

VJ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Բոլորին հետաքրքրող հարցերից մեկն էլ այն է, թե ինչպես ըմբռնել, յուրացնել գիրքը: Ինքնազարգացմամբ պարապողը գիտի մի բան. դա այն է, վոր գիրքն իր բարեկամն է. բայց հենց բանն այն է, վոր հաճախ այդ բարեկամը, լավագույն ընկերը խոսում է անհասկանալի լեզվով: Շատ բան է հարկավոր, վորպեսզի գիրքը դառնա իսկական ընկեր, բաց անի բոլոր իր գաղտնիքները:

Ինչ անել, վոր նա յենթարկվի մեզ:
Ահա մեր խորհուրդները.

1. ԸՆԹԵՐՑՄԱՆ ՏԵՆՆԻԿԱՆ ՅԵՎ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ է պատահում, վոր ինքնազարգացմամբ պարապողը սկսում է լուրջ գիտական կամ քաղաքական գրքեր կարդալ և ուղղակի դժբախտ է զգում, յերբ տեսնում է, վոր չի ըմբռնում:

Ըմբռնմանը խանգարողն ամենից առաջ ընթերցման տեխնիկան է. ամեն մի բառի չհասկանալը խանգարում է միտքն ըմբռնելուն: Կրուպսկայան ասում է. «Պետք է ձգտել, վոր կարդալու տեխնիկան դառնա ավտոմատ և մտքերը չդանդաղեցնի»: Մի ուրիշ տեղ նոյն հեղինակն ասում է. «Ուղիղ, արագ, ճշգրիտ կարդալ պիտի իմանա ընթերցողը. պիտի լավ իմանա

¹⁾ Гордон. Гигиена умственного труда.

¹⁾ Крупская. Как и чему учиться.

նաև կհաղորդվի թյուրընդունման և նման վճռական պահանջներ դնում։ Բայց հենց բանն էլ այն է, վոր ինքնուսից նման պահանջներ անել չենք կարող, վորովհետև յեթե ինքնուս է, կնշանակի նա դեռ պիտի սովորի։ Բայց միաժամանակ մենք ել պնդում ենք, վոր ընթերցման տեխնիկան, մանավանդ քերականություն իմանալը շատ կարևոր են, առանց այդ դեպքերին տիրապետելու անհնարին է ըմբռնել, լուրացնել կարդացածը։

2. ԸՆԹԵՐՑՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ

Մի ալլ հարց. ասենք թե ինքնուսը գիտե ընթերցման տեխնիկան, գիտե և՛ քերականություն, բայց թե՛նչ արագությունը նա պիտի կարդա։ Սա այնքան էլ դատարկ հարց չէ, ինչպես կարող է թվալ վոմանց։ Այս մասին մեթոդիստների մեջ տարբեր կարծիքներ կան։ Ավելի տարածված է այն տեսակետը, վոր դանդաղ ընթերցանությունն ավելի լավ է։

Ակադեմիկ Ֆադեն ասում է. «Վորպեսզի կարդալ սովորես, պիտի դանդաղ կարդաս. հենց միշտ էլ դանդաղ պիտի կարդաս, վորպեսզի գրքից քաղես պետքական գիտելիքներ, վորպեսզի քննադատորեն ըմբռնես¹⁾»։ Կառուցմանը և կրթության այդ հարցին մոտենում են արդյունավետության տեսակետից. գտնում են, վոր ամենաշատ հաջողությունների կարելի յե հասնել դանդաղ ընթերցման միջոցով. «Ամենից շատ արդյունքի յե հասնում թե՛ քանակի և թե՛ վորակի տեսակետից նա, ով ավելի դանդաղ է պարապում»։ Բայց այս տարածված տեսակետին բոլորովին հակառակ, գոյություն

ունի և՛ այն տեսակետը, վոր արագ ընթերցումն է լավ։

Նեվսկին ասում է. «Մեր ամբողջ կյանքն արագություն է. ամեն ինչում արագություն է պահանջվում. վոչ մի դեպքում մենք չպիտի դաստիարակենք դանդաղ աշխատանքի տեսակետի։ Բացի այս բոլորից, դանդաղ աշխատանքն յերբեք էլ լավ չի. ընդհակառակն, ինչքան մարդ ավելի արագ է մտածում, արագ պատասխանում, նա ավելի ընդունակ է։ Դանդաղ մտածողին մենք «ծանրամիտ» ենք անվանում. յերբեք էլ ճիշտ չէ, թե գրքերը դանդաղ պիտի կարդալ։ Ճիշտ չէ նույնպես, վոր գրքերը դանդաղ պիտի կարդալ, վորովհետև գիրքը դանդաղ է գրվում. նախ՝ դա սխալ է. ընդհակառակը, վորքան բովանդակալի յե գիրքը, այնքան արագ է գրվում, իսկ յեթե գրվում է «ժամը մի թեյի գտալ», յերբ մտքերը գոռով են պոկվում, հենց սկզբից կարելի յե պնդել, վոր միջին բան չի լինի»։

Այս քաղվածքի մեջ վորոշ բաներ անհիմն են։ Հենց այն միտքը, թե «վորքան բովանդակալի յե գիրքն, այնքան արագ է գրվում»՝ սխալ է։ Գիրք գրելու արագությունը շատ պայմաններից է կախված՝ նյութի լավ մտածված լինելուց, մանրամասնությունները նախորդ մշակելուց և այլն։ Գրելու արագությունը մեծապես կախված է նաև հեղինակի գրական վարժությունից, վերաբերմունքից դեպի ընթերցողը, գրված հարցերը հիմնավորապես մշակելուց (կարելի յե գրել մշակված, գրում են նաև մակերեսային, չմշակված)։

Պիտի ասել, վոր հանճարեղ գրվածքները, ինչպես Գ. Մարքսի «Կապիտալը», նաև Լենինի հոյակապ աշխատությունները, գրվել են դանդաղությամբ։

Բայց, իհարկե, տարբեր բաներ են արագ գրելը

¹⁾ Фадеев. Как читать, стр. 7.

արագ կարգալը: Արագ ընթերցանության ջերմ պաշտպաններ են ամերիկյան մեթոդիստները. Ստոնը և Կալվինը փորձեր են արել և գտնում են, վոր 54—74% տեմպի արագությունը տալիս է 84% բարձրացում ըմբռնման:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր Լենինը նույնպես արագ եր կարգում, ալլապես նա չեր կարող գրականության այն հսկայական սարը կարգալ և մշակել:

Այս բոլոր պարզաբանություններից հետո պիտի լեզրակացնել, վոր ընթերցանության ժամանակ պիտի խորանալ, պիտի սովորել հետևողականությամբ կարգալ, թեկուզ դանդաղ, բայց անպայման ըմբռնել հիմնական մտքերը: Այս ուղղությամբ աշխատելու համար մեթոդիստները հետևյալ խորհուրդներն են տալիս: Դիրքը կարգալուց առաջ նախապես թեթևակի նայել, ծանոթանալ գրքին: Բայց սա չպիտի լինի մակերեսային, անմիտ աշխատանք: Գրքին ծանոթանալուց հետո միայն կարգալ ուշադիր, անպայման հասկանալ, ըմբռնել հիմնական մտքերը, քննել խնդիրները: Բայց նման կրկնակի ընթերցումն, իհարկե, ամեն ինչ չէ: Պետք է դանդաղ ընթերցումից աստիճանորեն անցնել արագ տեմպերին, միաժամանակ՝ խորացած, գիտակցված ընթերցանությանը:

3. ԻՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ԲԱՌԱՐԱՆԻՑ

Ընթերցման տեխնիկային տիրապետելը, քերականություն իմանալը, շրագ տեմպով կարգալը դեռ բոլորը չէ. գիրքն ըմբռնելու համար դեռ շատ բան է անհրաժեշտ:

Ընթերցողի համար առաջին արգելափակները անհասկանալի բառերն են: Կան ինքնուսուներ, վոր աշխատում են չհասկացած բառերի վրայից «լոք տալ», բայց սա շատ վատ, ուղղակի անթույլատրելի բան է, վորովհետև չհասկացած վորևէ բառի հետ կապված են հետագա մտքերը, վորոնք նույնպես լավ չեն ըմբռնվում: Ընթերցողին յերբեմն թվում է, վոր ինքը չհասկացավ միայն լեզուական բառը, բայց հենց մայրենի լեզվով՝ արժեք, հավելյալ արժեք բառերը շատերը չեն հասկանում:

Նեվսկին ասում է. «Հաճախ է պատահում, վոր ընթերցողը բառերն ու դարձվածքները հասկանում է, բայց միտքն այնուամենայնիվ չի ըմբռնում: Դա յերբեմն նրանից է, վոր ընթերցողն ինչպես պետքն է չի հասկացել բառերն ու դարձվածքները, տեղմինները»:

Ծայրահեղության մեջ չպիտի ընկնել. վորևէ բառ չհասկանալուն պես անմիջապես դիմել բառարանին. անհրաժեշտ է մտածել, ընդհանուր մտքի մեջ խորանալ, հետո միայն դիմել բառարանին: Պիտի ուշադրությամբ կարգալ ծանոթությունները, գլխից չհանել լրացումները, պարզաբանումները:

Հիմա միքանի խոսք բառարանից ոգտվելու տեխնիկայի մասին:

Ամենից առաջ, ցանկալի յե ունենալ հատուկ տետր — անծանոթ բառերի, դարձվածքների համար: Անծանոթ, չհասկացած բառերը պիտի գրել տետրում, հետո բառարանի միջոցով կամ հարցնելով՝ գրել բառերի բացատրությունը տետրում և հետագայում շարունակ վերհիշել: Բառարան կարգալու տեխնիկայի մասին չենք գրում, յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում կընտելանա:

4. ՆՈՐԸ ՀՆԻ ՀԵՏ ԿԱՊԱԿՑԵԼԸ

Իհարկե, առանձին բառերի և դարձվածքների հասկանալը դեռ չի նշանակում ամբողջ գլխի կամ նյութի լրիվ ըմբռնում: Նյութի ըմբռնումն ավելի բարդ է և դժվար: Ա. Ռուբակինն ասում է. «Ի՞նչ է նշանակում բովանդակութունն ըմբռնել: Նշանակում է չլերացնել, այն ել ալնպես, վոր նա հլուսվի նախկին մտքերի, գաղափարների հետ, ավելի ամրապնդել կամ հերքել նախկինը, հին փաստերին նոր փաստեր ավելացնել, սխտեմի տակ դնել իմացածը: Այսպիսով, չլերացման պրոցեսն ասելով, հասկացվում է կապակցումը հին և նոր գիտելիքների:

Այստեղից պիտի յեզրակացնել, վոր նախքան ընթերցանության անցնելը, պիտի պարզել, թե ինչ է հայտնի այդ նյութի մասին, քրքրել ունեցած քաղվածքները, նյութերը, հիշողությունը. մի խոսքով, կատարել նախկին ունեցածի մոբիլիզացիա: Դա չի նշանակում, թե միայն կարդացածը պիտի քրքրել. իսկ կենսական փորձը, դասակարգային կովի անցած ուղին, անհատական փորձը, դիտողությունները, միթե սրանք անկարևոր բաներ են:

VII. ԻՆՉԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԳՐԻ ԱՌՆԵԼ ԳՐՔԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԵԼԻՍ

1. ՀԱՍԿԱՆԱԼԸ, ՀԻՇԵԼԸ ՅԵՎ ԳՐԻ ԱՌՆԵԼԸ

Թե ինքնադարգացման համար և թե դպրոցական առաջադրությունները կատարելիս անպայման պիտի կարդացածի արդյունքները ձևակերպել:

Ընթերցանությամբ պարապող բանվորն ու գյուղացին և կամ մեր ուսանողներն իրենց ուշադրության

կենտրոնում պիտի դնեն կարդացածի պլանի, կոնսպեկտի ու թեզիսների կազմելը:

Հաճախ ել հիվանդագին ծայրահեղությունների մեջ են ընկնում. շատերը կարծելով, թե գրքի յուրացումը կայանում է նրա համառոտագրման (կոնսպեկտ կազմելը) և թեզիսների վերածելու մեջ, միշտ վորոնումների մեջ են և շարունակ մտածում են, թե ի՞նչ անեն, վոր լավ կոնսպեկտներ կազմել ու թեզիսների վերածել կարողանան:

Սա, իհարկե, հիմնովին սխալ է: Ելականը գրքի ըմբռնումն է, համառոտագրելը, թեզիսներով և ալ ձևերով գրի առնելը յերկրորդ աստիճանն է:

Դժբախտաբար կան և այնպիսի մեթոդիստներ, վոր իրենց մեթոդական ձեռնարկներում ավելի քիչ տեղ են տալիս գրքի ըմբռնմանը, ընդհակառակը, հսկայական տեղ են հատկացնում գրքի մշակման տեխնիկական կողմին:

Ով հետևել է մեր ուսանողության ինքնուրույն պարապմունքներին, նա գիտե, վոր շատ-շատերը հենց վոր սկսում են կարդալ, անմիջապես սկսում են քաղվածքներ կազմել, գրի առնել և այլն: Սա շատ վատ է. սա խանգարում է նյութն ամբողջականորեն ընդգրկելուն, խորհելուն, հեղինակի մտքերին քննադատորեն մոտենալուն, հարցերն իրենց խորությամբ ըմբռնելուն:

2. ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ԳՐԻ ԱՌՆԵԼԸ

Մենք չեթե կարդում ենք ինքնադարգացման կամ հասարակական յիշութենքին պատրաստվելու համար (պրոպագանդա, ագիտացիա, զեկուցում, հողլածում ոգտագործել և ալլն) և կամ մեր դասերն ու առաջադրու-

թյունները պատրաստելու համար, թողնու ղեգքերում եւ միանգամայն անհրաժեշտ ե կարգացածը գրի առնել այնպես, վոր կարգացածը լուրացված կերպով կարողանանք ոգտագործել: Ձեք վոր հիշողությունն այնքան համայնապարփակ, կատարելագործված բան չե, վոր ամեն ինչ ընդմիշտ պահի:

Մեր անհատական փորձից գիտենք, թե ինչպես հիշողությունը հաճախ մոռանում ե, մթագնում քիչ առաջ լավ գիտցածը: Կարգացածը գրի առնելը միանգամայն անհրաժեշտ ե:

Ընկ. Մ. Ուլլանովան հետաքրքիր նկարագրել ե վ. Իլյիչի աշխատելու ձևը. «Դեռ շատ ջահել, գիմնադիպի վերջին դասարանից, Լենինն իր ասրող ժամանակը գրքերի վրա յեր անցկացնում, պատրաստվում եր այն հեղափոխական աշխատանքի համար, վորին նվիրելցի: Յեռ հիշում եմ, յերը մենք ապրում ելինք Սամարայի նահանգի մի գյուղում, Վրադիմիր Իլյիչը ամեն առավոտ թեյից հետո բեռնավորված գրքերով, բառարաններով, տետրակներով՝ գնում եր այգու խորքի մի անկյունը՝ կարդալու: Իր ամբողջ կյանքում ել Լենինը վոչ միայն գիրքը կարդում, այլ ուսումնասիրում եր, քաղվածքներ անում, կարևոր գրքերի կոնսպեկտն եր կազմում: Այսպես ուրեմն գրքի լուրացումը պահանջում ե գիրքը մշակել:

Բայց ինչպես մշակել:

Մեր մեթոդիստները մշակման հետևյալ յեղանակներն են հանձնարարում:

Պլան կադել (պարզ և բարդ), թեգիսներ կազմել, կոնսպեկտ գրել, քաղվածքներ կատարել, ընդգծումներ, նկատողություններ գրել և այլն:

Առանձին-առանձին կանգ առնենք այս կարևոր հար-

ցերի վրա և պարզենք նրանց եյությունը: Միաժամանակ մի շարք որինակներով աշխատենք ոգնել մեր ընթերցողներին՝ գրքի մշակման տեխնիկային տիրապետելու:

3. ԻՆՁ Ե ՊԼԱՆԸ, ԻՆՁՊԵՍ ՊԵՏԻ Ե ՊԼԱՆ ԿԱԶՄԵԼ

Պլանը լինում ե պարզ և բարդ: Պարզ կամ հասարակ պլան ասելով, հասկանում են այն հիմնական հարցերի թվարկումը, վորոնց մասին խոսվում ե տվյալ գրքում կամ նյութի մեջ:

Բարդ պլանի մասին մեթոդիստ Ջաբոլտսկին ասում ե. «Բարդ պլանի յուրաքանչյուր հիմնական մասն ունի իր բաժինները, վերջիններս իրենց հերթին ունեն յենթաբաժիններ և այլն»:

Ահա պարզ և բարդ պլանի որինակներ:

Վերցրեք Լենինի «Ռուսաստանի նե կա դրությունը և բանվոր դասակարգի տակտիկան» հոգվածը (ռուսերենը VII հատոր, յերես 65) և վերածեք նախ պարզ, ապա բարդ պլանի:

1. ՊԱՐԶ ՊԼԱՆԻ ՄԻ ՁԵՎ

- ա. Ռուսաստանի ներկա դրությունը.
- բ. Յերկու տակտիկա.
- գ. Պլեխանովի տեսակետների սխալ լինելը.
- դ. Գուսակցության անելիքները:

2. ԲԱՐԴ ՊԼԱՆԻ ՄԻ ՁԵՎ

1. Ռուսաստանի ներկա դրությունը.

- ա) ներկա մոմենտի նշանակությունը Ռուսաստանի հեղափոխության համար:

II. Յերկու տակտիկա.

- ա) Լենինի տակտիկան (ապստամբության ճնշումից հետո հոս պատրաստել նոր պայքարի համար).
բ) Պլեխանովի տակտիկան.
1) Ապստամբության վաղաժամ լինելը.
2) Կարևորն է բանվորներին պրոֆգարժման մեջ գրավել.
3) Հողի գրավման մասին.
գ) Լենինի և Պլեխանովի տարաձայնությունների արձանագրությունը՝

III. Պլեխանովի տեսակետների սխալ լինելը.

- ա) Շարժման վերելքը.
1) Հեղափոխական ուժերի լինելը.
2) Տնտեսական կրիզիսը.
3) Բուրժուական մամուլի խոստովանությունները.
բ) Պլեխանովի հակասությունները.
1) Աղիտացիա մղել հողերը գրավելու ոգտին.
2) Բուրժուազիային հրելու վախը:

IV. Կուսակցության անկիւնները.

- ա) Լեզալ հնարավորությունների ոգտադրծումը.
բ) Նախկին ապստամբությունների փորձերի ուսումնասիրությունը.
գ) Պարտիզանական յիւլյթներին նախապատրաստվելը:

ՊԼԱՆԻ 2-ՐԴ ՆՄՈՒՇ

Վերցրեք Լենինի «Պետություն և հեղափոխություն» գիրքը, կազմեք նրա բովանդակությունը — դա կլինի պարզ պլան. այսպես՝
1) առաջաբան, 2) դատարարդային հասարակություն և պետություն, 3) պետություն և հեղափոխություն. 1848—1851 թվականների փորձը, 4) պետություն և հեղափոխություն. 1871 թ. Փարիզի Կոմունայի փորձը. Մարքսի անալիզը. Մենդելևի լրացուցիչ լուսաբանությունները, 5) պետության մահացման տնտեսական հիմքերը, 6) մարքսիզմի այլանդակումը օպորտունիստների կողմից, 7) վերջաբան:

Այս պարզ պլանի ընթերցումը գաղափար է տալիս գրքի բովանդակության մասին: Բայց կարդացեք, ուսումնասիրեք գիրքը, կտեսնեք, վոր նրա ամեն մի գլուխը բաժանված է ստորաբաժանումների: Այսպես. «Պետության մահացման տնտեսական հիմքերը» գլուխը

ունի հետևյալ ստորաբաժանումները. ա) Մարքսն ինչպես էր դնում հարցը, բ) կապիտալիզմից կոմունիզմին անցնելը և այլն: Այս գլուխները, նրանց յենթաբաժանները և այլ ստորաբաժանական բաժանումները — գրքի բարդ կամ մանրամասն պլանն են: Պլան կազմելը չափազանց կարևոր աշխատանք է, դրա համար մենք ստորև կբերենք Լենինի «Կոոպերացիայի մասին» գրքից մի կտոր — և կկազմենք նրա պլանը, վորպեսզի այդ գործնական միջոցով ոգնենք ընթերցողին ըմբռնել պլանի ելուժյունը և կարողանալ պլան կազմել:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Մեզ մոտ, Թվում է ինձ, կոոպերացիայի վրա բավականաչափ ուշադրություն չի դարձվում: Հաղիվ թե քոլորն են հասկանում, վոր այժմ, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո և անկախ նեպից (ընդհակառակը, սրա վերաբերմամբ պիտի ասենք՝ հենց նեպի շնորհիվ) կոոպերացիան մեզ մոտ բոլորովին բացառիկ նշանակություն է ստանում: Հին կոոպերատորները յերազնեցում ջատ Փանտազիա կա: Նրանք ծիծաղելի յին հաճախ իրենց Փանտաստիկությունից բայց ինչնմն և նրանց Փանտաստիկությունը նրանում, վոր այդ մարդիկ չեն հասկանում ջահագործողների տիրապետության տապալման համար բանվոր դասակարգի մղած քաղաքական պայքարի հիմնական, արմատական նշանակությունը: Մեզ մոտ այժմ այդ տապալումը կատարված է, և հիմա ջատ բան նրանից՝ ինչ հին կոոպերատորների յերազնեցում Փանտաստիկ, նույնիսկ ուժանտիկ, նույնիսկ քոեհիկ բնույթ էր կրում, ամենին չգունավորված իրականություն է դառնում:

Մեզ մոտ հերավի, քանի վոր պետական իշխանությունը վոր դասակարգի ձեռին է, քանի վոր այդ պետական իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզ մոտ հերավի, իբրև իսկի մնացել է միայն ազդեցանկությունը կոոպերացնել: Ազդեցանկությունը մեծազույն չափով կոոպերացնելու դեպքում՝ ինքնըստինքյան իր նպատակին և հասնում այն օրդիալիզմը, վոր դրանից առաջ օրինական ծաղր, ժպիտ, արհա-

մարհական վերաբերմունքը եր հարուցանում այն մարդկանց մեջ
վորոնք արդարացի կերպով համոզված են, թե անհրաժեշտ է
դասակարգային կռիվ մղել, կռիվ քաղաքական ինքնառնության հա-
մար է այլևս մեկ անգամ, քան թե միայն ընկերներն են իրենց հախճա-
լիս, թե այժմ մեզ համար վորքան հսկայական, անհուն նշանա-
կություն է ստանում Ռուսաստանի կոոպերացիոնը։ Նեպի խնդ-
րում մենք զբոլում արևնք դուրսացուն իբրև առևտրականի,
և մասնավոր առևտրի սկզբունքին։ հենց դրանից է ըզխում (հակա-
ռակ ճատիրը կարծիքին) կոոպերացիայի հսկայական նշանակու-
թյունը։ Ճշգրտեցի, բավականաչափ լայն ու խոր կոոպերացի-
ոնա ազդարանությունը նեպի տրապետություն որով—այդ է
այն բոլորը, ինչ հարկավոր է մեզ, վորովհետև այժմ մենք գտել ենք
մասնավոր ճանի, մասնավոր առևտրական ճան, մարգաման։ նրան
պետություն ձեռքով ստուգելու ու փրահսկելու այն տես ճանը,
նրան ընդհանուր ճանը, յենթակիցում այն աստ՝ ճանը, վոր ա-
ռաջ ճատ ու ճատ սոցիալիստների համար վորքաքար էր հանդի-
սանում։

Յեվ հրապարակ, պետություն ինքնառնությունը արտադրության
բոլոր խողոր միջոցների վրա, պետություն ինքնառնությունը — պրո-
լետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի դաշնակցությունը
բազմաձև լինում է մանր ու մանրագույն դուրսացիների հետ, այդ պրո-
լետարիատի դուրսացիություն վերաբերմամբ ունենալից դեկավա-
բություն ապահովումը և այլն, — միթե այս չէ այն ամենը, ինչ
հարկավոր է, վորպեսզի կոոպերացիայից, միմյանց կոոպերացիա-
յից, վոր առաջ մենք արհամարհում ելինք իբրև չարչիություն և
վորը վորոք տեսակետից իրավունք ունենք արհամարհելու նույն-
պես և այժմ նեպի որով, միթե այս չէ այն ամենը, ինչ անհրա-
ժեշտ է լրակատար սոցիալիստական հասարակություն կառուցե-
լու համար։ Սա դեռ էս սոցիալիստական հասարակություն կա-
ռուցումն է, սակայն այս այն ամենն է, ինչ անհրաժեշտ ու բա-
վական է այդ կառուցման համար։

Ահա այս հանդամանքն է, վոր լիովին չի գնահատված մեր
պրակտիկ առնադրություններից ճատերի կողմից։ Մեզ մոտ կոոպերա-
ցիայի վրեժ արհամարհանքով են նայում, առանց հասկանալու, թե
այդ կոոպերացիան վորպես բացառիկ նշանակու թյուն ունի, նախ
սկզբունքային տեսակետից (արտադրության միջոցների սեփական-

նությունը պետություն ձեռքում), յերկրորդ՝ նոր կարգերին
գալուցու համար հնարավոր չափով ավելի պարզ, ձիգ ու
մաքուր ճանապարհով անցնելու տեսակետից։

Իսկ չէ վոր գլխավոր խնդիրը դարձյալ սրանում է։ Այլ բան է
սոցիալիզմը կառուցման համար ամեն տեսակի բանվորական մի-
ություններին մասին ֆանտազիաներ ստեղծել, այլ բան է սոցիալիզ-
մի իրական գործնականորեն այնպես կառուցել, վոր ամեն մի մանր
դուրսացի կտրուղանա մասնակցել այդ կառուցմանը։ Այդ աստի-
ճանին է, վոր այժմ մենք հասել ենք։ Յեվ անկասկած է այն, վոր
հասնելով դրան, մենք դրանից անչափ քիչ ենք ոգտվում։

Նեպին անցնելիս, մենք չափազանցություն մեջ ընկանք վոչ
այն տեսակետից, վոր չափազանց ճատ տեղ տվինք ազատ ար-
դյունադրությունության ու առևտրի սկզբունքին, այլ նեպին անցնե-
լիս չափազանցություն մեջ ընկանք այն տեսակետից, վոր մոռա-
ցանք մտածել կոոպերացիայի մասին, վոր արդեն սկսեցինք մո-
ռացություն տալ կոոպերացիայի հսկայական նշանակությունը, այդ
նշանակու թյան վերը մատնանշած տեսակետներից։

Այժմ մտադր եմ ընթերցողին հետ խոսել այն հարցի մասին,
թե գործնականորեն ինչ կարելի է ու հարկավոր է անել հենց
հիմա, յեննելով այդ կոոպերատիվային սկզբունքից։ Ի՞նչ միջոց-
ներով կարելի է ու հարկավոր է այժմ և յենթ սկսել դարձացնել
այդ կոոպերատիվային սկզբունքն այնպես, վոր բոլորի է յուրա-
քանչյուր համար պարզ լինի նրա սոցիալիստական նշանակությունը։

Կոոպերացիան քաղաքականորեն այնպես պիտի դնել, վոր նա
վոչ միայն ընդհանրապես ու միշտ վորոք արտոնություն ունենա,
այլ և այդ արտոնությունը լինի գուտ գույքային արտոնություն
(բանկային տոկոսի բարձրություն և այլն)։ Կոոպերացիային
հարկավոր է փոխառություն տալ պետական այն միջոցներից, վոր
թեկուզ քիչ, բայց ելի դեբազանցեն այն միջոցները, վոր փոխ ենք
տալիս մասնավոր ձեռնարկություններին, թեկուզ մինչև ծանր ար-
դյունադրությունը և այլն։

Յուրաքանչյուր հասարակակարգ առաջ է գալիս միայն վորոք
դասակարգի ֆրիանսական աջակցության դեպքում կարիք չկա
հիշեցնելու այն հարյուրավոր ու հարյուրավոր միլիոն ուղբերների
մասին, վոր նստել է լազատա կապիտալիզմի ծնունդը։ Այժմ մենք
պիտի գիտակցենք ու իրագործենք այն, վոր ներկայումս այն հա-

սարակաւարդը, վորին սովորականից ավելի պիտի ոժանդակենք
կոռպերատիվային հասարակաւարդն եւ Բայց նրան պիտի ոժան-
դակել այս բառի բուն իմաստով, այսինքն՝ այդ ոժանդակութեան
ներքո բաժանան չի հասկանալ, վոր ամեն մի կոռպերատիվային
ըջանառութեան պիտի աջակցել։—այդ աջակցութեան տակ հարկա-
վոր ե հասկանալ աջակցութիւն այնպիսի կոռպերատիվային ըր-
ջանառութեան, վորին, **ԵՐԱՎԻ, ազգաբնակչոյս իսկական**
մասերն են մասնակցում։ Մրցանակ տալ այն գյուղացուն, վոր
մասնակցում ե կոռպերատիվային ըրջանառութեան, այս անպայման
ճիշտ ֆորմուլա չէ, բայց միեւնոյն ժամանակ ստուգել այդ մաս-
նակցութիւնը, ստուգել նրա գիտակցականութիւնը ու նրա լավո
բակութիւնը—անս ինչուեմ ե հարցի ամենաեղական կետը ցեր
կոռպերատորը գյուղ ե գալիս ե այնտեղ կոռպերատիվ խանութ
հիմնում, հասարակութիւնը, ճիշտն ասած, դրան վոչ մի կերպ չի
մասնակցում, բայց միեւնոյն ժամանակ, սեփական ջանով առաջ-
նորդվելով, կշտապի նրան մասնակցելու փորձ անել։

Այս հարցն ել մի ուրիշ կողմ ունի։ Մենք պետք ե դեռ ես ջատ
քիչ բան անենք «քաղաքակրթված» (ամենից առաջ դրադեմ) յե-
րուպացու տեսակետից, վորպեսզի ստիպենք բոլորին ամբողջովին
մասնակցել կոռպերատիվային ոպերացիաներին, ե մասնակցել վոչ
պատիճ, այլ ակտիվ կերպով։ Իսկապես ասած, մեզ մնացել ե
«Բիայն» մի բան՝ մեր ազգաբնակչութիւնը այնքան «քաղաքակրթ
գարձնել, վոր նա հասկանա կոռպերացիային ամբողջովին մասնակցե-
լու բոլոր ոգուտնրը ե կարգի դնի այդ մասնակցութիւնը։ **«Միայն»**
այս Սոցիալիզմին անցնելու համար մեզ այժմ ուրիշ վոչ մի գեր-
իմաստութիւն հարկավոր չէ։ Սակայն այդ «միայն» կատարելու
համար հարկավոր ե մի ամբողջ հեղաշրջում, վորը ժողովրդիկան մաս-
սայի կուլտուրական զարգացման մի ամբողջ շրջան։ Այդ պատ-
ճառով ել մեզ համար կանոն պիտի լինի՝ վորքան կարելի յե խել-
քին քիչ զուտ տալ ե վորքան կարելի յե քիչ հունար թափել։ Նեպն
այս կողմից առաջադիմութիւն ե հանդիսանում այն տեսակետից,
վոր նա հարմարվում ե ամենասովորական գյուղացու մակարդակին,
վոր նա գյուղացուց զրանից բարձր վոչինչ չի պահանջում։ Բայց
վորպեսզի նեպի միջոցով հասնենք վորը ազգաբնակչութեան ամ-
բողջական մասնակցութեանը՝ կոռպերացիային—անա դեռ համար
պահանջվում ե մի ամբողջ պատմական եպոխտ։ Լալ գնպում այդ

եպոխտ կարող եք անցնել մի յերկու տասնամյակում։ **Բայց** ե
այնպեա այդ մի տասնձին եպոխտ կլինի, ե առանց այդ պատմա-
դան եպոխայի, առանց ընդհանուր գրագիտութեան, առանց բալա-
կանաչափ հասկացողութեան, առանց ազգաբնակչութիւնը գրքույկ-
ներից բաժանանալի ոգտվել վարժեցնելու, ե առանց դրա նյու-
թական հիմքի, առանց վորոշ ապահովութեան, ասենք՝ վատ բեր-
քից, սովից ե այլն, առանց սրան մեր նպատակին հասնել չենք
կարողանալ։ Այժմ ամբողջ խնդիրը նրանումն ե, վոր կարողանանք
այն հեղափոխական թափը, այն հեղափոխական բուն վոգեւորու-
թիւնը, վոր մենք արդեն ցույց ենք տվել ու ցույց ենք տվել բա-
վական չափով ու պսակել ենք լիակատար հաջողութեամբ, կարո-
ղանալ միացնել (այստեղ համարյա պատրաստ եմ ասել) հաս-
կացող ու գրագետ չարչի լինելու հմտութեան հետ, վորը լիովին
բաժանան ել լալ կոռպերատորի համար։ Չարչի լինելու հմտութեան
տակ յեա հասկանում եմ քաղաքակրթ չարչի լինելու հմտութիւնը։
Նա մեկը թող ականջներին ող անեն ուստ մարդիկ կամ սոսկ գյու-
ղացիները, վորոնք մտածում են—վոր առետուր անողը՝ ուրեմն կա-
մող ե չարչի լինել։ Այս ամենին ճիշտ չէ։ Առետուր անելուց մին-
չե քաղաքակրթ չարչի լինելու հմտութիւնը, դեռ ջատ հետու
յե Մեզ մոտ առետուր են անում ասիացու պես, իսկ վորպեսզի
կարողանալ չարչի լինել՝ հարկավոր ե առետուր անել յեկրոպացու
պես։ Սրանից մեզ բաժանում ե մի ամբողջ եպոխտ։

Վերջացնում եմ մի շարք անտեսական, ֆինանսական ո
բանկային արտոնութիւններ— կոռպերացիային, սրանում պիտի
կայանա մեր սոցիալիստական պետութեան աջակցութիւնը ազ-
գաբնակչութեան կազմակերպութեան նոր սկզբունքին։ Բայց սրա-
նով խնդիրը դեռ ընդհանուր դժերով ե գրված, վորովհետեւ այս-
տեղ խնդրի ամբողջ բովանդակութիւնը գործնականորեն, դեռ
անորոշ, մանրամասն չնկարագրված ե մնում, այսինքն հարկավոր
ե գտնել «մրցանակներին» այն ձեր (ե մրցանակները տալու այն
պայմանները), վոր մենք հատկացնում ենք կոռպերացման համար,
մրցանակներին այն ձեր, վորի որով մենք բալարար չափով ժա-
նակում ենք կոռպերացիային, մրցանակներին այն ձեր, վորի որով
մենք հասնում ենք քաղաքակրթված կոռպերատորին։ Իսկ քաղա-
քակրթված կոռպերատորների հասարակաւարդը, յերբ արտադրու-
թեան միջոցները հասարակական սեփականութիւն են կազմում։

յիբբ պրոլետարիատը դասակարգային հաղթանակ և աստիճանաբար բուրժուազիայի դեմ — դա սոցիալիզմի հասարակարգն է:

ՊԼԱՆ ԼԵՆԻՆԻ «ԿՈՍՊԵՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍԻՆ» ՀՈՒՎԱԾԻ

1. Կոսպերացիայի նշանակությունը սոցիալիստական հասարակարգի կառուցման տեսակետից.

ա) նախ՝ սկզբունքային,

բ) Յերկրորդ գործնական տեսակետից:

2. Ինչպես պիտի դնել կոսպերացիան՝

ա) Ֆինանսական ոժանդակություն պետությունից.

բ) Ազգաբնակչության մասնակցության մասնակցությունը.

գ) Գոյություն ունեցող կոոպերատիվներ:

3. Յեզրափակում:

Լավ կարգացե՛ք հողվածը, դիտմամբ մենք ընդգծել ենք հիմնական հարցերը և յենթահարցերը, վերաբերյալ ձեզ ոգնենք հասկանալ և ապա պլան կազմելու ելույթյունն ըմբռնել:

Անցնենք մյուս հարցին:

4. ԽՆՁ Ե ԿՈՆՍՊԵԿՏԸ ՅԵՎ ԽՆՁՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԿՈՆՍՊԵԿՏ (ՀԱՄԱՐԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Կոոպերատիվ կոչվում է կարգացածն իր խոսքերով համառոտակի գրի առնելը: «Կոոպերատիվ կազմելը նշանում է կոոպերացիան, վեր մենք կապակցված կերպով և համառոտակի, հիմնական գծերով, գրի յենք առնում կարգացածի բովանդակությունը, աշխատելով գրել այն, հնչ ուշադրություն արժանի յե, ցուցադրական և և ինքնակրեա մատերիալ ե».— ահա մեթոդիստների բնորոշումը:

Մի ուրիշ բնորոշում, «Կոոպերատիվը պլանի անհրա-

ծեղա լրացումն է կազմում: Գրվածքի կոոպերատիվ կազմելով, մենք յուրացնում ենք նրա բնորոշ մանրամասնությունները, հավաքում ենք նյութի կարևոր փաստական տվյալները և միաժամանակ ունակություն ենք ձեռք բերում՝ կարձ, տրամաբանորեն ու հետևողական կերպով գրի առնել կարգացածը» (Դանիլով):

Վերադառնալ կոոպերատի մասին ասվածը լավ հիշեք և կարողանաք ոգտագործել, մի ուրիշակ բերենք — Համառոտագրենք Վ. Ի. Լենինի «Իմպերիալիզմն իբրև նորագույն ետապ կապիտալիզմի» — գրքի բանկերին վերաբերող կտորը:

ԲԱՆԿԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆՈՐ ԴԵՐԸ

Թե հենց 19-րդ դարում ու 20-րդ դարի սկզբում բանկային գործի կոնցենտրացիան ինչպիսի արագությամբ էր տեղի ունենում Գերմանիայում, յերևում է Ռուսների հետևյալ տվյալներից, վոր մեջ ենք բերում կրճատ ձևով.

Բերլինի 6 խոշոր բանկերն ունեյին՝

Բաժան- մունքներ	Դեպոզիտի գրամարկեր ու	Գերմանական ակցիոներական բանկերում մըջ- տական մասնակ- ցությունները թիվը	Ընդամենը քանի հիմ- նարկու- թյուն
Գերմա- նիայում	գրամարկեր		
1895 թ. 16	14	1	42
1900 21	40	8	80
1911 104	276	63	450

Մենք տեսնում ենք, թե ինչպես արագորեն մեծանում է խիտ ցանցն այս ջրանցքների, վորոնք ընդգրկում են ամբողջ երկրը, կենտրոնացնում են բոլոր կապիտալներն ու զրամական հասույթները և հազարավոր անջատ-անջատ անտեսությունները դարձնում միասնական համադրային կապիտալիստական տնտեսություն, իսկ ապա համաշխարհային կապիտալիստական տնտեսու-

Թյուն: Այն «ապահանսարդացումը», վորի մասին խոսում եր Շուլցե-Գե-Գեվերնիցը վերևում բերված ցիտատում մեր որերի բուրժուական քաղաքատնտեսության անունից, եյապես այն ե նշանակում, վոր մեկ միասնական կենտրոնի յեն յենթարկվում ավելի ու ավելի բազմաթիվ տնտեսական միավորներ, վորոնք առաջ համեմատաբար «անկախ» եյին կամ, ավելի ձիջտը, ինքնամիտի եյին ըստ վայրի: Գործնականապես այս նշանակում ե կենտրոնացում, ուժեղացումն մոնոպոլիստական հսկաների դերի նշանակություն, հզորություն:

Ավելի հին կապիտալիստական յերկրներում այս «բանկային ցանցն» ել ավելի խիտ ե: Անգլիայում, Իրլանդիայի հետ՝ բոլոր բանկերի բաժանմունքների քանակը 1910 թվականին հաղվում եր 7,151: Չորս խոշոր բանկեր յուրաքանչյուրն ունեյին 400 բաժանմունքից ավելի (447-ից մինչև 689-ը), այնուհետև ելի 4-ը 200-ից ավելի ու 11-ը՝ 100-ից ավելի:

Ֆրանսիայում 3 խոշորագույն բանկեր — «Credit Lyonnais», «Comptoir National ու «Cociété Générale» — իրենց գործառնություններն ու իրենց բաժանմունքների ցանցը զարգացնում եյին այս կերպ:

ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բաժանմունքների ու գան-ձարկոնների թիվը

Իր կապի-տալինը

Ուրիշնե-րինը

Գավառում	Պարիզում	Ընդամենը	(Միլիոն ֆրանկով)
1870 թ. 47	17	64	200
1890 192	66	258	265
1909 1,033	196	1,229	887

Ժամանակակից խոշոր բանկի «կապերը» ընդլայնվում ե համար Ռիսսերը բերում ե տվյալներ այն նամակների թվի մասին, վոր ուղարկում ե ու ստանում «Զեդլման Ընկերությունը» («Disconto-Gesellschaft»), Գերմանիայի ու ամբողջ աշխարհի ամենամեծ բանկերից մեկը (նրա կապիտալը 1914 թվին հասնում եր 300 միլիոն մարկի):

Ստացած նամակների

Ուղարկած նամակների

	Թիվը	Թիվը
1852 թ.	6,135	6,292
1870	85,800	87,513
1900	533,192	626,043

Պարիզի «Լիոնի վարկ» անունով խոշոր բանկում 1875-ին հասի ֆեբրի թիվը 28,535 եր, իսկ 1912-ին հասավ 633,539-ի:

Այս հասարակ թվանշանները յերկար կշռադատություններինց ավելի ակնառու յեն ցույց տալիս, թե ինչպես բանկերի կապիտալի կոնցենտրացիայի ու զրջանառությունների աճման հետ արմատապես փոխվում ե այս բանկերի նշանակությունը: Անջատանջատ կապիտալիստներից գոյանում ե մեկ կոլեկտիվ կապիտալիստ Բանկը մի բանի կապիտալիստների համար ընթացիկ հաղիվ վարկով՝ կարծես թե զուտ տեխնիկական, բացառապես ոժանդակ գործառնությունն աճում ու հասնում ե հսկա չափերի, ապա բաննից դուրս ե դալիս, վոր մի բուռ մոնոպոլիստներ իրենց են յենթարկում ամբողջ կապիտալիստական հասարակության առևտրա-արդյունաբերական գործառնությունները, հնարավորություն ստանալով բանկային կապերի միջոցով, ընթացիկ հաղիվ ու ֆինանսական այլ գործառնություններ միջոցով նախ՝ ստույգ անդեկանալ առանձին կապիտալիստների գործերի՝ դրուժյան մասին, ապա՝ վերահսկողության յենթարկել սրանց, ազդել նրանց վրա վարկն ընդլայնելու կամ սեղմելու, դուրացնելու կամ դժվարացնելու միջոցով և վերջապես՝ ամբողջովին վորոշել նրանց բախտը: Վորոշել նրանց հաստիքաբերությունը, զրկել սրանց կապիտալից կամ սրանց կապիտալի արագորեն ու վիթխարի չափերով մեծացնելու հնարավորություն տալ և այլն:

Սրա հետ միասին զարգանում ե բանկերի այսպես ասած անձնական ունիան (կապը, միությունը) արդյունաբերություն ու առևտրի խոշորագույն ձեռնարկությունների հետ, զարգանում ե բանկերի ու ձեռնարկությունների ձուլումը շնորհիվ այն հանգամանքի, վոր տիրանում են ակցիաներին, բանկերի գերեկտորները մտնում են առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների հսկիչ խորհուրդներ (կամ վարչությունների) մեջ իբրև անդամ և ընդհակառակը: Գերմանացի տնտեսագետ Եյդելսոն ամենամանրամասն տվյալներ ե հավաքել կապիտալների ու ձեռնարկությունների կոնցենտրացիայի այս ձևի մասին: Բերլինի 6 խոշորագույն բանկեր, ի դեմս իրենց գերեկտորների ներկայացուցիչներ ունեյին 344 արդյունաբերական ընկերությունների մեջ, հանձին իրենց վարչու-թյան անդամների՝ դարձյալ 407-ի մեջ, ընդամենը 751 ընկերու-թյան մեջ: 289 ընկերությունների մեջ նրանք ունեյին հսկիչ խորհուրդների յերկուական անդամ կամ նրանց նախագահներին տեղեր:

Նյա Կառնա-Արդյունաբերական ընկերությունները թվում մեծ թանկությամբ ենք արդյունաբերության ամենաբազմազան ճյուղեր, թե ապահովարական գործը, թե հաղորդակցություն ճանապարհներ, թե ճաշարաններ, թե թատրոններ, թե գեղարվեստական արդյունաբերություն և այլն Մի կողմից՝ Նույն այս 6 բանկը հսկի խորհուրդների մեջ (1910 թ.) կային 51 խոշորագույն արդյունաբերողներ, վորոնց թվում՝ Կրուպա ֆլեմայի գերեկատորը, «Hapag» (Hamburg-Amerika) վրթարի ղոգենապային ընկերություն գերեկատորը և այլն, և այլն: 1865-ից մինչև 1910 թվին այս 6 բանկից յուրաքանչյուրը մասնակցել և հայուրավոր արդյունաբերական ընկերություններ, այն է՝ 281-ից մինչև 419 ընկերություն համարակցյանը ու որըդացիաներ բաց թողնելու գործին:

П Р Т Ъ У Ы

Գ Լ ա ն	Կ ո ճ օ պ ե կ ա
1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱ- ԿԵՆՏՐՈՆԱ- ՑՈՒՄԸ:	Բանկային գործը XIX դարի ընթաց- քում և XX սկզբներում արագորեն հա- մալենարոնանում և Անուժ են բաժանմունք- ները, արագորեն աճում և նույնպես բանկային

Պ Լ ա ն	Կ ո ն ս ա ղ ե կ տ
2. ԱՐԴՅՈՒՆ ԱԲԵ- ՐՈՒԹՅԱՆ ՅՆԵ- ԹԱՐԿՈՒՄԸ ԲԱՆԳԵՐԻՆ:	կապիտալն ու նրա կատարած շրջանառու- թյունը: Այսպես՝ ֆրանսիական 3 խոշորագույն բանկերում 1870-ից մինչև 1909 թ. իրենց բա- ժանմունքների թվին ավելացրին 20 անգամ (61-ից 1,229-ի հասցրին իրենց կապիտալը), իսկ ավանդ դրված գումարները ավելացան 10 անգամ: Այսպիսով ցան ու ցիր կապիտալիստ- ները անսփայլ մի հավաքական կապիտա- լիստ—բանկը:
3. ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ Ա- ՌԵՎՏՐԱ-ԱՐ- ԴՅՈՒՆԱԲԵՐԱ- ԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԵՏ:	Սկզբներում վարելով արդյունաբերական ձեռնարկների ընթացիկ և այլ հաշիվները, բան- կերը նախ լավ ծանոթանում են նրանց դոր- ծերին, ապա «կուտ» են վերահսկել և վերջա- պես նրանց վարկերի դժվարացման ու հեռաց- ման մշտնջենդով, դառնում են նրանց բախտի տոբերնը:
4. ԲՈՒՐԺՈՒԱ- ԿԱՆ ՅԵՐԿՐԵ- ՐԻ ՊԵՏՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՒ ՆԻԱՆՆԵՐ:	Առաջադրություն. Ինքդ այս կոնսպեկտը ավարտիր:
5. ՅԵՋՐԱԿԱՅՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ:	

«Թեզիսներ կոչվում են դրքի կամ հոդվածի և կամ գեկուցման հիմնական դրույթների կարճ ու վորոշակի ձևակերպումը» (Ուստինով):

«Թեզիսներն նպատակն են դուրս քաշել ամբողջ գրք-վածքից ամենահիմնական և գլխավոր մտքերը և շատ կարճ ու ամբողջական ձևով գրի առնել» (Միչեվա):

Կոնսպեկտի և թեզիսի տարբերությունը հաջող կերպով տալիս է Զարդուտսկին, նա ասում է.

1. «Կոնսպեկտն աշխատում է արտահայտել վոչ միայն բնագրի հիմնական մտքերը, այլև այդ մտքերի կապը միմյանց հետ: Իսկ թեզիսները միայն հիմնական դրույթներն են, հիմնական մտքերը՝ պարզ, վորոշակի դրած:

2. «Կոնսպեկտն ավելի յե կրում իր վրա բնագրի կնիքը, նրա մեջ կարելի յե մտցնել տեքստի փալտուն որինակները և արտահայտությունները:

3. «Կոնսպեկտը պահպանում է բնագրի մասերի բա-ժանումը, իսկ թեզիսը կազմվում է ըստ հիմնական մտքերի. ամեն թեզում մի միտք է արտահայտվում:

4. «Կոնսպեկտը նպատակ ունի բնագիրը հիշողու-թյան մեջ պահել, թեզիսը, բացի դրանից, այլ հիմ-քեր է առաջադրում գիսկուսիացի համար:

5. «Կոնսպեկտը սեղմում, համառոտագրում է աշ-խատությունը: Իսկ թեզիսները հիմնական դրույթներն են առանձնացնում, դուրս քաշում»:

Այսքան բացատրություններից հետո ներքևում տպում ենք Լինինի հոդվածը — «Մոսկվայի ապստամ-բությունը դասերը» — և վերածում՝ պլանի, կոնսպեկտի և թեզիսների:

Բանվորական կուսակցության եյական անելիքը պիտի լինի գեկտեմբերյան ապստամբության վորձի յուրացումը:

Գեկտեմբերյան շարժումները գլխավոր ձևը, Մոսկվայում, խաղաղ գործադուլները և ցույցներն էլին: Բանվորական մասսա-ները հակա մեծամասնությունը ակտիվ կերպով մասնակցում եր պայքարի միայն այդ-ձևերին:

Բայց, հենց Մոսկվայի գեկտեմբերյան յեկույթն եր, վոր ակն-հայտ կերպով ցույց տվեց, վոր ընդհանուր գործադուլը, իբրե պայքարի գլխավոր և ինքնուրույն մի ձև, արդեն անպետքացել է, վոր շարժումը տարերայնորեն, սրընթաց կերպով, դուրս է դա-լիս նեղ շրջանակներից և վեր է ածվում պայքարի ամենաբարձր ապստամբության:

Բոլոր հեղափոխական կուսակցությունները, Մոսկվայի բոլոր արհմիությունները գործադուլ հայտարարեցին. նրանք գիտակցում էին և համոզվում, վոր գործադուլը պիտի վերածել ապստամ-բության:

Բանվորական ներկայացուցիչները խորհուրդը գեկտեմբերի 8-ին վորոշեց. «Զգալի գործադուլը վերածել զինված ապստամբության»:

Բայց իրականում Բոլոր կազմակերպությունները դեռ պատ-րաստ չէին դրան. նույնիսկ ռազմական ուժերը կոալիցիոն (խառը) խորհուրդը ապստամբության մասին (գեկտեմբերի 9-ին) դատում եր իբրե մի առանձնակի յերևույթի և հետադայում վոր-դոցային կռիվները, անկասկած է, վոր դնում էին առանց նրա մասնակցության և նրա գլխի վրայով:

Կազմակերպությունները հետ մնացին շարժման աճուսից և թափեց:

Գործադուլն աճելով փոխվեց ապստամբության ամենից առաջ այն ուղեկալով պայմանների ճնշման տակ, վորոնք առաջ էին յե-կել հեկտեմբերից հետո: Կառավարության արդեն չեր կարելի հանկարծակի բերել ընդհանուր գործադուլով. նա արդեն կազմա-կերպել եր ռազմական գործողությունները համար պատրաստ հա-կահեղափոխությունը: Յեվ ուսական հեղափոխության ընդհա-նուր ընթացքը հեկտեմբերից հետո և Մոսկվայի անցքերի հաջոր-դականությունը գեկտեմբերյան որերու ապստամբության կերպով:

հաստատեցին Մարքսի ամենախոր մտքերից մեկը, թե հեղափոխությունը առաջ է դնում նրանով, վոր ստեղծում է համախմբված ու ամուր հակահեղափոխություն, այսինքն հարկադրում է թշնամուն շարունակ պաշտպանության ավելի ծայրահեղ միջոցների դիմել և այդպիսով մշակում է շարունակ հարձակման ավելի հեղուկ միջոցներ:

Դեկտեմբերի 7-ին և 8-ին խաղաղ գործադուլ, մասսաների խաղաղ ցույց 8-ի յերեկոյան Ալվարիումի պաշարումը 9-ի ցերեկը դրադուկները Մտրաստնայա հրապարակում ծեծում ելին ամբոխին: Յերեկոյան Ֆիդելերի տան ավերումը: Տրամադրությունը բարձրանում է: Փողոցային, անկաղձակերպ մասսան բոլորովին տարբերային կերպով ու անվստահությամբ շինում է առաջին բարրիկադները:

10-ին թիւանոթները սկսում են կրակել բարրիկադների ու փողոցի ամբոխի վրա: Բարրիկադները կառուցում են վստահությամբ և արդեն վոչ հատ-հատ, այլ անպայման մասսայորեն: Ամբողջ բնակչությունը փողոցներում է, ամբողջ քաղաքը իր գլխավոր կենտրոններում ծածկվում է բարրիկադների ցանցով: Միջանի որվա ընթացքում ծավալվում է հեղափոխականների համառ պարտիզանական կռիվը գործի հետ, կռիվ՝ վոր հոգնեցրեց գործերին և հարկադրեց Դուբասովին¹⁾ աղերսել, վոր ողնական գործ հասցնեն: Միայն դեկտեմբերի 15-ին կառավարական ուժերի դերակազմությունը լրակատար դարձավ և 17-ին Սեմյոնովյան գունդը ջախջախեց Պրեսնյան, ապստամբության վերջին պատվարը:

Գործադուլից և դեմոնստրացիայից դեպք հատ-հատ բարրիկադներ: Հատ-հատ բարրիկադներից դեպք բարրիկադների մասսայական կառուցումը և փողոցային կռիվը գործի հետ կազմակերպությունների գլխի վրայով պրոլետարական մասսայական կռիվը գործադուլից ապստամբության անցավ: Սրա մեջ է ռուսական հեղափոխության մեծագույն պատմական նվաճումը, վորին հասավ 1905 թ. դեկտեմբերը, նվաճում, վոր դնվեց, ինչպես և բոլոր նախորդները, մեծագույն գոհերի գնով: Շարժումն ընդհանուր քաղաքական գործադուլից հասավ բարձրագույն ստորձանի: Նա

1) Դուբասով, Վ. Ֆ. — աղմիրալ, Մոսկվայի գեներալ-նահանգապետ Մոսկվայի 1905 թ. դեկտեմբերը գինված ապստամբությունը նշողը:

հարկադրեց ռեակցիային ընդդիմադրություն մեջ միանալ վերջը գնալ և դրանով հսկայական չափով մոտեցրեց այն մոմենտը, յերբ հեղափոխությունը հարձակման միջոցները գործադրելիս նույնպես մինչև վերջ կհաննի: Ռեակցիան ուրիշ անելիք չունի, քան բարրիկադների, տների և փողոցային ամբոխի վրա թիւդանոթ կրակելը: Հեղափոխությունը Մոսկվայի ապստամբներից հետո ուրիշ ուղիներ դեռ չատ ունի, նա կարող է ստաթծվել ըստ լայնություն ու ըստ խորություն: Յեվ հեղափոխությունը շատ ու շատ առաջ է գնացել դեկտեմբերից: Հեղափոխական կրիզիսի հիմքն անչափելի կերպով ավելի լայնացել է, — քրի բերանը պետք է այժմ տվել սրել:

Կովի ուրիկտիվ պայմանների փոփոխությունը, վոր պահանջում էր գործադուլից ապստամբության անցնել, պրոլետարիատն ավելի շուտ գաղց, քան իր դեկավայները: Ինչպես միշտ, պրակտիկան գնում էր թեորիայի առաջից: Ուղաղ գործադուլը և ցույցը միանգամից դադարեցին բավարարել բանվորներին, վորոնք հարցնում էին՝ իսկ հետո ի՞նչ, վորոնք պահանջում էին ավելի ակտիվ գործողություններ: Բարրիկադներ կառուցելու դերակազմը առանձնանում ստացվեց խիստ ուշ, յերբ կենտրոնում արդեն կառուցում էին բարրիկադներ: Բանվոր մասսաները գործի դիմեցին, բայց չբավարարվեցին դրանով և, հարցնում էին՝ իսկ հետո ի՞նչ, պահանջում էին ակտիվ գործողություններ: Մենք, սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատի ղեկավարներս, դեկտեմբերին նմանվեցինք այն գործավարին, վորն այնպես անմիտ կերպով երդասավորել իր գնդերը, վոր նրա գործը մեծ մասը ակտիվ կերպով չէր մասնակցում ճակատամարտին: Բանվոր մասսաները փնտռում էին ու չէին գտնում ակտիվ մասսայական գործողություններին վերաբերող դիրեկտիվներ:

Այսպիսով չկա ավելի կարճատև բան, քան բոլոր ուպորտունությունների կողմից վորդեղրած Պլանովի այն հայացքը, թե պետք չէր սկսել անմիջապես գործադուլը, թե պետք չէր գնդի դիմել: Ընդհակառակը, պետք էր ավելի վճռական, յեռանդով ու հարձակողաբար գնդի դիմել, պետք էր պարզաբանել մասսաներին լուի միայն խաղաղ գործադուլի անկարելիությունը և անվախ ու անխաղաղ զինված կովի անհրաժեշտությունը: Յեվ այժմ մենք պետք է վերջապես բաց և իլուր մանք ընդունենք քաղաքական գործադուլների անբավարությունը, պետք է ամենալայն մաս-

վեց ճառ Ենսվիթսկի կաղարամների առաջ, և՛ Գրուտիցկի առաջ, և՛ յեկատերինսաւրաւյաններն ճանելու՝ պրոլետարիատի փորձի ժամանակ, և՛ սապյորների մոտ Ալեքսանդրով պատգամավոր ուղարկելու ժամանակ, և՛ Մոսկվա ուղարկած ռուստոլյան արտիլ-լերիայի հետ վերադարձնելու ժամանակ, և՛ Կալոմնայում՝ սապյորների ղեկավարելու ժամանակ, և այլն: Ապստամբութեան մոմենտում մենք կանգնած չեյինք հանուն տատանվող զորքի կռիւ-լու խնդրի բարձրութեան վրա:

Դեկտեմբերն ակնառու կերպով հաստատեց ոպորտունիստ-ների կողմից մոռացված Մարքսի մի խոր սկզբունքը ևս, թե ապստամբութիւնն արվեստ է, և թե այդ արվեստի գլխավոր կանոնը հուսահատորեն համարձակ, անդարձորեն վճռական **հար-ձակումն է**: Մենք բավականաչափ չենք յուրացրել այդ ճշմար-տութիւնը: Մենք ինքներս բավականաչափ չեյինք սովորել և մասսաներին չեյինք սովորեցրել այդ արվեստը, այդ հարձակման կանոնը, ինչ ել վոր կռիւի լինի: Մենք ձեռքից բաց թողածը այժմ ամենայն յեռանդով պետք է հետ դարձնենք: Բաւական չեն քաղա-քական լոգոնոզներին վերաբերմամբ խմբավորումներ, անհրաժեշտ են նաև զինված ապստամբութեան վերաբերմամբ խմբավորումներ: Ով դեմ է նրան, ով չի պատրաստվում նրա համար, նրան պետք է անխնայ կերպով դուրս չպրտել հեղափոխութեան կողմնակիցնե-րի թվից, չպրտել հեղափոխութեան հակառակորդների, դավաճան-ների կամ յերկշտների կողմը, վորովհետև մոտենում է որը, յերբ անցքերի ուժը, յերբ կռիւի պարագան կհարկադրի մեզ ըստանել թշնամիներին ու բարեկամներին ըստ այս նշանի: Վնչ թե կրա-վորակամութիւնն պիտի քարոզենք մենք, վնչ թե հասարակ ռուսա-մունքն՝ այն բանի, թե յերբ «կանցնի» զորքը, վնչ, մենք պետք է բոլոր դանդիւր դանդաճարներ, թե անհրաժեշտ է դենք ձեռքի հանդուգն հարձակման ու արշավանքի դիմել: Թե անհրաժեշտ է ընդամեն իսկանաւոր անձերին բնաջնջել և ամենայնուհետն կեր-պով կռիւի հանուն տատանվող զորքի:

Յերրորդ մած դասը, վոր ավեց մեզ Մոսկվան, վերաբերում է տակտիկային և ուժերի կազմակերպմանը ապստամբութեան հա-մար:

... Մոսկվան առաջ քաշեց ռուս բարիկադային զուգի-կան: Այդ տակտիկան պարտիզանական պատերազմի, տակտիկան էր: Այդպիսի տակտիկայով պայմանավորված կազմակերպութիւնը

նը շարժուն և չափազանց մաշը ջոկատներն էյին՝ առանյակները, յեպյակները, նույնիսկ յերկայակները:

... Մոսկվան առաջ քաշեց այն (նոր բարիկադային տակ-տիկան), բայց ամենէին չդարգացրեց, ամենէին չբարգավաճեց այն քիչ-շատ լայն, իրոք մասսայական չափերով: Ապստամբների խմ-բերը քիչ էյին, բանվոր մասսան համարձակ հարձակումների լո-գոնոզը չստացավ ու չգործադրեց այն, պարտիզանական ջոկատ-ների բնույթը չափազանց միատեսակ էր, նրանց զենքը և նրանց գործողութեան ձևերը բավական չեյին, ամբոխին դեկավարելու նրանց կարողութիւնը համարյա զարգացած չէր: Մենք պետք է այս բոլորը հետ ստանանք և մենք հետ կստանանք, սովորելով Մոսկվայի փորձից, տարածելով այդ փորձը մասսաների մեջ, հենց մասսաների ստեղծագործութիւնը հրավիրելով այդ հետագա փոր-ձի զարգացման գործում: Յեւ այն պարտիզանական պատերազմը, այն մասսայական տերրորը, վոր դեկտեմբերից հետո ամենուրեք համարյա անընդհատ տիրում է Ռուսաստանում, անկասկած ա-պստամբութեան մոմենտում կոչեն ճիշտ տակտիկա սովորեցնե-լու մասսային: Սոցիալ-դեմոկրատիան պետք է ճանաչի և ընդու-նի իր տակտիկայի մեջ այդ մասսայական տերրորը, հարկավ կազ-մակերպելով ու վերահսկելով այն, յենթարկելով այն բանվորա-կան շարժման և ընդհանուր հեղափոխական կռիւի շահերին ու պայ-մաններին...

... Հիշենք, վոր մոտենում է մասսայական կռիւը: Այդ դին-ված ապստամբութիւնը կլինի Նա ըստ հնարավորին միաժամա-նակ պետք է լինի: Մասսաները պետք է իմանան, վոր նրանք գնում են դեպի զինված, տրյունոտ, հուսահատ կռիւ: Արհամար-հանքը դեպի մահը պետք է տարածվի մասսաների մեջ և ապահո-վի հաղթանակը: Ամենայնուհետն կերպով պետք է վրա ընկնել թշնամուն, հարձակումը և վնչ թե պաշտպանութիւնը պետք է դառնա մասսաների լոգոնոզը, թշնամու անխնայ բնաջնջումը դառ-նալու յե նրանց խնդիրը. կռիւի կազմակերպութիւնը կլինի ավե-լի շարժուն ու ճկուն. զորքի տատանվող տարրերը ներս կքաշվեն ակտիվ կռիւի մեջ: Դիտակից պրոլետարիատի կուսակցութիւնը պետք է իր պարտքը կատարի այդ կռիւում:

(Հատոր VII, մասն 2. էջ 47—53. Մոսկվայի
ապստամբութեան դասերը. 1906 թ. ոգոստոսի 29):

Պ 1 ա ն	Կ ո ն ա պ ե կ տ	Ք ե դ ի ս ն ե ր
1. ԴԵՎՏԵՄԲԵ- ՐՅԱՆ ԱՄՍԱՄԲՈՒ- ՔՅԱՆ ՓՈՂՁԸ ՌԳՏԱ- ԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ	Բանվորական կուսակցության թիշունը պիտի խորհի և յուրացնի Մոսկվայի ասպլուտամբուսիայան դասերը:	1. Բանվորական կուսակցության երկու անհատները պիտի լինեն գեկտեմբերյան ասպլուտամբուսիայան դասերի յուրացումը:
2. ԱՄՍԱՄԲՈՒՔՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԸ	Դեկտեմբերյան ջարժումները գլխավոր ձևը Մոսկվայում խաղաղ գործադուլները և ցույցերն ենլին: Բայց հենց Մոսկվայի դեկտեմբերյան յիսույթն եր, վոր ահնայտ կերպով ցույց տվեց, վոր ընդհանուր գործադուլը, իբրև պայքարի գլխավոր և ինքնուրույն մի ձև, արդեն անպիտքացել և Յեվ այժմ մենք պիտք են վերջապես բաց, ինչը ամենքի ընդունենք քաղաքական գործադուլների անբավարարությունը, յիշուել, պիտք և ամենայն մաստանկում ագիտացվա անենք հոգուս զինված ասպտամբուսիայան:	2. Մոսկվայի դեկտեմբերյան յիսույթը ցույց տվեց, վոր ընդհանուր գործադուլը, իբրև պայքարի գլխավոր և ինքնուրույն մի ձև, անպիտքացել և, վոր ջարժումը, տարիորայորեն վեր եր ամսվում պայքարի ամենաբարձր ձևով, զինված ասպտամբուսիայան:

3. ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԸ

Անհրաժեշտ և զաղափարապետ ճշգրիտ կելք գործերը Բայց ասպտամբուսիայան ժամանակ չի կարելի ասպանել միջին ասքող բանակը հեղափոխական դասնա, ընդհանուր, անհրաժեշտորեն ֆիզիկական պայքար պիտի մղել՝ վոչինչ ցանցնելով հրամանատարական կազմին և ամբողջ տատանվող գործին:

Պիտի հիշել Մարքսի սկզբունքը, թե ասպտամբուսիայան արվեստ և թե այդ արվեստը գլխավոր կանոնը հուսանատրեն-համարձակ անդադներեն-վճռական հարձակում և չափազանց մանր

4. ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԸ

Ռազմական տեխնիկայից և կարված ասպտամբուսական ուժերի տակտիկան ու կառավարումը: Մոսկվայի ասպտամբուսիայան և առաջ քաշեց պարտիզանական պատերազմը տակտիկան: Այդպիսի տակտիկայով պայմանավորված կազմակերպությունը ջարժուն և չափազանց մանր ջոկատներն ենլին՝ տառնյալներ, խոյակներ, նույնիսկ յերկակներ:

3. Ասպտամբուսիայան ժամանակ չի կարելի ասպանել միջին և ինքն բանակը անցնի ժողովրդի կողմը: Անհրաժեշտ և համարձակ համարձակորեն, զենքը ձեռքին հարձակվել, անհրաժեշտ և ամենախառնուրդ պայքար մղել ամբողջ տատանվող բանակին, միայն ժամանակ վոչնչացնելով հրամանատարական կազմը:

4. Վերդիտե ասպտական տակտիկան կարված և ասպտական տեխնիկայից, ուղեմիս պիտք են՝ ասպլուտամբուսիայան Մոսկվայի ասպտամբուսիայան ժամանակ յուրաքանչյուր պայքարի պատերազմը, ասպտակներ և յերկրորդ-ոգտագործել տեխնիկայի կառավարումը, անհրաժեշտ և ինքնուրույն ասպտական

ընցնել ուսմանը պատրաստել, ուսնենալ ավտոմատ հրացաններ և այլն	Վերոյնիստե ուսումնական տեխնիկական վերջին բաժնի և առաջադիմել՝ արտագրելով ձեռքի ուսմանը և ավտոմատ հրացաններ, ուստի բաժնի տեխնիկական և արտագրելով սովորեցնել մասնաճյուղի համար ուսմանը պատրաստել և ուսնենալ ավտոմատ հրացաններ
5. ՅԵՋՈՒՓԱԿՈՒՄ	

Յեղբայրակցությունը, վոր ամբողջ հողվածի ավտոմատ և տալիս, որված և հողվածի վեղ ջուր և սկսվում է. զեղեցիք, վոր մոտենում է մասնագրական մեծ կոնվերս:

Բացի կոնսպեկտից, թեղիսները, յերբեմն անհրաժեշտ է լինում գրի առնել գրքի հիմնական մտքերը, փաստերը, այլ տվյալները: Շատ-շատերը հնարավորություն չունեն իրենց կարգացած կարևոր գրքերը գնելու: Ուրեմն պետք է ունենան առանձին տետրակ, վորտեղ պետք է գրի առնեն հիմնական նյութերը. այդպիսի աշխատանքը, կարգացած գրքի նյութերի սեղմած գրի առնելը, կոչվում է աշխատանքային հուշագիր կազմել: Ստորև տպում ենք Լենինի գրած Կ. Մարքսի կենսագրությունը (Գրադատի հանրագիտականի համար) և այնուհետև կազմում ենք—պլան և աշխատանքի հուշագիր միաժամանակ:

Կ Ա Ր Լ Մ Ա Ր Ք Ս

Կենսագրական

Մարքսը ծնվել է 1818 թվականի մայիսի 5-ին Պրուսիայի Մերձոկսյան Տրիր քաղաքում: Նրա հայրը փաստաբան էր, հրեա, վորը 1824 թվականին բողոքականություն ընդունեց: Ընտանիքն ունենր ու քաղաքակրթ էր, բայց վաղ հեղափոխական: Հայրենի քաղաքի գիմնադրան ավարտելով, Մարքսը մտավ Նախ Բոնի, ապա Բերլինը համալսարանը, ուր իրավական դոկտորությունը և առաջնակարգ պատմություն ու փրկությունություն էր սովորում: 1841 թվականին նպահվելով փրկությունություն ընդունելու մը գլխավորությամբ ու կուրսն ավարտեց:

Իր հայացքներով Մարքսն արդեն այն ժամանակ հեղափոխական էր, իդեալիստ Բերլինում նա հարում էր «ձախ հեղափոխանների» (Բրունո Բաուեր և այլն) խմբակին, վորի անդամները ձգտում էին հեղափոխություն փրկությունությունից աթերտական ու հեղափոխական յեղափոխություններ հանել:

Համալսարանն ավարտելուց հետո Մարքսը Բոն տեղափոխվեց պրոֆեսոր դասնալու մտադրությամբ: Բայց կառավարության ռեակցիոն պոլիտիկան, վոր 1832 թվականին Լյուդվիգ Ֆրեյբախին գրեց ամբողջ է. 1837-ին կրկին նրան համալսարան չվո-

դեց ու 1841-ին յերիտառարդ պրոֆեսոր Բրուսո Բաուերից խնայ
Բոնում դասախոսութիւններ կարդալու իրավունքը, ստիպեց
Մարքսին հրաժարովի գիտական կարիերայից: Այդ միջոցին ձախ
հեղեղական հայացքներ զարգացումը շատ արագ եր առաջ դնում:

Լյուդվիգ Ֆեյերբախը, մանավանդ 1836 թվականից վեր, սկը-
սում է քննադատել թեոլոգիան և թեքվում է դեպի մատերիալիզ-
մը, վոր լիովին սկսեց իշխել նրանում 1841 թվականին (Վերտ-
տոնեոլոգիան եյութիւնը): 1843 թվականին լույս տեսան նրա իսկ
Վալդաւայի փրկիստփայութեան հիմնական դրութիւնները: «Պետք
էր զգալ ու ապրել այդ գրքերի ազատագրող ազդեցութիւնը»,
գրում էր հետագայում Ենգելսը Ֆեյերբախի հիշյալ գրվածքների
մասին,— մենք (այսինքն ձախ հեղեղականներս, նույն թվում է
Մարքսը) իսկույն ֆեյերբախականներ զարձանքս:

Այդ ժամանակ Ռեյնի ռադիկալ բուրժուականները, վորոնք ձախ
հեղեղականների հետ չփման վորոշ կետեր ունեյին, Բյոլն քաղա-
քում մի ուղիղցիոն թերթ հիմնեցին — «Ռեյնի թերթը» (լույս
տեսնել սկսեց 1842 թվականի հունվարի 1-ից): Մարքսն ու Բրու-
սո Բաուերն այդ թերթի գլխավոր աշխատակից հրավիրվեցին, իսկ
1842 թվականի հոկտեմբերին Մարքսը գլխավոր խմբագիր դար-
ձավ ու Բոննից Բյոլն տեղափոխվեց: Մարքսի խմբագրութեան ո-
րով թերթի հեղափոխական գեմոկրատիկ ուղղութիւնը, դնալով,
ալիւն ու ալիւն վորոշ դարձալ, և կառավարութիւնը նախ թեր-
թը կրկնակի ու յեռակի ցենզուրի յենթարկեց, ապա 1843 թ. հուն-
վարի մեկին վճռեց բոլորովն դադարեցնել: Մարքսն այդ միջո-
ցին ստիպվեց թողնել խմբագրութիւնը, բայց այդ էլ չփրկեց
թերթը, և նա փակվեց 1843 թվականի մարտին: Լրագրային աշ-
խատանքը Մարքսին ցույց տվեց, վոր նա բավականաչափ լավ չի
ծանոթ քաղաքատնտեսութեան, դրա համար նա իսկույն ձեռք
գարկեց քաղաքատնտեսութեան ուսումնասիրութեան:

1843 թվականին Երեյնախում Մարքսն ամուսնացալ Զննի
Ֆոն-Վեստֆալենի հետ, վորն իր մանկական ընկերուհին էր և վո-
րի հետ ինքը դեռ ուսանող ժամանակ նշանված էր: Մարքսի կինը
պրուսական ռեակցիոն ազնվական ընտանիքից էր: Նրա մեծ յեղ-
բայրը ամենառեակցիոն պատմադրճաններից մեկում այն է 1850—
58 թվականներում Պրուսիայի ներքին գործոց մինիստր եր: 1843
թվի աշնանը Մարքսը Փարիզ գնաց, վորպէսզի արտասահմանում
Անտուդ Ռուզեյէ հետ միասին ռադիկալ ժուրնալ հրատարակի:

Լույս տեսալ այդ ժուրնալի միայն առաջին համարը «Գերմանա-
ֆրանսական Տարեգիր» վերնագրով: Դադարեց նա Գերմանիայում
գաղտնի տարածելու դժվարութեան և Մարքսի ու Ռուզեյէի միջև
ժադած տարաձայնութիւնների պատճառով: Այդ ժուրնալում գրած
իր հոդվածներում Մարքսն արդեն հանգես է դալիս իբրև հեղա-
փոխական, աղդարարելով, վոր անխնա կերպով պլախ քննադատե
«բոլոր գոյութիւն ունեցող կարգերը» և՛ արդեն մասսաներին ու
պրոլետարիատին դիմելով:

1844 թվականի սեպտեմբերին մի քանի որով Փարիզ յեկալ
Յերիլիս Ենգելսը, վորն այդ ժամանակից Մարքսի ամենամտերիմ
ընկերը դարձալ: Մարքսն ու Ենգելսը՝ յերկուսն էլ ամենաջերմ
մասնակցութիւն ցույց տվին Փարիզի այդ չրջանի հեղափոխա-
կան խմբակների յեռու կյանքին (այդ միջոցում այնտեղ առան-
ձին նշանակութիւն էր ստացել Պրուզոնի ուսմունքը, վորի հետ
Մարքսն իր հաշիֆերը վճռական կերպով վերջացրեց իր «Փրկիստ-
փայութեան խեղճութիւն» գրվածքում 1847 թվականին) և մանր-
բութական տարբեր ուսմունքների դեմ բուռն կրիվ մղելով, հե-
ղափոխական-պրոլետարական սոցիալիզմի կամ կոմունիզմի (մարք-
սիզմի) թերրիան ու տակաւիկան մշակեցին: 1845 թվականին
Մարքսն իբրև վտանգավոր հեղափոխական, պրուսական կառավա-
րութեան պահանջով Փարիզից աքսորվեց: Նա տեղափոխվեց Բրյու-
սել: 1847 թվականի գարնանը Մարքսն ու Ենգելսը հարեյին գաղտ-
նի պրոպագանդիստների միութեան, վորը «Կոմունիստների Միու-
թիւն» էր կոչվում, և նշանավոր դեր խաղացին այդ միութեան
յիւրկորդ համագումարում (1847 թ. նոյեմբերին, Լոնդոնում): Հա-
մագումարի հանձնարարութեամբ նրանք կազմեցին հռչակավոր
«Կոմունիստական Կուսակցութեան Մանիֆեստը», վոր լույս տե-
սալ 1848 թ. փետրվարին: Այդ գրվածքում հանճարիղ ու վառ
պարզութեամբ գծադրված է նոր աշխարհայացքը — հեռուդական
մատերիալիզմը, վոր րնդգրկում է և սոցիալական կյանքի բնագա-
վառը, — գիտելիական՝ իբրև զարգացման ամենից բազմակողմա-
նի և խոր ուսմունք, — դասակարգային կռիւ թերրիան և պրոլե-
տարիատի՝ նոր կոմունիստական հասարակութիւնն ստեղծող այդ
դասակարգի համաշխարհային-պատմական հեղափոխական դերի
թերրիան:

Յերբ բռնկեց 1848 թվականի Փետրվարյան հեղափոխութիւ-
նը՝ Մարքսը Բելգիայից աքսորվեց: Նա կրկին Փարիզ գնաց, իսկ

այնտեղից Մարտին հեղափոխութիւնից հետո զնաց Գերմանիա, հենց Քյոլն քաղաքը: Այնտեղ 1848 թվականի հունիսի 1-ից մինչև 1849 թվականի մայիսի 19-ը Ռեյնի Նոր թերթը եր լույս տեսնում: Սրա գլխավոր խմբագիրը Մարքսն էր: 1848—1849 թվականի հեղափոխական դեպքերի ընթացքը փայլուն կերպով հաստատեց նոր թեորիան, ինչպես վոր հաստատեցին այդ թեորիան հետագայում կատարված բոլոր պրոլետարական ու դեմոկրատական շարժումները մոզ արևարհի բոլոր յերկրներում: Հաղթական հակահեղափոխութիւնը Մարքսին նախ դատի յենթարկեց (արդարացալ 1849 թ. փետրվարի 9-ին) և ապա Գերմանիայից աքսոր ուղարկեց (1849 թ. մայիսի 16-ին): Մարքսը նախ Փարիզ դնաց, բայց 1849 թ. հունիսի 13-ի ցույցից հետո այնտեղից ել աքսորվեց ու զնաց Լոնդոն, ուր և ապրում եր մինչև մահը:

Եմիգրանտական կյանքի պայմանները, վոր առանձնապես ցայտուն կերպով պատկերանում են Մարքսի՝ Ենգելսի հետ ունեցած նամակագրութան մեջ (հրատ. 1913 թ.), շատ ծանր եյին: Կարիքն ուղղակի խեղդում եր Մարքսին ու իր բնասնիքը: Միայն Ենգելսի մատտե ֆինանսական աջակցութիւնն եր, վոր հնարավորութիւն տվեց Մարքսին «Կապիտալը» վերջացնելու Բացի այդ՝ մանր-բուրժուական և առհասարակ վոչ-պրոլետարական սոցիալիզմի ուսմունքներն ու հոսանքները շարունակ ստիպում եյին Մարքսին անսնա կռիվ մղելու և յերբեմն անձնական ամենավայրերի ու ամենակատաղի հարձակումներ հետ մղելու: Եմիգրանտական ջրջաններից մի կողմ քաշված, Մարքսը պատմագիտական մի շարք աշխատութիւնների մեջ մշակում եր իր մատերիալիստական թեորիան և իր բոլոր ուժերը գլխավորապես քաղաքատնտեսութան ուսումնասիրութեան եր նվիրում: Այդ գիտութիւնը Մարքսը հեղափոխականացրեց իր «Քաղաքատնտեսութեան քննադատութիւնը» (1859) և «Կապիտալ» (հ. I, 1867 թ.) գրվածքներով:

Հիմնական թվականների վերջի և վաթսուներկանի դեմոկրատիկ շարժումների ջրջանը Մարքսին նորից պրակտիկ գործի հրավիրեց: 1864 թվականի սեպտեմբերի 28-ին Լոնդոնում հիմնվեց հաշակավոր Առաջին Ինտերնացիոնալը — «Բանվորների Միջազգային Միութիւնը»: Մարքսն այդ միութեան հոգին դարձավ, նրա առաջին «Կրթում» և բազմաթիւ կոչիւրի, բանաձևերի ու հայտաբարութիւնների հիդիսակը: Միացնելով այլևայլ յերկրների բանվորական շարժումները, աշխատելով գործսնկութեան մի հունի

մեջ ձուլել վոչ պրոլետարական մինչ-մարքսիստական սոցիալիզմի այլևայլ հոսանքները (Մաձձրնի), Պրուդոն, Բախուն, անգլիական լիբերալ տրիդուստները, լասալյան որորումները դեպի աջ Գերմանիայում և այլն) և կռիվ մղելով ադ սեկտաների ու մանր շկոյանների բոլոր թեորիաների դեմ՝ Մարքսը կռում եր բանվոր դասակարգի այլևայլ յերկրներում մղելը կով մատնական տակտիկան: Յերը խորտակվեց Փարիզի Կոմունան (1871 թ.), վորը Մարքսն այնքան խոր ու ճշտ, այնքան փայլուն կերպով գնահատել ե («Քաղաքացիական կռիւը Ֆրանսիայում») և յերբ բակունիստներն անշատում առաջ բերին «Բանվորների Միջազգային Միութեան» մեջ՝ Ինտերնացիոնալի գոյութիւնը Յեմիգրայում անհար դարձավ, և Մարքսը, Ինտերնացիոնալի Հապայի կոնգրեսից հետո (1872 թ.) հաջողեցրեց, վոր Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհուրդը Նյու-Յորք տեղափոխու Առաջին Ինտերնացիոնալն ավարտեց իր պատմական դերը տեղի տալով, վոր բոլոր յերկրներում բանվորական շարժումն տվիլի ու ավիլի խոշոր չափերով աճի, իսկը՝ տեղի ապով, վոր այդ շարժումը գնալով լայնանա, ծավալվի, սկիզբ տալով մասսայական սոցիալիստական կուսակցութիւնների ծագման այլևայլ ազգային պետութիւնների ծոցում:

Ճգնաշան աշխատանքն Ինտերնացիոնալի մեջ, առավել ևս յեռանդադին թեորիական պարապմունքները վերջին ծայր քայքայման հասցրին Մարքսի առանց այն ել քայքայված առողջութիւնը: Նա շարունակում եր իր քաղաքատնտեսութեան վերամշակումն ու «Կապիտալը» ի վերջավորութիւնը, անթիվ նորանոր Նյու-Թեք կուսակիւրով և մի շարք նոր լեզուներ սովորելով (որինակ, ռուսերին), բայց հիվանդութիւնը թույլ չտվեց, վոր նա ավարտի «Կապիտալը»: 1881 թվականի դեկտեմբերի 2 ին վախճանվեց Մարքսի կրնը 1883 թվականի մարտի 14-ին Մարքսը հանգիստ ու հավետ ննջից իր բազիլաթոռի վրա: Նա թաղված ե իր կնոջ հետ մշտին Լոնդոնի Գայդետ դերիգմանոցում: Մարքսի զավակներից մի քանիսը վախճանվել են մանկական հասակում, Լոնդոնում, յերբ նրա ընտանիքը ծանր կարիքի մեջ եր: Մարքսի յերեք դուստրը՝ Ելենոորա Եվիլինդը, Լաուրա Լաֆարը և Ջեննի Լոնգեն ամուսնացիլ են անգլիայի ու Ֆրանսացի սոցիալիստների հետ: Վերջինս վորդէն Ֆրանսական սոցիալիստական կուսակցութեան անդամն ե:

Պ Լ ա ն	Ա ղ խ ա տ ա ն ք լ ի հ ու ղ ա գ ի ր
1. ԿԱՐԼ ՄԱՐԲ-ՍԻ ԸՆՏԱՆԻԲԸ	1. Կ. Մարքսը ծնվել է 1818 թ. Տրիրում։ Նրա հայրը փաստաբան էր։ Նրանց ընտանիքը հարուստ էր, կուլտուրական, բայց վոչ հեղափոխական։
2. ՈՒՍՄԱՆ ՏԱՐԻՆԲԸ	2. Տրիրի գիմնազիայում։ Ավարտեց Բեր-լինի համալսարանը 1841 թ.։ Հետաքրքրվում էր պատմությամբ և փրկիսոփայությամբ։ Կոլլմախից էր հեղափոխականներին, փորձեց ձգտում էլին Հեգելի փրկիսոփայությունից (ը-գեալատական) աթեոսական և հեղափոխական յեղրակացություններ հանել։
3. ՄԱՐԲՍԻ ՍՇ-ՆԱՐՆԱՅԱՅՔԻ ԶԱՐԴԱՅՈՒՄԸ	3. Փրկիսոփայության հանդեպ յեղած հետաքրմական կառավարության հալածանք-ները Մարքսին ստիպեցին հրաժարվել պրոֆե-սոր դասնալու իր նախկին ձգտումից։ Նա տարվում է Ֆրիբուրգի մատերիալիստական ուսմունքով (սֆրիստոնենության ելույթունը)։
4. «ՌԵՅՆԻ ԼԲԱ-ԳՐՈՒՄ» ԿԱՏԱ-ՐԱՄ ԱՇԽԱՏԱՆԻԸ	4. 1842 թ. Մարքսը խմբագիրն է Ռեյնի արմատական բուրժուազիայի միջոցով հրա-տարակիզող հեղափոխական-դեմոկրատական լրագրի։ Նա դեռ լավ ծանոթ չէր քաղաքա-տնտեսության։ 1843 թ. պետությունը փակում է լրագիրը։

5. ԱՄՈՒՍՆՈՒ-ԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵ-ՅՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԶՈՒՄ

6. ՄԱՐԲՍԸ 1848 ԹՎԻՆ

7. ՄԱՐԲՍԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ

8. Կ. ՄԱՐԲՍԻ ԿՅԱՆՔԻ ՎԵՐ-ՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

5. 1843 թ. Մարքսը ամուսնացավ իր ման-կուլյան ընկեր Ջեյնը Ֆոն-Վեստֆալենը հետ։ Նույն թվին տեղափոխվեց Փարիզ։ Մասնակ-ցությունը հեղափոխական խմբակներին աշխա-տանքին։ Հանդիպումն ու մտերմությունը Են-գելսի հետ—1844 թ.։ Պայքարը մանր-բուրժու-ական սոցիալիզմի դեմ (Պրուդոնի դեմ—«Փր-կիսոփայության աղքատությունը»—1847 թ.)։ «Կոմունիստներին Մրությունը» 1848 թ. փե-տրվարին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» ապադրությունը։

6. 1848 թ. մարտյան հեղափոխությունից հետո վերադառնում է Գերմանիա, խմբագրում «Նոր Ռեյնյան լրագիրը»։ Հակահեղափոխու-թյան հաղթանակը, դատ Մարքսի վրա 1849 թ. հալիզրացիան դեպի Լոնդոն։

7. Գիտական աշխատանքը ծանր նյու-թական պայմաններում։ Գլխավոր աշխատու-թյունները։ «Բաղադրատնտեսության քննադա-տությունը» 1859 թ., «Կապիտալ»-ի I-ին հա-տորը 1867 թ.։

I Խնտերնացիոնալի հիմնադրումը 1864 թ.։ Պայքար վոչ պրոլետարական սոցիա-լիզմի դեմ (Պրուդոն, Բակունին, Մաձձինի, անգլիական տրեդյունիոնիզմ)։

I Խնտերնացիոնալի քաղաքայումը 1872 թ.։

8. Շարունակում է աշխատել «Կապիտա-լի» վրա։ Նյութեր է հավաքում, լեզուներ սո-վորում (որինակ՝ ռուսերեն)։ Մահը 1883 թ.։

6. ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՏԻՐԱՊԵՏԵԼ ՊԼԱՆ, ԿՈՆՍՊԵԿՏ,
ԹԵԶԻՍՆԵՐ ՅԵՎ ԱՅԼՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԳՈՐԾԻՆ

Անհրաժեշտ ենք համարում նորից ամփոփել և
կրկնել, թե ինչպես պիտի ոգտագործել վերը հիշված
ձևերը, վորպեսզի հիմնավորապես մշակվի կարգապահը:

Թե ինքնագարգացմամբ պարապողները և թե բոլոր
սխտեմատիկ պարապողները վոչ միայն լավ պիտի
հասկանան վերևում ժանրամասնորեն նկարագրված
մտավոր աշխատանքի մեթոդները՝ այլև, կոնսպեկտ,
թեզիսներ, աշխատանքային հուշագիր կազմելու հյու-
թյունն ու ձևերը, այլև, վոր ամենակարևորն է, լավ
պիտի ըմբռնեն, թե զբանցից վճիռը, յեբբ պիտի ոգ-
տագործել:

Նորից միջանի լրացուցիչ բացատրություններ վե-
րը հիշված ձևերի ոգտագործման մասին: Սկսենք
պլանից: Պլան կազմելու անհրաժեշտությունը պարզ է
Յեբբ պիտի պլան կազմել:

Պլան կազմելու ժամանակ մենք խորանում ենք
տվյալ նյութի կառուցվածքի մեջ, պարզում նրա բաղ-
կացուցիչ մասերը, հիմնական գաղափարների տրամա-
բանական կապակցությունը: Պլան կազմելը մեզ ոգ-
նում է բովանդակությունն ըմբռնելու համար: Հետա-
գայում պլանի միջոցով հեշտ է հիշել մշակված նյու-
թը, հեշտ է ալդ պլանն ոգտագործել՝ յելույթներ ու-
նենալու, գրելու զեկուցելու ժամանակ: Ինչ վերաբե-
րում է կոնսպեկտին և թիզիսին, պիտի ասել, վոր բո-
լոր մեթոդիստներն էլ գտնում են, վոր զբանց միջոցով՝
ավելի լավ է մշակվում, յուրացվում զիրքը, հոգվածը,
բան միայն պլանի միջոցով:

Յեբբ ոգտագործել կոնսպեկտը, լեբբ՝ թեզիսը:

Մեթոդիստները գտնում են, վոր նկարագրողական և
պատմողական բնույթի գրքերը պիտի համառոտագրել,
իսկ ալնպիսի գրքեր, վորոնք հիմնված են ապացույց-
ների, փաստարկումների վրա, պիտի թեզիսների վե-
րածել:

Վորոշ հեղինակներ (Բագելիվիչ, Վվեդենսկի և ալն)
սխալ կերպով առաջարկում են մեծ գրքերը թեզիսնե-
րի վերածել, իսկ փոքրերը՝ կոնսպեկտի, պատճառաբա-
նելով, վոր մեծերը շատ-շատերը կգվարանան թեզիս-
ների վերածել: Բանից դուրս է գալիս, վոր ինչքան
գիրքը փոքր է, այնքան ավելի խորացած ուսումնա-
սիրության պիտի յենթարկել: Տարրինակ է նույնպես
այդպիսի կարևոր հարցի լուծմանը մոտենալ ըստ գրքի
ծավալի՝ մեծ ու փոքրության: Կ. Մարքսի «Կապիտա-
լը», Լենինի աշխատություններն, ըստ սխալ տեսակե-
տի, ուբեմն, չպիտի արժանանան մշակման: Սա միան-
գամայն սխալ տեսակետ է. բոլոր կարևոր գրքերը
հիմնավորապես պիտի մշակել՝ վերածել կոնսպեկտի և
թեզիսների:

Միջանի խորհուրդներ մեր ուսանողությանը, Ինչ
նյութեր, ինչպես պիտի մշակել:

Մեր կոմհամալսարանի, կուսդպրոցների, բանֆակնե-
րի և ինստիտուտների ուսանողներից պահանջվում է
նյութն ալնպես մշակել, վոր հնարավոր լինի առաջա-
դրությունը պատմել, դասը պատասխանել: Պարզ է, վոր
նման նպատակով ավելի լավ է համառոտագրել, մա-
նավանդ վոր զաստուուն այդ կոնսպեկտի միջոցով
կարող է ստուգել, թե ուսանողն ինչպես է աշխատել,
նյութը մշակել:

Բայց կարելի չէ նաև թեզիսներ կազմել—փաստա-

կան տվյալները, լրացուցիչ նյութերը բոլորովին առան-
ձին թղթի վրա գրելով

Ուրեմն, մեք ուսանողները նյութը մշակելիս հիմ-
նական ձևի պլանի մշակման հետ միասին նյութը
պլանի վերածեն կոնսպեկտի կամ թեզիսներին:

Մենք վճռականորեն առարկում ենք շատ գրոտելու
դեմ: Մեր ուսանողները հաճախ ամբողջ տետրակներ
են լցնում, համարյա թե ամբողջ գլուխներ են արտա-
գրում գրքերից, խրվում են այդ նյութերի մեջ և չեն
կարողանում ոգտագործել: Բանը գրելու մեջ չեն, այլ
ըմբռնելու և մեր ցույց տված ձևով համառոտագրե-
լու կամ լավ թեզիսներ կազմելու մեջ և գործը: Չա-
փից շատ գրելը կմեղմի ընթերցանությունը և հետե-
վողական կերպով կարդացած նյութը մշակելու սերը:
Սկզբնական շրջանում, նույնպես և ուսանողության
համար, պիտի աշխատել կարևոր նյութերի պլանը
կազմել, կոնսպեկտի և թեզիսների վերածել: Իսկ հե-
տագայում, չիրք արդեն տիրապետում եք գրքի վրա
աշխատելուն, ինքնուրույն պարապմունքների մեջ խո-
րացել եք, նայած նյութին և մշակման նպատակին,
պիտի ըստ աչնի ել վարվել: Պլան կազմելը միշտ ան-
հրաժեշտ է. քաղվածքներ կատարելը — ըստ անհրա-
ժեշտության, համառոտագրելը կամ թեզիսներ կազ-
մելը և աշխատանքային հուշագիր կազմելը — կարևոր
են, բայց պիտի ոգտագործվեն տեղին և վոչ բոլորը
միասին, զրանցից մեկն ու մեկը, կամ պահանջի դեպ-
քում՝ յերկուսից վոչ ավելին:

Հիմա մի շատ կարևոր հարց. ինչպես ընտելանալ,
աշխատելով թյուրմանի ձևով բերել մտավոր աշխատանքնե-
րի այս մեթոդներին, ինչ հաջորդականությունով կիրա-
ռել, վերահղել սկսել:

Մեթոդիստները մեծամասնությունը գտնում են, վոր
միանգամից այս բոլոր մեթոդները, աշխատանքի ձևե-
րը չի կարելի սկսել. շիջվածից դուրս կգա:

Մենք նույնպես պնդում ենք, վոր պիտի սկսել վո-
րոշ հաջորդականությունով. սկսել պլանից, անցնել կոնս-
պեկտին, հետո թեզիսներին, ապա աշխատանքային
հուշագրին և այլն:

Պլան կազմելը հեշտ և կոնսպեկտ կազմելուց. վեր-
ջինս պահանջում է վարժ կերպով մտքերը կարողանալ
գրի առնել: Հարց. լերբ պիտի կազմել պլանը, գրքի
ընթերցման հետ միասին, թե ընթերցումից հետո: Այս
մասին կա յերկու հակադիր կարծիք: Վ. Նեվսկին ա-
ռաջարկում է գրքի ընթերցման զուգահեռ կազմել
պլան, իսկ Լ. Բազելիվիչը պնդում է. «Պլանը հարմար
է կազմել վոչ թե հենց կարդալու ժամանակ, այլ գրքի
գլուխները, մասերը, բաժիններն ամբողջացնելուց հե-
տո: Այս դեպքում պլանը խորացած բնույթ է ստանում,
հիմնական մտքերը պարզ են, ամբողջացված»:

Այս լերկրորդ տեսակետն ավելի ճիշտ և գործնա-
կան պիտի համարել: Առանց գրքի մի գլուխը կամ
մասն ամբողջացնելու, յերբ անմիջապես կարդում ենք
և արգացնելով սկսում պլան կազմել, ստացվում է հե-
տևյալ դրությունը: Հաճախ կարդում ենք մի արգաց-
գրում պլանի մի կետ, հետո կարդում ենք ներքևի
արգացը. բանից դուրս է գալիս, վոր հեղինակը նույն
միտքն է հիմնավորում. մեր պլանի կետը ճիշտ չի գրե-
ված, նորից ջնջում ենք, կարդում նորի, գրում, այս-
պիսով, կազմակերպված աշխատանքի փոխարեն ստաց-
վում է շփոթ: Ուրեմն, նորից ենք կրկնում, պլան կազ-
մելն անհրաժեշտ է, պիտի կատարվի ընթերցմանը զու-

զահեռ, բայց յորաքանչյուր մասն ամբողջացնելուց հետո:

Անցնենք կոնսպեկտին: Յե՛րբ և ինչպես կազմել կոնսպեկտ: Կոնսպեկտ պիտի կազմել պլան/ց հետո, լեթե շատ հմուտ պարապող ե, կարող և կազմել միաժամանակ: Բայց կոնսպեկտ կազմելուց առաջ պիտի ըմբռնել գրքի հիմնական մտքերը: Դրա համար ել շատ մեթոդիստներ հանձնարարում են նախ գիրքը կարդալ, հիմնական մտքերի տակ ընդգծումներ կատարել, հետո միայն կոնսպեկտ կազմել: Ինչ ե ընդգծումը, ինչպես կատարել: «Ընդգծված միտքի ընթերցումը պիտի հնարավորութուն տա վերականգնել տվյալ գրքի մետքերի ամբողջական ընթացքը», ասում են մեթոդիստները: Այլ խոսքով, պիտի ընդգծել ամենաեղանակներ, գլխավորը: Իսկ ահեռակապանն ու գլխավորը գտնելը մենք կատարում ենք գիտակցված, մտածված ընթերցանության ժամանակ միայն: Իսկ յեթե գիրքը ձերը չի կամ չեք ուզում գրքի վրա ընդգծումներ կատարել, պիտի վերցնել մի առանձին թերթ և դրա վրա գրել՝ գրքի վերջերս յերեսում, ինչ հիմնական մտքեր կան:

7. Ի՞նչ է ՔԱՂՎԱԾՔԸ, Ի՞նչ ՊԵՍ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵԼ

Քաղվածքը պիտի կատարել հեղինակի բառերով, կարևոր մտքերը, բառացի: Յեթե մի վորեն հիմնական մտքից մի մասն եք վերցնում, պիտի նախ բազմակետեր դնեք, հետո արտագրեք տվյալ միտքը: արտագրված ամբողջ նյութը պիտի լինի չակիրտներին մեջ: Ընդգծումները պիտի կատարել առաջին ընթերցման ժամանակ, քաղվածքները՝ յերկրորդ, վերպեսի ապելորդ աշխատանք չկատարվի:

Այսքանով բավականանա՞նք քաղվածքների և ընդգծումների մասին: պարզ հարց ե, որինսկներ չենք բերում: Ընդգծումների իրեն նմուշ կարող եք ծանոթանալ այս գրքի, մեջ տպագրված՝ Լենինի «Կոոպերացիայի մասին» նյութի ընդգծումներին:

8. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԻՔԱՆԻ ԳՐԻՔԻ ՎՐԱ

Վորեն հարցում խորանալու, այդ հարցը բազմապիսի կերպով լուսարանելու համար անհրաժեշտ ե լինում միաժամանակ միքանի գրքերի, միքանի աղբյուրների վրա աշխատել: Ինչպես ասեն մի լուրջ պաշտպաններ, նույնպես և միքանի աղբյուրների վրա աշխատելու առաջին պայմանն ե լրիվ ճշտորեն պարզել այն նպատակը, հարցը, վոր ցանկանում եք տարբեր գրքերում ուսումնասիրել: Վորովհետե յեթե ձեզ լավ պարզ չե, թե ինչ հարց եք ուզում ուսումնասիրել տարբեր հեղինակների մոտ, կարող եք խրվել տարբեր փաստերի, մտքերի մեջ և չհասնել ձեր նպատակին:

Միայն պարզորոշ, հստակ ըմբռնումն իր նպատակի՝ կիրկի անոգնական ու անդեկ փնտռումներից:

Ասենք, թե արդեն վորոշակի և պարզ ե, թե ինչ հարց եք լուսարանելու, ձեզ անհրաժեշտ ե վորոշ հերթականությամբ, սխտեմով և տեխնիկայով մոտենալ տարբեր նյութերի հավաքմանը:

Ահա, վերցրեք մի կտոր թուղթ, բաժանեք այնքան մասերի, վորքան գիրք եք կարդալու, մի սյուն յյակ ել գծեք ձեր սեփական գիտողությունների համար և այդ առանձին սյուներակներում գրեք տարբեր հեղինակների մտքերը ձեզ հետաքրքրող նյութի մասին: Ներքևում բերում ենք քաղվածքների մի ձև:

Յեթե մի թերթի վրա դժվար ե տեղավորել տվյալ հարցի մասին տարբեր տեսակետները, կարելի չե առանձին թղթերի վրա գրել, ոգտագործելով 79-րդ հջում տպված ձևը:

VIII. ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՅԵՎ ԶԵԿՈՒՑԵԼ

Ա. ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԶԵԿՈՒՑՄԱՆ

1. Զեկուցումների տեսակները.— Մեթոդիստները բազմաթիվ տեսակի չեն վերածում զեկուցումները: Պետրովը գտնում ե, վոր կան հետևյալ տեսակները՝ ա) գործնական ճառ (չերը լուսաբանվում են պրակտիկ հարցեր), բ) գիտական-պրոպագանդիստական զեկուցում (նպատակ ունի տեսական պատրաստություն տալ), գ) ագիտացիոն յեկույթ (մասսայի զգացմունքներին ու կամքի վրա ազդելու համար): Ույարեխսկին, վորի հայերենը մենք փոխադրել ենք, զեկուցումները բաժանում ե հետևյալ տիպերի՝ ինֆորմացիոն, հաշվետու, հիշողությունների, վորջույնի: Դուգելը զեկուցումները բաժանում ե հետևյալ տեսակների՝ ինֆորմացիոն, գիտական, զեկուցում պրակտիկ առաջադրություններով և այլն:

Այս բոլորն ել միակողմանի չեն, լրիվ կերպով չեն տալիս զեկուցումների յերեք հիմնական կողմերը՝ բեմատիկան, նպատակը (ինչի համար ե տրվում) յեվ ձևվը (ինչպես պիտի զեկուցել):

Մենք զեկուցումների տեսակները վորոշելիս անպայման պիտի վորոշենք հիշված յերեք կողմերը: Թեմատիկայի տեսակետից զեկուցումները լինում են քաղաքական, գիտական բնույթի. բնույթի տեսակետից՝

հաշվետու, ինֆորմացիոն, զեկուցում-տեսություններ, հասարակական-պրոպագանդիստական և այլն: Ըստ ձևի զեկուցումները լինում են՝ հաղորդման, դիսկուսիոն և այլն:

Զեկուցումներ կարելի չե կատարել բանավոր և գրավոր:

2. Թեման յեվ առդիսորիան (լսարանը).— Զեկուցում պատրաստելու աշխատանքն սկսվում ե, ամենից առաջ, զեկուցման թեման վորոշելուց. նախ նյութը պիտի վորոշել:

Զեկուցման թեման կամ առաջարկվում ե կուսակցական, պրոֆեսիոնալ, ԼԿՅԵՄ-ի ու այլ կազմակերպությունների գծով և կամ թեման ընտրում և պատրաստում ե ինքը զեկուցողը:

Յեթե պատրաստի ուժ ե մեկը, հասարակական-քաղաքական կամ գիտական վորևե հարցի մասին ուզում ե զեկուցել, պարզ ե, վոր նա ըստ իր մասնագիտության և երուդիցիային ել (մտավոր պատրաստության) կընտրի իր զեկուցման նյութը:

Զեկուցման թեման վորոշելուց հետո ճշգրիտ կերպով պիտի վորոշել նրա նպատակի, խնդիրների, բնույթի հետ կապված հետևյալ հարցերը.

1. Ո՞ւմ առաջ պիտի զեկուցել. լսողների սոցիալական կազմը, տարիքը, սեռը, նրանց ծանոթությունն այդ հարցին:

2. Յե՞րբ պիտի կարգացվի զեկուցումը. նախքան տվյալ դեպքը, յերևույթը, այդ դեպքի ժամանակ, թե՞ դեպքից հետո: Հարցը հասունացել ե, թե վո՞չ:

Այդ հարցը քանի՞ յերրորդ անգամ ե դրվում տվյալ մասսայի քննության: Յե՞րբ պիտի սկսվի զեկուցումը, լսողները հոգնած կլինեն, թե՞ թարմ:

3. Վերստեղ և կայանալու զեկուցումը. կենտրոնական վալրում, թե ծայրագավառում, ծանոթ, թե անծանոթ մասսայի առաջ, մեծ, թե փոքր աուդիտորիալում:

4. Ի՞նչ նպատակով և զբվում զեկուցումը. ունեկընդերներին արտացոլաանելու, պրոպագանդի նպատակով, նրանց անաղանգելու վերահաս վտանգի մասին, գուցե և լսողներին հուզելով, փոթորկելով և այլն և այլն...

5. Զեկուցման սահմանների վորոշումն. պարզել, թե նյութը ինչ մասշտաբով պիտի դրվի. ասենք, պիտի խոսել միայն Խորհրդային Միության, թե ընդհանրապես համաշխարհային բանվորական շարժման մասին:

3. Զեկուցման նյութի մեկումը.—Վերը հիշված կարևոր հարցերը պարզելուց հետո զեկուցողն անմիջապես պիտի սկսի նյութեր հավաքել զեկուցման համար:

Վերստեղից, թե՛ պես պիտի հավաքել նյութեր:

Նախ պիտի ի մի հավաքել այն բոլոր տվյալները, ինչ ունենք և գիտենք տվյալ նյութի մասին: Հետո միայն դիմել գրականության:

Առաջին հայացքից թվում է, թե դժվար թե շատ բան ունենա զեկուցողը գլխում, վորպեսզի վերհիշի, ոգտագործի: Բայց դա սխալ է. վորոշ պատրաստություն ունեցող մարդը, հենց վոր թեման առաջարկվի, անպայման կպատկերացնի զրա ուրվագիծը: Պարզ է, վոր անպատրաստ մարդու մասին չի խոսքը. մի բան վոր չկա, ել թե՛նչ պիտի հիշել և ոգտագործել:

Այս առթիվ մեթոդիստ Ա. Նեվսկին գրում է. «Զեկուցման մասին իմացածը պիտի աշխատել ընդհանուր գծերով վերհիշել և ապա միայն դիմել աղբյուրներին,

գրականության: Իսկ, ընդհակառակն, լեթե զեկուցողն առանց այլևայլի կառնում է գրքերին, խրվում զանազան նյութերի մեջ, զեկուցումը կորցնում է իր ինքնուրուխությունը, նրա կառուցվածքը թուլլելինում: Այս ճիշտ ասակեարի կողքին մենք մեթոդիստների մոտ պատահում ենք նաև հակառակ տեսակետին: Ա. Դուդեկն ասում է. «Սահմանորոշելով զեկուցման թեման, մենք անմիջապես անցնում ենք նյութերի հավաքմանը. կարդում ենք համապատասխան գրականություն, հավաքում թվական տվյալներ և այլն»:

Սա ինքնին սխալ տեսակետ է. իբրև սխտեմ չի կարելի կիրառել: Իսկ լեթե զեկուցողը տվյալ նյութի մասին վոչինչ չգիտե, պարզ է, վոր նա պիտի նախ գրականության դիմի: Սա չի նշանակում, թե մենք թերազնահատում ենք պատրաստվելը, գրականությունը չից ոգտվելը: Ընդհակառակը, պիտի միշտ հարվածել անպատրաստ զեկուցողներին, վորոշք արհամարհում են լսարանը և առանց կարդալու, առանց հարցերի մեջ խորանալու, առանց թարմացնելու, արդիականություն մտցնելու նյութի մեջ, հենց ենպես—դուրս են զալլա և մակերեսային կերպով զեկուցում:

Հարց է առաջ գալիս. թե՛ պես իմանալ, թե զեկուցման թեմայի մասին ի՞նչ գրականություն կա և ոգտագործել:

Ուսանողներն իրենց դասախոսներից կարող են տեղեկանալ աղբյուրները, իսկ մյուս զեկուցողները պիտի դիմեն կամ տեղյակ մարդկանց և կազմակերպություններին, կամ պիտի վերցնեն տվյալ հարցի մասին լեղած տեղեկատու գրականությունը: Ռուսերեն սխտեմատիկ լույս է տեսնում, „Печать и революция“ պարբերականը, վորի գրախոսականների միջոցով կարելի է

ընտրել և ոգտագործել լույս տեսած նոր գրականությունը: Կուս և ԼԿՅԵՄ գծով լույս են տեսնում ազիտացիայի և պրոպագանդայի ու կուսշինարարութեան ժուրնալներ, վորոնցից կարելի չե և անպայման պետք ե ոգտվել՝ ընթացիկ կամպանիաների մասին զեկուցելիս: Ասենք՝ գրականությունը՝ ձեզ հետաքրքրող հարցի մասին արդեն իմացաք, հիմա պիտի անցնեք զեկուցման նյութի մշակմանը: Նախ պիտի դասավորել լեզած նյութերը, գրքերը, տարբերել կարևորը չեղյալից, մանրամասնություններից:

Որինակ, պատրաստում եք կապիտալիզմի դաճացումը Ռուսաստանում թեման. այդ մասին կան խոշոր գիտական արժեք ունեցող գրքեր, ինչպիսիք են՝ Լենինի — «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», Պակրովիկու «Ռուսաց պատմութիւն» տվյալները և այլն: Բայց կան նույնպիս շատ ու շատ վիճակագրական, տնտեսագիտական նյութեր, վորոնք կարող են շատ խորը գաղափար տալ տվյալ թեմայի այս կամ այն խնդիրների մասին: Նայած թեմային, զեկուցողին, զեկուցման նպատակին, ըստ այնմ ել պիտի պատրաստվել զեկուցման համար:

4. ԽՆՅԱԿԵԱ ԱՇԽԱՏԵԼ ՄԻ ԸԱՐՖ ՆՅՈՒՔԵՐԻ ՎՐԱ, ՎՈՐՈՆՖ ԻՐԱՐ ԵՐԱԳՆՈՒՄ ԵՆ.— Զեր զեկուցման համար, ասենք թե հանձնարարված են մի շարք գրքեր. այդ գրքերն ինչպես կարդալ, ամփոփել և ոգտագործել: Այս մասին մեթոդիստները հետևյալ առաջարկներն են անում. գրքերը կարդալ ժամանակագրական կարգով և ոգտագործել՝ նայած թե վոր գիրքն ե վորին լրացնում իր բովանդակութեամբ: Բերինք մի որինակ. ասենք՝ զեկուցումը «Կապիտալիզմի զարգացումն ե Ռուսաստանում». պարզ ե, վոր նախ պիտի կարդաք Լենինի համանուն գիրքը,

ուպա կաթաք Լենինի «Իմպերիալիզմն իբրև կապիտալիզմի վրջին հոսաք» աշխատությունը. բայց վորովհետև ընկ. Լենինը իր լերկրորդ աշխատությունը հասցնում ե 1908—1909 թ. թ., դրա համար սեթողստոները խորհուրդ են տալիս հետագա ժամանակաշրջանի համար կարդալ Բուխարինի «Համաշխարհային արտադրութիւն» գրքից, վորը տալիս ե նյութ 1913 թ.— 1925. թ. համար և այսպիս շարունակել:

Ահա սա կոչվում ե նյութերի ժամանակագրական ամբողջացում զեկուցման համար:

Մենք առաջարկում ենք հատուկ ուշադրություն դարձնել գրքերի ընտրութեան վրա. բոլոր թեմաների մշակման ժամանակ ել կարդալ իդեոլոգիապես ճիշտ գրքերը: Բայց կան այնպիսի թեմաներ, վորոնց մասին հարկ չկա ոգտվել գրքերից ըստ ժամանակագրական կարգի: Որինակ, պիտի պատրաստել զեկուցում «Կոմիւնտերնի հիմնումը» նյութի մասին: Պիտի վերցնել վորեւ հիմնական գիրք այդ հարցի մասին, հետո կարդալ լրացուցիչ գրականութիւն: «Կոմիւնտերնի հիմնումը» թեմայի մասին հիմնական աղբյուրը կլինի Լենինի համանուն հոդվածը Ֆերկերի ժողովածուի XVI հատորում, 56—60 լերես. լրացուցիչ նյութ կլինի Կոմիւնտերնի կանոնադրութիւնը և այլ հոդվածներ:

Բայց լեթե վորեւ ընդունելի ձեռնարկ կամ դասագիրք չկա, վորպիսդի ոգտագործենք իբրև հիմնական աղբյուր, պիտի հիմք ընդունել լեզած աղբյուրների մեջ ամենից կարևորներն ու արժեքավորները: Որինակ, ասենք՝ պիտի զեկուցել «Հոկտեմբերյան հեղափոխութեան հաղթանակի պատճառների մասին»: Մենք առաջարկում ենք հիմք ընդունել Լենինի և Ստալինի գրվածքներն այս մասին. յերկուսի տվյալներն

եւ իրրեւ ամբողջական նյութ ոգտագործել զեկուցման համար:

Ահա մենք կփորձենք տալ լեհիւնի և Ստալինի հիշված հողավածները պլանները և ձեզ հետ միասին մի ընդհանուր պլան կազմել զեկուցման համար:

Լեհիւնի ՀՈՒՎԱԾԻ ՊԼԱՆԸ

1. Ցարական միապետութեան քաղաքական հետամնացութիւնը:
2. Պրոլետարական հեղափոխութեան միաձուլվելը գյուղացիական հետ:
3. 1905 թ. հեղափոխութեան իբրեւ գլխավոր փորձ:
4. Ռուսաստանի աշխարհադրական պայմանները:
5. Պրոլետարիատի և գյուղացիութեան հարաբերութիւնները յուրահասկութիւնը:
6. Յեւրոպական բանվորական շարժման փորձի յուրացումը:

ՍՏԱԼԻՆԻ ՀՈՒՎԱԾԻ ՊԼԱՆԸ

Ա. Արտաքին դրութիւնը.

1. Իմպերիալիստական հիմնական դրուպաների պայքարը:
2. Խաղաղութեան ծաւալելու աշխատավոր մասսաների մեջ:
3. Հեղափոխական կրիզիսի հասունացումն Արեւմտեւում և Արեւելքում:

Բ. Ներքին դրութիւնը.

1. Բանվոր դասակարգի մեծամասնութեան պաշտպանութիւնը:
2. Գյուղացիական չքավորութեան և զինվորների պաշտպանելը:
3. Հեղափոխող բանվորական կուսակցութիւնը:
4. Թշնամիների թույլ լինելը:
5. Աշխարհադրական պայմանները:
6. Մըջոցներ (рессурсы):

Նայելով յերկու հողավածների պլաններին, պիտի տեսնենք հետեւյալը. անհրաժեշտ է մեր զեկուցման պլանը բաժանել 2 մասի—ա) արտաքին պայմանները, բ) ներքին պատճառները: Առաջին մասի մեջ կմտնեն Ստա-

լինի 3 կետերը. լեհիւնի կետերը վերաբերում են միայն ներքին դրութեանը: Իսկ երկրորդ մասն ինչպես կազմել: Լեհիւնն սկսում է թշնամու թուլութիւնից՝ միապետութեան քայքայումից. Ստալինն սկսում է բանվոր դասակարգի ուժերից, նրա վերաբերմունքից դեպի հեղափոխութիւնը: Չպիտի հակադրել. կարելի լի է լեհիւնի, և՛ Ստալինի ձևով սկսել ներքին դրութեան նկարագրումը: Յերկրորդ կետը վերը դնել: Ստալինն իր 2-րդ կետում տալիս է բուրժուազիայի, կալվածատիրութեան և համաձայնողականների թուլութիւնը պարզ է, վոր սա համընկնում է լեհիւնի թեզի հետ՝ ցարիզմի թուլութեան մասին, յերկուսի 2-րդ կետերն էլ իրար լրացնում, իրար շարունակութիւն են: Ուրեմն 2-րդ կետն էլ պարզեցինք: Յերկրորդ կետը գտնելու համար նորից նայում ենք պլաններին և տեսնում, վոր յերկուսի մեջ էլ խոսվում է հեղափոխութեան շարժիչ ուժերի մասին...

Ահա այս ձևով մենք կկազմենք մեր զեկուցման պլանը, վորը կլինի յերկու պլանների վրա հիմնված մի պլան:

Ե. Իրաւ հակասող նյութերի ոգտագործումը.—Բավական դժվար է իրար հակասող նյութերը մշակել և դրանց հիման վրա զեկուցում կարգաւ կամ գրել: Այստեղ չի կարելի միացնել տարբեր տեսակետներ. մըտքերի պայքար է: Հաճախ հեշտանում է այդ գործը, վորովհետև մի կողմում ավտորիտետ է լինում. ասեմք, տնտեսական վորքն հարցի մասին զեկուցում պատրաստելիս կարգում ենք բուրժուական տնտեսագետների և Մարքսի, Ենգելսի կամ լեհիւնի աշխատութիւնները. իհարկե, նման դեպքում զեկուցողը պետք է հենվի մարքսիզմի աշխատավոր ներկայացուցիչներին

վրա և հերքի բուրժուական տեսակետները: Բայց լինում է և ուրիշ դրուժյուն, յերբ հակադիր տեսակետներ պաշտպանող յերկու կողմերն ել ավտորիտետ են. ինչպես կրոնի մասին Ս. Սկվորցովի և Պակրովսկու վեճի ժամանակ, ինչպես Ոսինսկու և Նրա հակառակորդների վեճի ժամանակ՝ ավտոմորելային արդյունաբերության զարգացման մասին:

Պարզ է, վոր նման դեպքում զեկուցողը պետք է իր տեսակետով մոտենա հարցի լուծմանը, պաշտպանի վորեւէ մեկի հայացքները, ցույց տա մյուսի սխալները: Տարբեր նյութերից, փաստաթղթերից ոգովելու ժամանակ նախ պիտի պարզել, թե սվյալ նյութերը, փաստաթղթերն իրական են, սարքովի չեն: Պատմական հարցերի մասին զեկուցելիս առանձնապես շատ են գործ ունենում փաստաթղթերի հետ:

Փաստաթղթերի իսկական լինելը յերևում է նրանց ուղղագրությունից, շարահյուսությունից, տերմինների, մտքերի արտահայտումից և այլն: Յեթե, որինակ, գըրված է անգլիական վերեւ փաստաթղթում՝ «Հրահանգներ Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի», և դրա մեջ մենք տեսնում ենք հին ուղղագրություն, հնացած մտքեր, ինչպիսիք են՝ «ազգային զինվորական ատաշե», պարզ է, վոր մենք պիտի մերկացնենք, ասելով, վոր ներկայումս նման պաշտոն չկա, փաստաթուղթը սարքովի չէ:

Բայց սարքովիներից բացի մենք գործ ենք ունենալու այլ բազմաթիվ փաստաթղթերի, աղբյուրների հետ, հարց է ծագում՝ ինչպիսի պիտի ոգտագործել:

Վերցնենք մի որինակ. 1773 թ. 17/IV-ի Պուգաչյովի հայտնի մանիֆեստը:

Ժողովրդական ապստամբության առաջնորդն այս

մանիֆեստով դիմում է Բելորեցկու գործարանի բանվորներին, վորպեսզի իրեն «ներկայացնեն» 2 հեռաձիգ թնդանոթներ՝ բռնեբերով: Պուգաչյովը բանվորներին խոստանում է մի շարք շնորհներ և սպառնում է «արդար ցատումով», լեթի իր պանհանջը կատարեն:

Ինչպիսի ոգտագործել այս փաստաթուղթը: Պիտի որինակ վերցնել Պակրովսկուց: Նա ասում է. նախ աչդ փաստաթուղթը ցույց ե տալիս, վոր Պուգաչյովը ձգտում էր կապ հաստատել բանվորների հետ, նրանց իր կողմը քաշել. սա յերևում է փաստաթղթի լեզվից, ազիտացիոն վոճից: Յերկրորդ, — շարունակում է Պակրովսկին, — փաստաթղթից իմանում ենք, վոր բանվորները ծանր տնտեսական դրության մեջ էլին: Յերրորդ — փաստաթուղթը ցույց ե տալիս, թե Պուգաչյովը վոր տեղից եր ստացել իր թնդանոթները: Ահա փաստաթղթի ոգտագործման մի որինակ:

Իայց կան և սքողված, դիտմամբ սխալ գրված փաստաթղթեր: Ասենք. 1861 թ. ցարական մանիֆեստն ուղղված գյուղացիությանը. զեկուցելիս պիտի վերլուծել և ցույց տալ դրա կեղծ լինելը, դասակարգային մերկությունը, ցարական վախը և այլն:

Ամփոփենք. փաստաթղթերն անպայման անհրաժեշտ են. պիտի ոգտագործել զեկուցումների ժամանակ, բայց պիտի յենթարկել անալիզի, ստուգելով նրանց լեզրական ցուլվունները, նրանց ճիշտ, տիպիկ լինելը: Անալիզի հետ կամ նոր տեսակետ առաջադրել, կամ լրացնել, պարզաբանել յեղած փաստաթուղթը:

Շատ ե պատահում, վոր հեղինակները մեջ բերելով ականավոր գրողների մտքերը, դիտավորյալ աղավաղում են, վորպեսզի իրենց տեսակետները հաստատեն: Վերցրեք Տրոյկու, Ձինովիևի և մի շարք հակալեւի-

նյաւն գրվածքներ, դուք կտեսնեք, վոր նրանք լենինիցիտատները դիտավորյալ կերպով աղավաղում են, վորեն դարձվածք նրա ընդհանուր դատողություններէից բռնի կերպով պոկում, յերեմն մտքի մի մասը գրում՝ մյուսը բաց թողնում և այլն: Նման աղբյուրների հետ գործ ունենալիս պիտի նորից անալիզի յենթարկել, մերկացնել (երականի հետ համեմատելով) և հերքել աղավաղողների յեզրակացությունները, տեսակետները:

6. Ի՞նչպես կառուցել զեկուցումը. — Ասենք՝ թե զեկուցման նյութերը հավաքեցիք, մի շատ կարևոր հարց ե ծագում զեկուցողի առաջ. ի՞նչպես կառուցել զեկուցումը, ի՞նչպես դասավորել նյութերը, ի՞նչպես ոգտագործել իր ժամանակը:

Նյութերն ուսումնասիրելուց հետո, ինչպես առաջին զրութներում ենք պարզել, անմիջապես պիտի անցնել զեկուցման պլանի, կոնսպեկտի և թեզիսների կազմելուն: Մանրամասն կարիք չկա նորից կրկնելու, թե ինչ ե պլանը, կոնսպեկտը, թեզիսները և ինչպես պիտի կազմել, վորովհետեւ նախկին զրութներում արդ մասին սպառիչ կերպով տվել ենք մեր բացատրությունները: Այստեղ կբավականանանք միայն մի քանի տեսակի զեկուցումների որինակելի պլանները ցուցադրելով:

ՊԼԱՆ ՎՈՂՋՈՒՅՆԻ ՅԵՂՈՒՅԹԻ

(Համագումարին, հորեյարին, պատգամավորության և այլն)

1. Ո՞ւմից ե վողջույնը:
2. Համառոտ ակնարկ կատարվածի մասին (հորեյարի գործու-նեյության ընթացքում, անցյալ համագումարից մինչ այժմ):
3. Համառոտակի թվել համագումարի, հորեյարի, պատգամավորության առաջ կանգնած խնդիրները:

4. Ի՞նչ ե առաջարկում, խորհուրդ տալիս, ի՞նչ ե խոստանում վողջունողն իր կազմակերպության կողմից՝ համագումարին, հորեյարին...

5. Կոչ՝ կատարել ղեկավարի ավանդները, կուսակցության նպատակները:

ՊԼԱՆ ԻՆՖՈՐՄԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՄԱՆ

1. Պատմական հակիրճ տեղեկանք տվյալ հիմնարկի, ձեռնարկի, կազմակերպության, գործի և այլնի մասին:
2. Սկզբնական շրջանում ի՞նչ նպատակներ ու խնդիրներ ե առաջադրել այդ հիմնարկը, ձեռնարկը:
3. Անցյալում ի՞նչ պայմաններում ե կատարվել աշխատանքը:
4. Այսատանքների աստիճանական զարգացումը:
5. Ներկայիս դրությունը:
6. Ներկա մոմենտում ի՞նչ նշանակութուն ունեն այդ աշխատանքները:
7. Այսատանքների դրական ու բացասական կողմերը:
8. Բարեհաջող և արգելաթի հանգամանքներ:
9. Ապագայի հեռանկարները:
10. Յեզրակացություններ ասածներէից:

ՊԼԱՆ ՁԵԿՈՒՅՈՒՄ - ՏԵՍՈՒԹՅԱՆ

(Մըջադպային դրությունը)

1. Հիմնական առանցքը, գլխավոր հարցը, «մեխը» ներկա զեկուցման:
2. Զեկուցման նյութի հետ կապ ունեցող պետությունների ներքին և արտաքին դրության մասին:
3. Բնութագրումը գլխավոր դործող ուժերի և գլխավոր գործող անձանց:
4. Անխուսափելի ընդհարումը պայքարող ուժերի և այդ ընդհարման հնարավոր արդյունքները:
5. Մենք, մեր անելիքը, դերը, մեր խնդիրներն այդ ընդհարման ընթացքում:

6. Սպառնացող վտանգը:
7. Այդ վտանգի առաջն առնելու և նրա դեմ կռիվելու միջոցները:
8. Կոչ (պատճառաւ և արթուն լինել և այլն):

ՊԼԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ - ՆՍԽԱԳԾԻ

1. Այն պատճառները, վոր անհրաժեշտ են դարձրել նախագծի կազմելը:
2. Ընդհանուր պահանջներ, վոր կարելի չե առաջադրել նախագիծին:
3. Մյուսների նախագծերի բնութագրումը:
4. Ձեր նախագիծը ելու թյունը:
5. Նախագծի իրադրութեան համար ի՞նչ որոշումներ պիտի ընդունուին:
6. Ի՞նչ հնարավոր մեթոդներ կան իրադրութեան համար:
7. Ինչո՞ւ դուք պատկանում եք անսպասան այսինչ մեթոդը:
8. Նախագիծը ըստպ կարգով իրադրութիւն կարողութիւնները:

ՊԼԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ - ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. Ներկա գեկուցման նպատակներն ու խնդիրները:
2. Ի՞նչ խնդիրներ են առաջադրված յեղել, ի՞նչ պարտականութիւններ են դրված յեղել, ի՞նչ աշխատանք ե նախատեսված յեղել հիմնարկութեան կամ անհատի համար:
3. Աշխատանքի պայմանները:
4. Աշխատանքի մեթոդները, ձևերը:
5. Ի՞նչ ե իրադրութիւն ընդհանուր առաջարկից:
6. Ի՞նչ և ինչո՞ւ չե կատարված:
7. Ի՞նչ ե պահանջվում, վորպէսզի ըստպ կարգով ավարտվի դրոքը:
8. Ընդհանուր յեզրակացութիւններ:

ՊԼԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ - ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ

ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ինչպէ վերստուգում կատարվեց:
2. Ի՞նչ պայմաններում և ի՞նչպէս կատարվեց վերստուգումը:
3. Վերստուգման յենթակա հիմնարկի (կամ կազմակերպութեան) պարտականութիւնները և խնդիրները:
4. Ի՞նչ հնարավորութիւն ե տրված յեղել վերստուգվող հիմնարկի աշխատանքները համար:
5. Հիմնարկի գործունեութիւնը տվյալ ժամանակաըջանում:
6. Բացերը, սխալները, թերութիւնները:
7. Թերութիւնների պատճառները:
8. Միջոցներ դրանց վերացման համար:

ՊԼԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ - ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ

1. Այն պատմական դրութիւնը, վորի մեջ կատարվել ե դեպքը:
2. Դեպքը:
3. Դեպքի շարժիչ ուժերը:
4. Դեպքի գլխավոր գործող անձանց բնութագրումը:
5. Յեւ և այդ դեպքերը:
6. Դեպքը ապագա հեռանկարների տեսակետից:
7. Դեպքի նշանակութիւնն իր ժամանակին:
8. Դեպքի նշանակութիւնը մեզ համար:

ԻՆՉՊԵՍ ԶԵԿՈՒՅԵԼ

I. Միքանի մախադրյալներ. — 1. Պատրաստվելով գեկուցման, ինչպէս միջանի անդամ այս գրքում մենք շեշտել ենք, նորից կրկնում ենք, վոր ամենից առաջ լուրջ կերպով պիտի մշակել գեկուցման նյութը, բովանդակութիւնը: Նախ և առաջ պիտի պատրաստվել, նյութ:

Թեր հավաքել, մտածել, թե ի՞նչպես պիտի համոզել, հետո միայն մտածել ղեկուցման ձևի մասին:

Լավ պիտի հիշել, վեր ձեռ կարևոր է, սակայն առանց բովանդակության նա վոչինչ չարժե:

2. Զեկուցումը պիտի լինի հեղինակինը, ղեկուցողինը. վոչ մի դեպքում չպիտի դուրս գալ ղեկուցման առանց յուրացնելու, լավ տիրապետելու ղեկուցման նյութին: Զափազանց կարևոր է ղեկուցման գնալուց առաջ ստուգել, թե ինչպես է յուրացրել նյութը. փորձնական ղեկուցումը, նյութի կրկնությունը կարևոր է:

3. Զեկուցման ժամանակ պիտի խոսել պարզ, խոսափել ճոճապան ֆրազներից. Լենինն ասել է. «Ֆրազները հարկավոր չեն, ֆրազներով չեք կերակրի աշխատավորներին»:

4. Զեկուցումն անպայման պիտի սերտորեն կապել արդիականության, մեր սոցիալիստական շինարարության հետ:

5. Միշտ լավ պիտի հիշել, թե ի՞նչ է ձգտում, ի՞նչ է ղեկուցման նպատակը և հետևողական կերպով «կարժիր թելով» ամբողջ ղեկուցման մեջ անցկացնել այդ հիմնական նպատակը:

II. Ի՞նչպես տրապեզել լսարանին.— 6. Լսարանի ուղադրությանը կարելի չէ տիրապետել միայն իմանալով, թե ի՞նչով է նա ապրում: Միշտ պիտի «շոշափել» լսողների տրամադրությունը: Զեկուցումն սկսելուց 10—15 րոպե առաջ պիտի մտնել լսարան, նախ պարզել լսողների մոտավոր թիվը, կազմը և այլ հարցեր: Պիտի պարզել նույնպես լսողների հասակը, սեռը (գերակշռող մասի): Հետո պիտի զբոսցնել միջանրի հետ, «խոսք դուրս քաշել» թե ի՞նչն է նրանց հետաքրքրում այդ ղեկուցման մեջ, նրանց կարծիքները քեզ հետա-

քըրքրող հանգուցային հարցերի մասին: Այդ խոսակցությունների միջոցով պիտի պարզել, թե ինչով է հետաքրքրվում, ապրում ու շնչում լսարանը: Այդ տրամադրությունները, տեսակետները հաշվի պիտի առնել և ոգտագործել ղեկուցման ժամանակ:

7. Դժվար է լսարանի ուղադրությանը տիրապետել առաջին մոմենտներում:

Զեկուցողն ամբիոնի վրա չէ, ժամանակն է սկսել ղեկուցումը, բայց լսարանում խոսակցություն է, աղմուկ, իրարանցում:

Դու բարձրացնում ես ձեռքդ, ուղադրության նշան անում, բայց լսարանը, ասենք՝ թե չհպատակվեց. աղմուկը շարունակվում է:

Այն ժամանակ դու հանում ես ժամացույցը, մի յերկու րոպե սպասում, ասելով. «դուք խլում եք իմ և ձեր ժամանակը», ասենք՝ թե լսարանն այս անգամ ել քեզ չլսեց: Վերոշում ես դիմել ձայնիդ ոգնությանը. «ընկերներ»,—բայց քո ձայնը թույլ է, լսում են միայն առաջին շարքերը, իսկ մնացածները շարունակում են աղմկել:

Ի՞նչ անել:

Լսարանը պիտի բաժանել միջանի խմբի. ամբողջ ուղադրությունը կենտրոնացնել առաջին խմբին, 30—40 վայրկյան աչք չհեռացնել, մինչև չհանգստանան: Հետո նույն հայացքի բևեռումը պիտի կրկնել յերկրորդ, յերրորդ խմբերի հետ և ապա 3—4 րոպեից հետո, լսարանը խաղաղացնելով, սկսել ղեկուցումը:

8. Զեկուցումն սկսելուց շատ բան է կախված: Սկիզբը հետաքրքիր լինելու դեպքում կենտրոնանում է ուղադրությունը, ամրապնդում լուրջ ունկնդիրներին, գրավում տատանվողներին: Յերբեք չպիտի մոտա-

ծել, թե սկիզբը կգա ինքն իրեն. ամենից լաշն ե, յե-
թե զեկուցման համար պատրաստվում ե միքանի նա-
խաբան, դա հնարավորութիւն կտա, ծանոթանալով
տրամադրութիւններին և մասսային, վորեւե մեկ նա-
խաբանով սկսել զեկուցումը. նախաբանում կարելի յե-
տալ զեկուցման նպատակներն ու խնդիրները, հարցի
եյութիւնը, պատմական բնութիւնը, բանավիճային կող-
մը և այլն ..

9 Հրապարակ դալու ժամանակ, ինչպես վերն ա-
սել ենք, լուրջ կերպով պիտի հետեւի լսարանի տա-
մադրութիւններին ու վարժունքին և ըստ այնմ կըր-
ճատել կամ լրացնել զեկուցման պլանը, բովանդա-
կութիւնը, փոխել հարցերի դրվածքը. կալ պիտի հի-
շել, վոր բոլորին գոհացնել անհնարին ե, պիտի ընդ-
առաջել մեծամասնութեան պահանջին.

10. Իբրեւ մեթոդ՝ ժամանակ առ ժամանակ պիտի
«թեթևացնել» լսարանը. Այդ «թեթևացումը» հնա-
րավորութիւն ե տալիս «շունչ քաշել», թարմացնում
ե լսարանը:

Նման «թեթևացման» կարելի լե համեմատել միքա-
նի ձևերով. ա) վորեւ հետաքրքիր դեպք պատմելով,
բ) վորեւ վառ պատկեր տալով, գ) լսարանին ռեպ-
լիկայի քաշելով, դ) սուր և կծու մտրակներ հասցնելով
հակառակորդին, ե) միքանի հարց տալ լսարանին և
հետո ամփոփել. պատասխանել և այլն և այլն. կալ
պիտի հիշել, վոր դրանք շեղում են զեկուցումից, շատ
չպիտի յիշխարացնել, վորպէսզի զեկուցման հիմնական
թելը չկորչի:

III. Խնչպէս բանախոսել.— 1. Յերբ հրապարակ եք
դալիս մեծ, մասսայական լսարանի առաջ, միշտ սկսեք
ծանոթից և կոնկրետից ու աստիճանաբար անցեք ան-

ծանոթին: Զեկուցումները պիտի կառուցել ինքուկտիվ
և վոչ դեդուկտիվ մեթոդով, այսինքն՝ մասնավորից դե-
պի ընդհանուրը: Զեկուցման ինքուկտիվ մեթոդը լսա-
րանի աշխատանքի լե քաշում, ակտիվացնում ե. Նյութ-
ը պիտի դասավորել համակենտրոն ձևով (կոնցենտ-
րիկ), դա հնարավորութիւն կտա միքանի անգամ
կրկնել հիմնականը և աչգալիսով ամրացնել լսարանի
գիտակցութեան մեջ: Առաջին շրջանում (կոնցենտր-
պիտի տալ հիմնականը, զեկուցման ընդհանուր ուղե-
նիշները. Յերկրորդ շրջանում պիտի մանրամասն կեր-
պով տալ նյութը, որինակներով, փաստերով հաստա-
տել: Յերրորդ շրջանում — համառոտակի կրկնել այն
ամենը, ինչ վոր հիմնականն ե զեկուցման:

2. Վորպէսզի զեկուցումը լալ ըմբռնեն, զեկուցումից
հետո «լսարանի լեզուն բացվի», արտահայտվեն զըր-
ված խնդիրների մասին, զեկուցման ընթացքում հե-
տեյալ միջոցներին պիտի դիմել:

ա) Ամբողջ զեկուցումն անսպասան բաժանել վորո-
շակի բաժինների և յենթաբաժինների. պարզ կերպով
տալ նրանց վերնագրերը, յենթավերնագրերը: Արդեն
ասել ենք, նորից կրկնում ենք, վոր հիմնական մտքե-
րը միքանի անգամ պիտի ամփոփել, կրկնել: Այս յերկու
ձևերի շնորհիվ լսարանը զեկուցումը կըմբռնի վորոշ սիս-
տեմով, գլխավորը կըմբռնի և հնարավորութիւն կու-
նենա արտահայտվելու:

բ) Պիտի գատել մի շարք վեճելի հարցեր և զեկուց-
ման ժամանակ այդ հարցերի մասին յեղած տարբեր
տեսակետները հայտնել լսարանին. դա մի քայլ ե
ակտիվացնելու լսարանը, տարբեր տեսակետները կըրտ-
նեն իրենց կողմնակիցները և վիճաբանութիւն կառա-
ջանա զըված հարցերի շուրջը:

դ) Զեկուցողը կարող է այս կամ այն հարցում հարցնել լսարանի կարծիքը, գեկուցման ժամանակ քննել այդ կարծիքը և այդպիսով կենդանի պահել լսարանը:

3. Զեկուցողը լավ պիտի իմանա, վոր «խրատելու ճանապարհը չեկար և և դժվար, որինակների ճանապարհը՝ կարճ ու հեշտ»: Ասածները պիտի հաստատել որինակներով, կենդանի փաստերով:

4. Վորպեսզի գեկուցումը լինի կենդանի, գրավիչ, անպայման պետք է ոգտագործել բոլոր իլյուստրատիվ միջոցները՝ նկարները, գիագրամները, կինոն, գիապոզիտիվները, քարտեզները, գրատախտակին գրելը և այլն:

5. Փաստական և թվական նյութերը պիտի ոգտագործել տեղին՝ և նպատակահարմար կերպով: Խնդիրը քանակի մեջ չե, այլ նրանում, վորպեսզի բերած տրվյալները ապացուցեն հիմնական մտքերը, չխճողեն միտքը: Ի չարը չպիտի գործագրել թվական տվյալները, նպատակահարմար և տալ համեմատական բնույթի թվեր. որինակ, յեթե խոսում եք վերջին 15 տարում պրոֆմիությունների թվական աճման մասին, կարող եք տալ 1917 թ. 1927 թ. 1932 թ.: Ըստ հնարավորին թվական տվյալները պիտի գրել, վոր տեսնեն: Տոկոսները նույնպես տեղին և նպատակահարմար պիտի ոգտագործել:

6. Զեկուցման ձեռ պիտի համապատասխանի նրա բովանդակությանը, նպատակին, տեղին և այլն: Ասենք՝ թե լսարանում կա 300 մարդ, պարզ է, վոր, քո կամպանիոն բնույթի գեկուցումը կարող է միտինգալիսադիտացիոն բնույթ կրել. իսկ յեթե լսարանում կա միայն 15—20 մարդ, միտինգալիս բնույթն անտեղի կլինի, փքուն ճառից բացի ուրիշ բան չի ստացվի:

Կամ ասենք՝ լսարանի մտավոր մակարդակը բարձր է. գեկուցման մեջ կարիք չկա դիալոգիա մտցնելու, բնդարձակ բացատրությունների փոխարեն պիտի ոգտագործել սեղմ ձևակերպումներ. իսկ բնդհակառակը, յեթե լսարանի մտավոր մակարդակը ցածր է, պիտի լերբեմն գիմել հարց ու պատասխանի, մանրամասն և մատչելի կերպով բացատրել, տարբականացնել, բացյ վոչ մի դեպքում չգոհակացնել:

Յեթե լսարանը խորացել է հարցում, լուրջ աշխատանքի մեջ է, անտեղի կատակը մտցնում է «շուլուղ»:

7. Զեկուցման հիմնական կանոններից պիտի լինի պարզ, մատչելի և վորոշակի խոսելը: Չպիտի ոտար բառերով հեղեղել գեկուցումը և անհասկանալի դառնալ: Նույնպես սխալ է արդեն լայն կերպով գործածություն գտած, քաղաքացիություն ստացած ոտար բառերի փոխարեն ինչ-վոր անհասկանալի բառեր թխել:

Լենինն ասել է. «Ռուսաց լեզուն մենք փչացնում ենք. ոտար բառերը գործ ենք ածում անտեղի, գործ ենք ածում սխալ: Ինչո՞ւ ասել դեֆեկտ, յերր կարելի չե ասել պակասություններ, թիրություններ: Խոստովանում եմ, յեթե անկարևոր տեղը միքանի ոտար բառերի գործածությունը ինձ բարկացնում է (վորովհետե դա դժվարացնում է մեր ազգեցությունը մասսայի վրա), ապա միքանի սխալները կարող են ինձ ջղայնացնել: Որինակ, գործ են ածում „будировать“ բառը՝ գրգելու, քաշքշելու, արթնացնելու իմաստով, բացյ ֆրանսերեն «բուդե» բառը նշանակում է՝ բարկանալ, փռվել: Ժամանակը չե՞ արդյոք պատերազմ հայտարարել ուսաց լեզուն ազավադելու դեմ»:

Ընկ. Լենինի խոսքն անշուշտ վերաբերում է նաև հայերենի և մյուս լեզուների ազավադումներին:

Զեկուցման ժամանակ շատերը հեղեղում են ցրտառնեքով, կան մարդիկ ել, վոր զանազան փիլիսոփաների, զբաղանազեմների անուններ են տալիս և ուզում են թագնվել նրանց թիկունքում, կան շատերն ել, վոր տիղի-անտեղի գործ են ածում զանազան արտահայտություններ, ինչպես, որինակ՝ «Դամոկլյան սուր», «Մալտիադի պսակները հանգիստ չեն տալիս նրան», «ես տանձ ե, են գանձ ե», «ծովն այրեցիր» և այլն: Սրանք, յեթե անտեղի, անհասկանալի չեն, պարզ ե, վոր միայն ցուցամոլություն համար են գործածվում:

Ավելորդ և անտեղի առածները, ասացվածքները մտքերի շփոթ են առաջացնում, նյութից շեղում:

8. Զեկուցման ժամանակ պիտի խուսափել յերկար «գերմանական» նախադասություններից. պիտի խոսել պարզ, հասկանալի և վորոշակի, բայց սա չի նշանակում՝ խոսել չոր, ձանձրալի, անհամ: Զեկուցումն ամեն կերպ պիտի բազմազան դարձնել, գեղեցիկ և աշխուժ կերպով տալ: Արվեստով, գեղեցիկ խոսելու համար՝ ա) լալն կերպով պիտի ոգտագործել լեզվի անթիվ հարստությունները, բ) խոսել արտահայտիչ և պատկերավոր, գ) տեղին ոգտագործել շարժումները, միմիկան:

9. Զեկուցման վերջավորությունը նույնպես կարևոր ե. չեղրափակմանը նույնպես պիտի նախորդ պատրաստվի: Յեղրափակման հետևյալ տիպերն են ոգտագործում. ա) ասածներն ամփոփում են, բ) ասածներից չեղրակացություններ են հանում, գ) ալնպիսի չեղրակացություններ են հանում, վորոնք կամուրջ են լինելու հետագա զեկուցումների համար, դ) կոչ, առաջարկություն են անում, ե) խառը — վոր կազմվում ե վերը հիշվածների միջանի տեսակներից: Զեկուցման

վերջանալուն պիտի նախապատրաստել լսողներին. դրա համար հիմնական հարցերը կրկնում են, ամփոփում, բայց վոչ մի դեպքում «սկզբից չսկսել» — մեկ ել: Վերջում չպետք ե «դես-դեն» ընկնել, ծամծմել ասածները, ընդհակառակը, ամենահամոզեցուցիչ փաստերը, վառ որինակները պիտի յեղրափակման ժամանակ ոգտագործել:

Յեթե զեկուցման ընթացքում նկատում եք, վոր լսարանն այլևս չի լսում, մարդիկ ամեն կերպ աշխատում են լսարանից «ծլկել», չպիտի խաբել, թե «կարճ եմ կտրում, քիչ հետո կվերջացնեմ» և հետո նորից ձգձգել խոսքը: Ընդհակառակը, չափազայ ուշադիր վերաբերմունք պիտի ունենալ դեպի լսարանը. չեթե զեկուցումը չեղրակացնելու հետևանքով ե ձանձրուլթը, պիտի անմիջապես չեղրափակել և վերջացնել: Իսկ յեթե ուրիշ պատճառներից ե (բարդ լինելը, հոգնածություն, անհետաքրքրություն և այլն), պիտի պարզել և ամեն կերպ աշխատել հենց զեկուցման ընթացքում ուղղել սխալը, տիրապետել լսարանին:

10. Պիտի պատրաստվել նաև չեղրափակման խոսքին:

Դրա համար.

ա) Նախորդ միջանի փաստեր ու մտքեր պիտի թողնել չեղրափակման խոսքի համար:

բ) Զեկուցումից հետո հակաճառողներին պիտի լսել մեծ ուշադրությամբ:

գ) Դրի առնել հակաճառությունները, չերբեմն անհրաժեշտ ե գրել բառացի:

դ) Չպիտի տեղից հակաճառել, դա թուլություն ու ջղախություն ե արտահայտում:

ե) Հակաճառողներին լսելու ժամանակամիջոցում

իսկ պիտի նստապատրաստվել վերջին խոսքին. հակաճառողներին պիտի պատասխանել ըստ ելույթյան, յուրաքանչյուր խնդիրն աջակես լուսաբանել, սպառիչ պատասխան տալ, վոր լսարանն ըմբռնի չլուծված կամ լրիվ կերպով չպարզված խնդիրները: Յեթե վերջին խոսքում զեկուցողն սկսեց քծնել, բոլորի հետ համաձայնվել, դեսից դենից խոսել, կրկնությունների մեջ ընկնել, կնշանակի տանուլ տվեց դորձը, կնշանակի նա այնքան անպատրաստ և թույլ եր, վոր իրեն հանձնարարված հիմնական խնդիրները զեկուցման ժամանակ տապալեց, զեկուցումն իր նպատակին չհասավ, կամ քիչ արդյունք տվեց:

զ) Վերջընթաց կետի միտքն աջակես չպիտի ըմբռնել, թե անպայման պիտի ջարդ ու փշուր անել բոլոր առարկողներին, վոչ վոքի հետ չհամաձայնվել և այլն: Վոչ. վերջին խոսքը պիտի կառուցվի այնպես, վոր նախ և առաջ կատարված լրացումներից, վորոնք պիտի ընդունել՝ խոսել դրանց մասին և ընդունել. հակաճառողներից հիմ հետ պետք է համաձայնվել՝ հայտնել, վոր ճիշտ են. և վերջապես վերջին խոսքում և, վոր պիտի նորից կրկնել զեկուցման հիմնական մըտքերը:

է) Հակաճառողներին պատասխանելիս զեկուցողը վորչապի անաչառ և հանգիստ է արտահայտում իր տեսակետը, այնքան ավելի յեն վստահանում նրան:

IV. Խոսելու տեխնիկան. — 1. Զեկուցելիս, մասսայական յեկույթի ժամանակ, այնպիսի դիրք պիտի բռնել, վոր ամբողջ լսարանը տեսնի զեկուցողին, խոսողին: Լավ է ամբիոնից հրաժարվել, վորովհետև նա ծածկում է հասակի մեծ մասը, հետևապես ծածկում է դիցքը, շարժումները, ժեստերը: Պիտի ընտրել ամե-

նաքարձր տեղը բեմում, վորտեղից բոլորը կտեսնեն. ձայնը պիտի հաբմարեցնել շենքին և մարդկանց թվին. այնպես պիտի խոսել, վոր լսարանը լավ լսի և ձայնը դիմանա:

Բարձրաձայն գոռգոռոցը ջղայնացնում է, ժամանակից առաջ հոգնածություն և առաջացնում:

2. Կանոնավոր կերպով պիտի ոգտագործել պաուզաները. դա զեկուցողին հնարավորություն է տալիս ժամանակին շնչել, մտքերը դասավորել, իրար կապակցել: Պաուզաները կարճ և յերկար են լինում: Յեթե զեկուցման մի մասը վերջացել է, պաուզան յերկար պիտի լինի (4—5 վայրկյան), իսկ յեթե ընթացիկ դադարներ են՝ պիտի կարճ լինի:

3. Զեկուցողն անպայման պիտի ունենա իր միմիկան: Միմիկան, բառի լայն իմաստով, դա դեմքի խաղը, դիրքն ու շարժումներն են: Դեմքի խաղը հաճախ արտահայտվում է բնագրական շարժումով, արտահայտում է՝ բարկություն, պայքար, մարտահրավեր, կասկած, ուրախություն, սարսափ, վիշտ և այլն:

Դերասանը պիտի տիրապետի միմիկայի բոլոր ներքություններին, իսկ զեկուցողը պիտի իմանա և դորձադրի հետևյալ անհրաժեշտը — միմիկայի մասին.

ա) Դեմքի շարժումները պիտի համապատասխանեն թեմայի մեջ արտահայտվող ապրումներին (անտեղի չպիտի ժպտալ, հոնքերը կիտել, խոժոռել դեմքը, հիանալ. ամեն ինչ իր ժամանակին և տեղին):

բ) Չպիտի քարացած դեմք ունենալ, դա թմրեցնում է լսարանը. զեկուցողի հաջադրը չպիտի հառած լինի վորեւե կետի, շարունակ չպիտի նայել մի կետի, զեպի մի կողմը: Չի կարելի թույլ տալ նաև, վորպեսզի աչքերն անուշադիր թափառեն: Ամենից լավն

ե միջանի ընթացքում հայացքը կենտրոնաց-
նել լսարանի մի մասի վրա, ապա հանգիստ և դան-
դալ դարձնել մի այլ մասի վրա:

Միայն այն ժամանակ, յերբ լսարանի այս կամ
այն մասում աղմուկ է, պիտի ուշադրութիւն դարձ-
նել, հայացքը կենտրոնացնել նրա վրա ավելի յերկար,
խաղաղացնել և ապա անցնել մյուս մասերը լսարանի:

գ) Նիստ ուշադիր պիտի լինել, վորպեսզի դեմքիդ
միմիկան ծամածոտութիւն կամ ծիծաղելի դրութիւն
չարտահայտի:

4. Անցնելով գեկուցողի շարժումներին (ժեստիկու-
լացիա) պիտի ասենք, վոր շարժումները նույնպես
խիստ կերպով պիտի համապատասխանեն գեկուցման
մեջ արտահայտված մտքերին և զղացմունքներին:

Շարժումներն ըստ իրենց ձևի տարբեր են, ինչ-
պես տարբեր են այն մտքերն ու զղացմունքները, վոր
արտահայտում են մեր շարժումները:


Շարժումներն այստեղ կարիք չկա նկարագրելու,
ամեն մի գեկուցող գիտե հիմնականը, բայց մենք
նորից ենք շեշտում, վոր շարժումները պետք և համա-
պատասխանեն՝ ա) մտքի արտահայտութեանն ու բո-
վանդակութեանը, բ) շարժումը պիտի լինի արտա-
հայտիչ ու գեղեցիկ, գ) շարժումը պիտի զուգադիպի
մտքի ընդհանուր թափին և ութմին, դ) շարժումների
թիվը պետք է խիստ սահմանափակ լինի, վորպեսզի
չլղայնացնի թե լսողներին և թե խոսողներին:

Տեխն. խմբագիր՝

Սրբազրեց՝ Ա. Տ. Մկրտչյան

Տիրած 3000,

Պետերատի տպարան



տպ. 02.

Գլավիտ № 7684 (բ.)

<< Ազգային գրադարան



NL0144609

ԳԻՆԸ 80 Կ

Составил Ог. ПЕТРОСЯН

Как читать, готовиться и докладывать

Издательство ЦК КП(б) А

Партгиздат 1932 Эривань

